

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՊԵՐՏՈՒՐ



ՀԱՅԱՍՏԱՆ  
ԶԱՐԱՔԵՐՎԱՆ ԵՎ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼՈՒԽԱՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ  
ՄՐԿՎԱԾՎԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ

ԴԱՅԱՐՁՄԱՆ ՈՒՐԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔՐԱՅԲԻԿԱՆ ԵՎ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության և  
Պատմության ինստիտուտների  
գիտական խորհուրդների որոշմամբ



ԵՐԵՎԱՆ  
«Հայակն» իրատ.  
2009

A 94374

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GHAZARYAN ROBERT

**HAYASA  
THE POLITICAL AND CULTURAL  
HISTORY**

The book is recommended for publication by the Scientific  
Councils of the Institute of Oriental Studies and Institute of  
History of NAS RA

YEREVAN  
Lusakn  
2009

Թատուախանառության խմբագիրներ՝ պլ.դ.դ. Ա.Վ. Բույան  
պլ.դ.դ. Է.Լ. Նամիկելյան

Աշխատավորյանը սովորությունը է անտական նույանավորությանը:

Այս աշխատանքը գրեթե բրածքում տուածած օգտակար խորհրդների, դիմուուրյանների և տրամադրած գրականուրյան համար շնորհակապրյան և հայտնության համար:

Շ 158 Պազարյան Ռ.Պ.

Հայաստան, բարձրական և ճշակարային պատմությանը.-Եր.: «Աւագակ» հրատ., 2008. 164 էջ:

Աշխատությանց Հայկական բանաշխատնի Ք.ա. Ռ Խոհոյացնակի աղմական բազմապրամններից մեջ՝ Հարասացի բաժաղավորն և Մագուրացին պահանջանամ ամրոցական վիրափանցնամ գործ է: Ներկարացվում ան խնդրին վերաբերու անցուացը լուրջությունը և պահանջանական տասահնամնուց: Ծագուին է Ք.ա. XIV-XIII դր. Հայկական բնուաշխատնի արևմտյան հասկածի բարարական պատմությանը, արժանի և՛ ու ուգալապահապահություն:

Աշխատությանց հարու է օպտակայ ցինչ հայսագմաններն առնեապնամնին և նայագիտությանը և Հին Արևելյի պատմությանը հետացոյնություններին:

Նվիրված է բավախնդի պապեցին՝  
Կազմայան Թովակի և Հառերյան Հովհաննեսի հիշատակին

ԳԱՄԴ 63.3 (24)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. II հազարամյակի պետական կազմավորումները քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոխհարաբերությունների մեջ են եղել հայություն տարածքների երկրների հետ, ուստի դրանց վաղ պատմության շատ դրվագներ միահյուսվում են Հին Արևելյի պատմությանը: Այստեղ կարևորվում է սեպազիր աղբյուրներից հայտնի Հայաստ երկիրը, որի անունը Հայք-Հայաստան անվան վկայությունն է Ք.ա. II հազարամյակում<sup>1</sup>: Ժամի որ այդ պետական միավորի մասին տեղեկություններն առկա են խերական սկզբնադրյուրներում, ապա, ինչպես պարզված է պատմագիտության մեջ, երկրի անվանումը տրված է խնքերնենին համապատասխան, որտեղ աճա-ն Փոքր Ասիայի տեղանուններում օգտագործվող վերջածանց էր և կապված էր խերալուսկան լեռնաշխարհի հետ: Հայկական լեռնաշխարհի հնագույն պետականություններից մեկը՝ Հայաստայի թագավորության պատմության ուսումնասիրությունը հայոց պատմության այն հիմնահարցն է, որի հնտագուտությունը կարևոր է, թէ՝ հայագիտության և թէ՝ արևելազիտության մեջ և, բնդիանուր առնամբ, Հին Արևելյի պատմության խմբիրներն ուսումնասիրելու համար:

Հայաստայի պատմությունն ուսումնասիրվել է հայրենական և արտերկրյա պատմագիտության կողմէց: Աշխատության թհմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրություններն ակավել են դեռևս ԽՀդ. 20-30-ական թվականներից: Այս խնդրում հիմնարար նշանակություն ունի Գ. Դավիթանցյանի հասլավես «Հայ-

<sup>1</sup> Հայու (որպիս տեղանուն, ցեղանուն և անձնանուն) և Սելի (որպիս տեղունուն և ցեղանուն) անվանումները փաստվել են Եբայի (Ք.ա. III հազարամյակի կենեզոյ բավարկության առևտուրական տեքստերում) և Աշշորի (Ասպարումիլայի տարածքից գտնված հիմնարարական արձանագրություններում՝ բավարկություն Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծում) արձանագրություններում (Խաչեմ. В. Եղանջևունիս. Հայու և Սելի անունները հայության առաջնային համարժեքները. Անդամական ակադեմիա. Երևան, 1983, № 4, է. 30-33):

ասմ-հայերի բնօրրան» աշխատությունը<sup>2</sup>: «Իրա հետ մնկտեղ կուրելովում են նաև այլ հենցինակների մասնագիտական և դնդանական բնույթի ուսումնախորաբյունները, որոնցում վեր են հանված Հայաստանի լեզվին, ուսումնարարական պատմությանը, տեղագրությանը և կրոնին նվիրված հարցերը: Մակար Հայաստանի պատմությունն արժարժող դասական աշխատանքներն ունեն տասնյակ տարիների վաղնմություն: Ժամանակի հրամայականն է անցած տասնամյակների ընթացքում սեպազրագիտության և հնագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների լույսի ներքո կատարել Հայաստան-Ազգի պատմության բննական ուսումնասիրությունը:

Միևնույն ժամանակ պիտի է նշել նրկու կարևոր հանգամանք, որոնք հետո լինելով պատմագիտական խնդիրների ոլորտից՝ առկա են պատմական Հայաստանի տարածքուն սեպումներ կատարող օտար հնագետների հրապարակումներուն: Առաջինը զիտականորոնն ընդունված պատմաշխարհագրական ամունների բունազուսիկ կերպով փոփոխությունն է: Նրկություն հնագիտական հուշարձանները պատմական հասցեատիրոջից գրկնեն և Խոսքը վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, այն ընդուրկող վայրերի աշխարհագրական ամուններին և հայոց մշակութային ժառանգությանը<sup>3</sup>: «Իրամով խոկ սոյն մենագրությունում կարևորվում է խնդյու առարկա տարածքի թե՛ հնագայրերի պատմաշխարհագրական ամունների վերականգնումը և թե՛ հնագիտական հուշարձանների երթեկական պատկանելության արժարժությը, ինչը կարևոր նշանակություն ունի հին Հայոց երես-մշակութային ամբողջական պատմության առումունք:

Խերական սեպազրի սկզբնաւրյուրներից հայտնի Հայաստան-Ազգի բագավորության պատմությունը ներկայացնելիս մեր հետազոտության համար առանցքային խնդիրներ են:

## 1. Հայաստանի ամբողջական ու բննական պատմությունը.

<sup>2</sup> Կոսուան Գ., Խանչա-Կոլինելը քրոյ, Երևան, 1948.

<sup>3</sup> «Կամֆեյյան Է.», Հիմ Հայուսունի պատմության հայելակարգույթի պիտույքները պատմագրության մեջ, «ՊՐՀ», 2003, թիվ 3, էջ 30-37:

- Հայաստայի տեղանունների ամբողջական ցանկը.
- Խերական տերության հետ Հայաստայի ռազմաքաղաքական փոխարքարերությունները,
- Հայաստայի քաջավորության դերը խնդրության ժամանակաշրջանում իիԾ Հայոց պատմության մշակութային ու ռազմագործական ընդհանուր համատեքստում՝ առկա ողջ նյութի (գրավոր, հնագիտական և հարակից) վերհանմամբ:

Թեմային վերաբերող կամ առնչվող ռասմենասփրություններն սկսվել են դեռևս XX-րդ ամսան թվականներից: Շնայած անցած բարեկան ժամանակին, երբ հրատարակվեցին «Հայաստան-Ազգի», «Հայաստան-հայերի բնօրրան», «Հիմ Հայատուանի պատմության և աշխարհագրության մի քանի վլունելի խնդիրների մասին», «Հայացիներ»<sup>4</sup>, ինչպես նաև մասնավոր և ընդհանուր բնույթի տարրեր ռասմենասփրություններ, տվյալ խնդրի ռասմենասփրման համար առաջին անգամ է փորձ արվում օգտագործել նաև պատմական Հայաստան-Ազգի տարածքի հնագիտական նյութը:

Վերջին տասնամյակներում սեպագրագիտությունն ասցել է գգալի առաջընթաց, հայոնաբերվել և նոր աղբյուրներ, ճշգրտվել և վերահրատարակվել են նոր, վերանայվել են սկզբունքային մի շարք հարցեր: Բոլոր վերոհիշյալ գործուներն, ինչպես նաև նյուրին քննական մուտքեցման անհրաժեշտությունը պարուաղում են վերաշարադրել Հայաստայի պատմությունը, ինչն և նվիրված է ներկա աշխատությունը:

Հայաստայի պատմության աղբյուրագիտական հենքը կազմում են խերական սեպագիր աղբյուրները, ասորեստանյան որոշ տեքստներ, գրավոր աղբյուրներին լրացնող հնագիտական նյութեր և հուշարձաններ, օժանդակ աղբյուրներ, որոնք ներառում են ֆիզիկաաշխարհագրական, լեզվաբանական և այլ ուղղություններ:

<sup>4</sup> Foster E., Այալա-Ազզի, Հայաստան, 1931, № 9, Տ. 1-24. Կառապետ Գ., Հայնակոնյակ արքուն, Երևան, 1948. Մանանին Յ. Օ նշատորых 伦理ных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 68-155. Խաչատրյան Յ., Հայության, ՅՈՒՆ, 1972, № 8, с. 32-41.

## 1. Գրավոր աղյուսներ

Ա. Խեթական արձանագրություններ: Հայաստան վերաբերու համեմատարար մեծարանակ և արժեքավոր տեղեկությունների հիմնական աղյուսը միջինիսերական ու նորիսերական ժամանակշրջանի սեպագիր արձանագրություններն են:

Խաթրիի արքա Առնուլֆանդաս I-ի օրբ (Ք.ա. XIV դարի I կես)<sup>3</sup> կազմված խեթական տեքստերից է, այսպէս կոչված, «Պախչուլացի Միտուայի» տեքստը<sup>4</sup>: Այս վավերագրում տրվել է Հայկական թուաշխարհի քաղաքական միավորների հետ Խեթական պետուրյան կնշած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը, որտեղ Հայաստան ցի հիշատակվել, տակրայն դրանում հիշատակվում են որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղյուսներից հայտնի են՝ որպես այդ երկրի բնակավայրեր:

Գոյություն ունի խեթահայաստան առայժմ շրվագրված պայմանագիր, որտեղ խեթական արքան (հավանաբար, Թուղթալիյան III-ը (Ք.ա. 1360-1344 թ.)) դիմում է հայաստացիներին (Հայաստայի ճարդեկանց):

Մաշատ-Հրուտրից (նաեւ <sup>ՄՐՈՒ</sup>Tapigga) հայտնաբերված տեքստերում տեղեկություն կա նաև Հայաստայի վերաբերյալ, որի դեմ արշավելու նպատակով խեթերը զրահավար էին անցկացրել Վերին Երկրում: Արիսիվը թվագրվել է Թուղթալիյան III-ի և Սուպալիյուլունաս I-ի կառավարման շրջանով (Ք.ա. XIV դ. 60-20-ական թ.):<sup>5</sup>

\*

<sup>3</sup> Խեթական աղյուսների բազմազնամաս տաքիրիւթյուն տրված է՛՛ ցան Թրիք Թրայս գրքի Bryce T., *The Kingdom of the Hittites*, Oxford, 1998, p. XIII-XIV (օգտագործվել է այն ընդունված տարբեր ժամանակապերյունուն, որը հնիվում է հիմնականում բարերկնյան առողջագույնական/գորշակային բնուրյուն մի տերսափ վրա, ինչպես նաև առողջապահության, սպառական և խեթական որոշ սիմետրիզմների վրա):

<sup>4</sup> KUB XXIII 72.

<sup>5</sup> KBG XVI 45 (CTH 832. Բույան Ա., Հայկական լիոնաշխարհի տեղանուններ. Երևան, 2004, էջ 128).

<sup>6</sup> Alp S., *Hethitische Briefe aus Maşat-Höyük*, TTKY, № VI/35, 1991, S. 298-301. Բույան Ա., Նոր նյութեր խեթական տեքստերից և Հայկական լիոնաշխարհի երկրների փոխարարերությունների մասին, ՄՄԱԵ, 2001, XX, էջ 233-245.

Հայաստան հիշատակված է խերական բազավոր Սուպպիլումիումաս 1-ի (Ք.ա. 1344-1322թթ.) տարեգրության մեջ, որը խմբազրել է նրա որդիս Մորսիլիս II-ը<sup>8</sup>: Այդ տարեգրությունից տեղեկանում ենք, որ Թուղթսալիյաս III-ն իր որդու Սուպպիլումիումայի մասնակցությամբ երկու ռազմական արշավանք է կատարել Հայաստան-Ազգի դեմ: Ժամանակագրական տեսակետից Հայաստանի մասին հետազոտ տեղեկություններ ստանում ենք Սուպպիլումիումաս I-ի և Հայաստանի արքա Խուլեկանայի միջև կնքված դաշնագրից<sup>9</sup>:

Խարթի և Հայաստանի միջև հետազոտ փոխարարերությունների մասին մեզ կարևոր տեղեկություններ են հասնել Մորսիլիս II-ի (Ք.ա. 1321-1295թթ.) տարեգրություններից («Տասնամյա» և «Ընդարձակ»)<sup>10</sup>: Առաջինը ներկայացնում է արքայի կառավարմամ առաջին տասը տարիների իրադարձությունները, երկրորդն ընդգրկում է նրա կառավարմամ գրեթե ողջ շրջանը: Հայաստանի հետ փոխարարերությունները բվագրվում են նրա զանակաւորյամ յորից տասնմեկերրորդ տարիներում:

Հայկական լատինաշխարհի «օքրինների» վերաբերյալ հակասութի սկզբնաղբյոր է խերական արքա Խարթոսիլիս III-ի (Ք.ա. 1267-1237թթ.) մատնապիտական շրջանակներին լավ հայտնի «մինքնակենապլությունն», որտեղ տեղեկություններ կան խերական արքայի կողմից զանի բռնազավթման արդարացման և նախորդ արքաների գործունության վերաբերյալ<sup>11</sup>: Այստեղ հիշատակություն կա նաև Խարթի արքելյան հարևան Հայաստան մասին<sup>12</sup>:

<sup>8</sup> Götterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2-4, pp. 41-68, 75-98, 107-130.

<sup>9</sup> Friedrich J., Der Vertrag des Suppiluliuma mit Ասկան ու den Leuten von Ասատա, Staatsverträge des Արտի-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

<sup>10</sup> BoTU II, S. 48-63 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38. CTH 61).

<sup>11</sup> CTH 81 (Otten H., Die Apologie Hammurabi III: Das Bild der Überlieferung, Wiesbaden, 1981).

<sup>12</sup> KBo VI 28.

Հայուսամ վերջին անգամ հիշատակվել է Թուղթսալիյաս IV-ի (Ք.ա. 1237-1209ք.) օրոր, և նշվել է, որ այն բշնանական երկր է Խարքի համար<sup>14</sup>:

Պահպանվել է նաև խեթակայատական պայմանագրի կիբրմանը «վիրա» աստվածների ցուցակ, որտեղ տրվել է նաև Հայուսայի քաղաքների և նրանցում պաշտովող աստվածների անվանացուցակը<sup>15</sup>:

Հայկական լնոնաշխարհի՝ Ք.ա. II հազարամյակի պիտական կազմավորումների պատմության վերաբերյալ խեթական սեպագիր աղյուսներն արտակարգ կարելոր են այն առումով, որ շատ դիսցիբրում դրանք միակ գրավոր վկայություններն են: 1920-ական թվականներից հրատարակվող այդ աղյուսների շնորհիվ՝ ուսումնամիջներ են նաև Հայասա-Ազգի պատմության, երմիկական, սոցիալական իրավիճակի և հոգեոր մշակույթի բազմարիկ խնդիրներ: Սակայն Խարքուսասի (այժմ Թողարյոյ) պալատական պահոցի ընձեռած հնարավորությունները սահմանափակ են: Արդի ժամանակաշրջանում Փոքր Ասիայի տարրեր շրջաններում կատարված պնդումների ընթացքում հայտնաբերվել են տեղական սեպագրական արխիվներ, որոնց հրատարակությունը վերջներս է սկսվել: Մրանք գերազանցապես նամակներ են առարգված խեթական արքունիքից: Զգայի բիլ են կազմում վարչական և ծիսապաշտամունքային տեքստերը: Այսուղեւ կամ նաև հայազնության համար զգայի հետաքրքրություն ներկայացնող նյութեր:

Վերջին տասնամյակներում հրատարակված խեթական սեպագիր տեքստերում վկայված են նաև մի քանի նոր տեղանուններ, որոնք, նավանարար, գտնվել են Հայրառայտմ կամ նրան հարող խեթական տարածքում<sup>16</sup>: Դրանք են Խյանինա

<sup>14</sup> KUB XXVI 12.11.12-15.

<sup>15</sup> KUB XXVI 39 (Forrer E., Խայս-Աչք, Տ. 6).

<sup>16</sup> Քույս Ա. Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՄՄՀԵ, 2003, ՀՀ, էջ 252-259: Նույնին, Հայրառայտմ վետաշխարհի տեղանունները (Հայ խեթական սեպագիր աղյուսների), Երևան, 2004, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101:

(<sup>URU</sup>īyaninna), Խարսալասս (<sup>URU</sup>Haršalaša/i), Խուսրո (<sup>URU</sup>Хусрү), Լալատտա (<sup>URU</sup>Lalatta), Լիտտա (<sup>URU</sup>Litta), Պարտանտա (<sup>URU</sup>Pártanta), Տախ(ա)նիարա (<sup>URU</sup>Tahhānišara), Տավատենա (<sup>URU</sup>Tawatena), Ուկսու (<sup>URU</sup>Ukšu), Ուտկուսիսա (<sup>URU</sup>Utkuniša) քաղաքները, որոնք գտնվել են Հայաստանի Ռոբա քաղաքի շրջակայրում կամ կամ դրան հարող տարածքում, և Սալիխի լեռնամունք (<sup>URU</sup>SAG<sup>8</sup> Salīt): Կամ նաև մի շաբթ դժվարլենքոնելի քաղաքանուններ, որոնց հայաստանա պատկանելորյունը համամական է: Դրանք են <sup>URU</sup>Խ-ս-ս[...], [<sup>URU</sup>...]-mi-it-ta, [<sup>URU</sup>...-ք]a-ku-ul-la, [<sup>URU</sup>...-t/š]a-ta, [<sup>URU</sup>]x-x-ri-ս, [<sup>URU</sup>...-լյթ-ta<sup>17</sup>:

Հայաստանունը նշյալ աղբյուրներում տրվել է Հայաստան Ազգի ձևով, և նրկու դիպրում էլ խերերը հասկացել են միևնույն երկիրը:

**Բ. Ասորեստանյան արձամագղություններ:** Հայաստան Ազգի սպատմության մասին տեղեկություններ են ապարանակոմ նաև Ք.ա. XIII-XIIդդ. ասորեստանյան տեսպազիք արձամագղությունները:

Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XIIIդդ. կեսերից հայտնվել էր Խարքիի և Ասորեստանի ուսգմարադարական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան գրավոր աղբյուրներում որոշակի տեղեկություններ են հայտնվում Հայկական լեռնաշխարհի երկրների մասին: Այդ տեղեկությունները գալիս են Ասորեստանի արքաների՝ դեպի հյուսիս կատարած արշավանդների նկարագրություններից:

Թուկուլիքի-Նինուրտա I-ի (Ք.ա. 1233-1197թթ.)<sup>18</sup> տերսութերում հանդիպում է Հայկական լեռնաշխարհի՝ «Նախի երկիր» հավաքական անվանումը: Եթե խերերը Հայկական լեռնաշխարհի

<sup>17</sup> KBo IV 4 II 78 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 122-123).

<sup>18</sup> Գլուխան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղականները, էջ 105-107:

<sup>19</sup> Ասորեստանական արքաների ժամանակագրությունը տրված է ըստ Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Nimrud-april-ekim und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, №71, S. 19-38.

հյուսիս-արևմտյան կողմերմ անվանում էին Հայտուս կամ Ազգի, ապա ասորեստանցիները լեռնաշխարիի արևմտյան հատվածը հիշատակել են Նախրի Երկրոնք (Տափոսի լեռներից հյուսիս ընկած հատվածը՝ մինչև Սև ծով) անոնով: Այսպես, Աշոտը քաղաքում, Թուկուբի-Նինուրտայի պալատում և տաճարում հայտնաբերված արձանագրություններում պատճենվում է Ասորեստանի արքայի դեսպան Հայկական լեռնաշխարի արշավանքի ժամանակ նրա դեմ դրսուն նկած Նախրիան 43 բազավորմերի մասին<sup>20</sup>:

Հայկական լեռնաշխարիի Բ.ա. XIIդ. վերջին տասնամյակների քաղաքական վիճակի մասին տեղեկություններ հանդիսան են միայն Ասորեստանի արքա Թիգլարպալասար I-ի (Բ.ա. 1114-1076թ.) սնապազիր արձանագրություններում: Դրանց վերաբերում են նշված տարածաշրջանում այդ տիրակալի Բ.ա. 1112թ. նվաճումներին, որոնց կապակցությամբ նոյնպես հիշատակվել են Նախրիան Երկրոնքը Թիգլարպալասար I-ը հիշատակել է Նախրիի 23 Երկրոնքը բազավորմերին: Պարուրյան մատունելով նախրյան ուժերը նա ավար էր վերցրել 120 նարտակաօք և այնուհետև հետապնդել Նախրիի 60 բազավորմերին ու նրանց օգուրյան նկածներին մինչև «Աւրին ծովը»<sup>21</sup>:

Թիգլարպալասար I-ի տարեզօրություններում տեղեկություններ կան նաև այն մասին, որ ուրումնացիների (ուրուացիների) և կասկերի (արեջացիների) ուժերը շարժվել են դեսպանական Ասորեստանի հետ: Այս շարժը, հավանաբար, տեղի է ունեցել Հայասայի տարածքից<sup>22</sup>:

<sup>20</sup>ԱՎԻԿ, 5, 6, 7, 8, 1951, № 2, 3, 4. ARI, I, էջ 691-694, 701, 707, 713, 773, 783էւ. Արյունի Ա., Եղանակ (Մարտ), Երևան, 1970, է. 21ը.

<sup>21</sup> ԱՎԻԿ, 10 (IV, 43).

<sup>22</sup> ԱՎԻԿ, 12,13. AKA, № 1, Col. II, 100-102, Col. III, 1-2, թ. 47-48. ARI, II, № 18. AKA, թ. 112, 117. ARI, II, № 67, 93. Երեմյան Ա., Հայերի գլուխյան միությունը Արծ-Շուացիս երկուուն, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 59; Թույան Ա., Երեմիկան տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական թանաշխարհում. Բ.ա. XII դարուն, ՊԲՀ, 1991, թիվ 1, էջ 74-77; Նույնի, Ուրիշական և առևմտյան տուշիների խնդիրը, ՊԲՀ, 1996, թիվ 1-2, էջ 214-218. Ավետիսյան Հ., Հնագույն Երմիկան տեղաշարժերը և Հայկական լեռնաշխարի Բ.ա. III-4 հազարամյակներուն, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 243-245:

## 2. Հնագիտական աղբյուրներ

Պատմաբանները Հայասայի տարածքը հիմնականում տեղորշում են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում: Ռ տարրերություն Հայկական լեռնաշխարհի առավել լավ ուսումնամիջնագույն տարածքների (Վանա լիճ ավազանը, Խարբերդի շրջանը, Հայաստանի Հանրապետության տարածքը, Ուրմիա լիճ ավազանը, Աղստմական Գուգարքի տարածքը)՝ լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հնագիտական ուսումնամիջնության վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց:

Թեև Հայասայի պատմական տարածքում հնագիտական հետախուզական աշխատամբներ կատարվել են դեռևս XXI. 40-ական թթ., տակային կանոնավոր պեղումներ այսուն իրականացվում են՝ սկսած 1980-ական թթ.-ից: Խնդրո առարկա տարածաշրջանում պեղումներն ի հայտ բերեցին Զ.ա. Ռ հազարամյակի՝ մասնավորապես ուշբրոնզելարյան մշակույրի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում:

Ներկայիս Երգուսի (Կարին) նարզի տարածքում են գտնվում նաև Սոս, Գյուղօղովա, Բյուր, Կարազ հնավայրերը:

Sos Հոյն (Սոս) հնավայր-քարքը գտնվում է պատմական Վերին Բասեն գավառում: Հնավայրում պեղումներ սկսվել են դեռևս 1987թ. Երգուսի համալսարանի և Երգուսի քանզարանի աշխատակիցների խմբի կողմանց: Հետազոտման ավատրակացի հնագիտ Ա. Սագոնան մի քանի հաճակելինակների հետ, սկսած 1995թ.-ից, իրատարակել է այդ հնավայրում իրենց կատարած աշխատանքների ամփոփումը<sup>21</sup>:

Երգուսի 16կմ դեպի հյուսիս-արևմուտք է տեղորոշվում.

<sup>21</sup> Sagona A., Sagona C., Ozkonecuklu H., Excavations at Sos Höyük 1994, AnSt, 1995, № 45, p. 193-218. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, I, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howells S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 181-203. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, KST, 1998, № XX, I, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, ANES, 2000, № XXXVII, p. 56-77.

Karaç (Çavuşaç) hıdnadırılıklaşmış վայրը: Այստեղ հնագույնություններ կատարվել են դեռևս 20-րդ դ. 40-50-ական քր.<sup>24</sup>:

Հայունի հնավայրերից է նաև Pulus-ը (Բլուր): Այն գտնվում է Երզումից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում ուսումնախրաբյուններ են կատարվել՝ սկսած անցած դարի 40-ական քր.-ից: Բլուրի հնավայրում հնագույնություններ են կատարել և դրանց ամփոփումը տվել բուրք հնագետները<sup>25</sup>:

Güzelova (Գյուղելովա) հուշարձանը գտնվում է Երզումից 15կմ դեպի հյուսիս-արևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961թ.-ին Հ. Քոչարյանի և Հ. Վարդի գյուղավորությամբ<sup>26</sup>:

Հայկական լեռնաշխատիկ մյուս շրջանը, որտեղից պեղված ք.ս. II հազարամյակի հնագիտական մյուրերը կարևոր են Հայաստան-Ազգի պատմության ուսումնասիրության համար, ընդգրկում է Գայլ (Լյուկու) և Շողունի գետերի հովիտները: Այստեղ է Բյունկերե հոյն հնալայրը՝ Բարերդից 30կմ դեպի հարավ-արևմուտք<sup>27</sup>:

1980-ական քր. վերցում Գյումուշխամենի մարզի Բարերդի և Կեկվանի շրջաններում ուսումնասիրելի աճ 60-ից ավելի հնավայրեր, այդ թվում նաև՝ 1940թ.-ի հնագույնության արշավանքի ժամանակ հնագիտ ք. Քյորքենի կողմից Բարերդի շրջանում հիշատակված 5 հնավայրերը<sup>28</sup>:

<sup>24</sup> Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koçay H., Tırçan K., Erzurum-Karaç kazısı Raporu, TTKB, 1959, № XXIII, s. 349-413.

<sup>25</sup> Kökten K., Ortak, doğu ve kuzey Anadoluda yapılan tarih öncesi araştırmaları, TTKB, 1944, № VIII/32, s. 659-680. Նոյնիւ: Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Dergisi, 1944, № III/5, s. 464-505. Koçay H., Pulus ve Güzelova (Erzurum Araştırmaları), TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, AST, 1988, № 5/2, s. 45-76. Նոյնիւ, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 153-158.

<sup>26</sup> Koçay H., Vary H., Güzelova Kazısı, Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

<sup>27</sup> Sagona A., Pemberton E., McPhee I., Excavations at Büyükköprü Höyük, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Sagona A., Pemberton E., McPhee I., Sagona C., Büyükköprü Höyük 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p. 161-164.

<sup>28</sup> Kökten K., Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505. Sagona A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: The Pre-classical period, AST, 1989, № 7, p. 425-433.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՄՈՒՆՆԵՐԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՍԱՍԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՁԸ

Հայկական լեռնաշխարհի հմագույն պիտական կազմավորումների պատմության վերաբերյալ կարևոր են խերական սեպագիր առցումունքը, որոնց 1920-ական թվականներից երապարակման շնորհիվ՝ ուսումնասիրվել է Թ.ա. II հազարամյակում գոյություն ունեցած բաղդարական միավորների պատմությունը, ինչպես նաև երեխական, սոցիալական իրավիճակի և հոգեւոր ճշակույցի բազմաբիլ խմբիրներ:

Խերական սկզբնադրյալրների հաղորդած տեղեկություններից երևոմ է, որ դեռևս Թ.ա. XIV դարում, գուցն և ավագի վաղ շիջանում, Հայկական լեռնաշխարհում կազմավորվել էր մի պետական միավոր՝ բազավորություն, որը խերերն անվանում էին Հայաստ (խեր. KUR Առաջանա - «Հայաստ բաղդարի երկիր») կամ Ազգի (խեր. KUR Առաջանա - «Ազգի բաղդարի երկիր»): Խերամայասական ուազմարադարակամ փոխհարաբերություններին վերաբերող մեպագիր տեսաւորի տվյալների հիման վրա հետազոտությունը քննի եմ Հայաստ-Ազգիի ընդգրկած տարածքի և Հայկական լեռնաշխարհում նրա պատմաշխարհագրական դիրքով պայմանավորված նշանակության հետ կապված խնդիրները:

Հայաստ-Ազգիի տնտեսության նարզը կարևոր է Հայոց պատմության հմագույն շրջանի ուսումնասիրման առումով, քանզի շատ պատմաբանների կողմից այն ըմբռնվել է որպես Հայք-Հայաստան երկրի գոյության փաստ Թ.ա. II հազարամյակում: Սույն նույնացումը (Հայաստան-Հայք) հանդիսանել է նաև ա-

ռարեկությունների<sup>29</sup>, երբեմն մերժվել է Հայաստան-Ազգի երկրի առնչությունը Հայաստանի հետ<sup>30</sup>.

Հայաստանի վերաբերող պատմագիտությամբ բնագավառը վերելք ապրեց խերազիտուրյան գարզացմանը զուգահետ։ Ներևս ՀՀԴ սկզբին Գ. Վինդերի, Զ. Գարստանզի, Թ. Հրովարտ և այլ արևելագետների կողմից հիմք դրված խերազիտուրյունն իր առաջին հրատարակություններում տեղեկություններ է պարունակում նաև Հայաստան-Ազգի մասին։ Եթե Բ. Հրովարտին բավարարյան է միայն բառցիկ ծանոթագրություններով Հայաստան-Ազգի երկրի և նրան սահմանակից ցեղերի մասին<sup>31</sup>, ապա է Ֆոներն անցուայցարձել է Հայկական լեռնաշխարհում Ձ.ա. 15-13-րդ դարերում կազմակորված բաղաբական միավորների պատմությանը։ 1927թ. նա գրել է գիտական մեծ արժեք ներկայացնող «Հայաստան-Ազգի» աշխատությունը, որը լույս է տեսնել չորս տարի անց՝ 1931թ.<sup>32</sup>։

Հայաստանի պատմության ուսումնասիրության գործում զգայի ներդրում է ականոնիոր արևելացեան Յ. Ֆրիդրիխի կողմից հրատարակված Խարքի արքա Մուսավիրայիտունա Է-ի և Հայաստանի բազավոր Խուկկամայի միջև կնքված դաշնագիրը<sup>33</sup>։ Նա դեռևս 1925թ. իր աշխատություններից մեկում Հայաստան-կրի տեղադրությունը կատարել էր Թեզգարանա երկրից (ներկայիս Մալարիայից հյուսիս-արևմուտք) հյուսիս-արևելք բնկած տարածքի, այսինքն՝ Շաբաթ Հայրի հետ։ Փաստորեն, նա Հայաստան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում։ Հետազոտման Յ. Ֆրիդրիխն առաջարկեց Հայաստան տեղադրել Կասիրա (Արևելաստանական լեռների շրջանը) և Ալզի (Վերին Տիգրիսի ա-

<sup>29</sup> Դյախոնով Ի., Предистория армянского народа, Ереван, 1968, с. 209-214.

<sup>30</sup> Oral A., Hitler Devrinde Anatolia, s. 158.

<sup>31</sup> Hezayn F., Die ersten Zehn Regierungsjahre des Königs Marduk II. Hethitische Keilschrifttexte aus Boghazkör, 1919, S. 156-223.

<sup>32</sup> Förster E., Bağdat-Azizi, S. 1-24.

<sup>33</sup> Friedrich J., Der Vertrag des Suppiluliumas mit Hukkanaš und den Leuten von Hayasa. Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

կումըների մոտ) երկրների միջև, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում<sup>24</sup>:

Հայաստի պատմության բավազույն սկզբնադրյութներն են նաև արևելացեա Ա. Գյորցեի գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատուրյունները<sup>25</sup>. Նա 1927թ. իր Խորվածներից մեկուն Հայաստ-Ազգին տեղյորչել է Տրավիզոնից արևելք՝ Պոնտոսի մերձափմյա շրջանում<sup>26</sup>: Այսուհետև, վերանայելով իր այդ տեսակետը, նա Հայաստ-Ազգին տեղյացել է Արևմտյան Եփրաստի և Տորոսի ավագաններում մինչև Սև ծովի ափերը<sup>27</sup>:

Հայաստն Սև ծովի ափերին տեղյորշողող հետազոտութները կարծում են, որ այն գտնվում էր դրա հարավ-արևելյան ափերին, և նրանց հիմնական կովանը Ազգի Արհամա քաղաքի տեղադրյությունն է, որն ըստ Մորավիիս Ա-ի տարեգրությամ՝ «գտնվում էր ծովի մեջ» (յեթ. <sup>28</sup>Ա-ր-ի-ք-ա-ս Տ[Ա. Ա.Ա]Բ.ԲԱ<sup>29</sup>):

1931թ. է. Ֆոները կարծիր է հայումեր, որ Հայաստ-Ազգին պետք է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում տեղադրվել, ինչն ընդունվել է արևելացեաների մեծ մասի կողմից<sup>30</sup>: Պ. Կրիչմերը, Զշելով, որ Հայաստ անոնք նշանակում է Հայաստան (նրանից առաջ այդ կարծիքն է արտահայտել Կ. Ուրը<sup>31</sup>), փաստորեն, հաճածայնել է Հայաստն Բարձր Հայում տեղադրելու է. Ֆոների առաջարկած տեսակետի հետ<sup>32</sup>:

<sup>24</sup> Friedrich J., Aus dem hethitischen Schriftum, Leipzig, 1925. H. I. S. 9, H. II, S. 21. Նոյզի, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, S. 103-104.

<sup>25</sup> Götez A., Zur Geographie des Hethiterrichtes, Kleinasiatische Forschungen, 1930. B. 1, H. 1, S. 108-114. Նոյզի, Die Annalen des Muršiliš, 1933. Նոյզի, Kizzuwatna und the Problem of Hittite Geography, New Haven, 1940. Նոյզի, Kleinasiien, München, 1957.

<sup>26</sup> Goetze A., Zur Geographie des Hethiterrichtes, Kleinasiatische Forschungen, 1930. B. 1, H. 1, S. 108-114.

<sup>27</sup> Goetze A., Kleinasiien, München, 1957 (ուստի այդ գործ վերցված քանութեած քարտեց):

<sup>28</sup> KBo IV. 4 IV. 5(Götez A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933. № 38. S. 132-133)

<sup>29</sup> Förster E., Haçaso-Azzi, Caucasicca, 1931, № 9, S. 3-2.

<sup>30</sup> Roth K., Die Bedeutung des Armenischen, ZLi, 1927, թիվ 11-12, էջ 742:

<sup>31</sup> «Հայք ամոնց ըստ Շահլշատի», ZLi, 1933, թիվ 7-8, էջ 429:

Ե. Ֆոներից և Ա. Գյորգեթից հետո Հայաստանի պատմության համար շատ կարևոր աղբյուրների հրատարակությամբ համեստ նկազ ֆրանսիացի արևելագետ Ե. Կովենյակը՝ Վերահրատարակելով Սուպալիլույթումասի տարեգրություններն ու դաշնագրերը՝ Ե. Կովենյակը փոքրեւ է ճշտել նաև Հայաստանի տեղադրությունը այն համարելով առաջին բազավորությունը Հայաստանում և Արևելքի հզոր միավանություններից մեկը Ք. ա. XIV դարում: Ե. Կովենյակը Հայաստանի մասին տեղադրել է Վերին Եփրատի ավազանում<sup>42</sup>.

*A 94374*

Եր ուսումնասիրություններում, որոնք հիմնականում վերաբերել են Խերական պետության պատմական աշխարհագրությանը, Ֆ. Կոռնելիոսի անցրադարձել է նաև Հայաստանի պատմությամբ: Նա համարիտ է այն ուսումնասիրությունների հետ, որոնք Հայաստան տեղադրությունը են Աև Ծովի ափերին: Ֆ. Կոռնելիոսը նոյնպես Հայաստան տեղադրել է Աև Ծովի հարավ-արևելյան ափերին (Երևայիս Սահման բաղարի լրջակայրում): Իսկ Հայաստանի զիխավոր բաղարի (մայրաքաղաքը), ըստ նրա, տեղադրված է եղի Գայլ (Ամելիս) գետի ներքին ափազանում Խօօցտեր (Հորոդ-թեփիկ) հնավայրի տեղում<sup>43</sup>: Սակայն Կոռնելիոսի տեսակերպ մերժվել է ուսումնասիրությունների կողմից:


Նման տեղադրության պայմանում բացառվում է Հայաստանի աշխարհագրական մերձավորությունը Խոսվածի հետ, որը փաստվել է Խերական արքանազբարյությունում, եթե խերական արքան (Սուպալիլույթումա 1-ը) Խոսվածից (Խոսապայի Սովոր) բարժվել է դեպի Սովհապա երկիրը (ասորենու առց. Տիհու)՝ Խոսվածի հարեանությամբ, այլուհետև մոտել Հայաստան<sup>44</sup>:

<sup>42</sup> Cauvinac E., L'extension de la zone des Gagars à l'Ouest, RHA, 1931, № 4, p. 101-110. Նոյնին, Le premier royaume d'Arménie, RHA, 1934, № 17, p. 11-14.

Նոյնին, Le piace du Palé et du Tumusina, RHA, 1936, № 22, p. 174-177.

<sup>43</sup> Cornelius F., Zur hethitischen Geographie: die Nachkam des Hethiterreiches, RHA, 1958, № 62, S. 3. Նոյնին, Neue Arbeiten zur Hethitischen Geographie, Anatolica, 1967, № 1, S. 68.

<sup>44</sup> KUB XXXIV 23 (Götterbok: H., The Deeds of Supiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 3, p. 83).



Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ Հայաստանական գոտիում էր Խերական տեղության հյուսիս-արևելյան մասում։ Ըստ նրա՝ Խարբին տարածքային առումով առավել մոտ է գտնվել Ազգին, այդ պատճառով խերերը հաճախ Հայաստանական գոտիային օգտագործել են այդ տեղամումը։ Այսպիսով, Գ. Մելիքիշվիլին Հայաստան տեղորոշել է Արևմտյան Եփրատի վերին ավազանում, որին սահմանակից են եղել Կասկա, Խուսիա և Վերին երկրները<sup>45</sup>։

Հայաստանի պատմությանն է անցրադարձել նաև Ի. Դյակոնովը՝ հիմնականում հայոց լեզվի, հայոց վաղնջական պատմության և հայ ազգի ցեղասերման հարցերի շրջանակներում<sup>46</sup>։ Ի. Դյակոնովը սկզբնապես Հայաստանական տեղորոշել է Վարդին Եփրատի ավազանում<sup>47</sup>, սակայն իր հետագա աշխատություններից մեկում, համաձայն ցիններով այն կարծիքին, թե Հայաստան պետք է փնտրել նորկային Երզնկայի և Երզումի շրջակայթում, առաջարկեց տեղադրել այն Սև ծովի հարավ-արևելյան ափերին։ Ազգին, ըստ նրա, գտնվում էր Պանտոսում՝ Խարշխտ գետի ավազանում, և տարածվում էր մինչև Փառնակիա։ իսկ Հայաստան՝ նորիս գետի ավազանում՝ որպիս կենտրոն ունենալով Շարերդ քաղաքի շրջակայրջ, որտեղից Հայաստանի իշխանությունը տարածվել է դեպի հարավ։ Ազգին Սրիպտ քաղաքը Ի. Դյակոնովը տեղորոշել է Սև ծովի ափերին՝ Փառնակիայի մոտ, իսկ Ազգին մյուս հայտնի կենտրոնը՝ Նուզամաման, նաև տեղադրել է Լյուկոս (Գայլ) գետի ավազանում կամ Լյուկոս ու Խարշխտ գետերի ավազաների միջև ընկած լեռնանցքներում, Պախտսուլամ՝ ներկայիս Կեմախից (Կամախ) արևմուտք՝ Ջիմարայի մոտ։ Խմզաւական, ըստ նրա, Հայաստանական սահմանային քերերից մեկն էր, սակայն ի տարրերություն մի շարք հեղմնակների՝ նա այն հիմն հայկական Ամենդ վայրում չի տեղորոշել։ Ըստ Ի. Դյակոնո-

<sup>45</sup> Մելիքիշվիլ Ի., Խարք-Սրբութ, Եկման, 1954, է. 81-82.

<sup>46</sup> Դայқոն Ի., Предыстория армянского народа, Ереван, 1968, է. 81-101.

<sup>47</sup> Դայկոն Ի., Հետեւ, գրացման և արմենական պատմությունների հայության վերականգնությունը, ՊԱԾԲ, 1961, է. 333-368 (ուսումնական գործառքային բարեկարգություն)։

վի՝ Կունմախսան գտնվել է ներկայիս Կենմախսի տեղում և Հայաստացի կազմում է ընդգրկվել միայն Ժամանակափրապահն՝ որի առավել ըմբարձակմամ տարիներին<sup>48</sup>:

Հայաստայի տարածվելը Արևելապոնտական լեռներից հյուսիս Սև ծովի ափեր, թիզ հավանական է: Այսպիսի տեսակետի հիմքում ընկած է միայն Արիակայի՝ որևէ ջրային տարածքի ափին գտնվելու փաստը, սակայն այդ ջրային տարածքը կարող էր հանդիսանալ նաև Վանա լիճը (ծովը): Արևելապոնտական լեռները համուսացել են կասկակամ ցեղերով բնակեցված տարածք, ինչն ինքնին բացառում է Հայաստայի գտնվելը այդ տարածքում:

Զ. Մելլաարտը Հայաստան տեղադրել է Եփրատի մեծ ողորանից մինչև Երզրում ընկած տարածքում՝ հավանական համարելով նաև, որ այն տարածվել է Արարայի հովտում՝ մինչև Արարատյամ դաշտը, որտեղ գտնվող Մեծամոր հնավայրը նա համարել է Հայաստայի մաս<sup>49</sup>, ինչը հետոքը է Հայաստայի արևելյան սահմանների աշխարհագրական ընդգրկումը բննակելիս:

Ֆ. Հաազը համաձայն էր այն տեսակետի հետ, որ Հայաստան առավելապես պետք է գտնվեր Երզնկայի, Տրապիզոնի և Երզրումի միջև ընկած տարածքում<sup>50</sup>:

Նման տեղադրություն է առաջարկել նաև Զ. Ցարարը՝ նշելով, որ Հայաստան գտնվել է խերական Վերին Երկրից (ներկայիս Թոքարի և Սերաստիայի մարզերի տարածքը) արևելք՝ ընդգրկելով Երզնկայի, Երզրումի շրջանները, ինչպես նաև Վերին Գայլ և Շորոխ գետերի ավազանները: Վերին Գայլի ավազանը նա համարում էր այն վայրը, որտեղ արևելյան կասկակամ ցեղերը սահմանակցել են Հայաստանին: Զ. Ցարարը, Հայաստայի տեղադրությունը ներադրելով այդ տարածքնե-

<sup>48</sup> Дьяконов И., Предыстория армянского народа, с. 81-84.

<sup>49</sup> Meissner J., Anatolian Trade with Europe and Anatolian Geography and Culture Provinces in the Late Bronze Age, AnSt, 1968, № XVIII, p. 201-202.

<sup>50</sup> Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des ammenischen Hochlands. Xenia, Das Reich Urartu, B.I, 1986, S. 22.

բուժ, հյուսիսում այն հասցրել է մինչև ՍԼ ծովի ափերը՝ Տրապիզոնի մոտ<sup>51</sup>:

Ի տարրերություն հայ պատմագիտության մեջ հայտնված տեսակետների՝ արևմտյան շատ զիտնականներ Հայաստայի պատմության անդրադարձել են՝ որպես արևելագիտության մի մասի՝ այն շղթաներվ հայոց պատմության տեսանկյունից: Այնինչ Հայաստայի պատմության հարցերը կարևոր նշանակություն ունեն հաւոլապես հայագիտության համար:

Հայ պատմագիտության մեջ առաջինը Հայաստայի պատմության հարցերով գրադիվն է հայտնի խերազնտ, Ռ. Հրազնու աշակերտ Ն. Մարտիրոսյանը: Դեռևս 1924թ. նա իր հոդվածներից մեկում համեստ նկավ այն տեսակետով, որի համաձայն՝ խերազան աղբյուրներում հիշատակվող Հայաստան (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Խայաստան) հայերի հնագոյն հայրենիքն էր<sup>52</sup>: Ավելի ուշ Ն. Մարտիրոսյանը գրագարեց իր այս տեսակետը՝ համեստ զալով նոր հրապարակումներով<sup>53</sup>: Նրա կարծիքով Հայաստան ասելով՝ պետք է հասկանալ Հայաստան, և այն գտնվել է ներկայիս Դերսինի և Խարբերդի շրջաններում և հանդիսացել է հայերի նախնիների՝ հայաների հայրենիքը՝ հայերի բնօրրանը: Բայց հայաստանական ցեղերի միավորումով այնուհետև ստեղծվել է մի պետություն, որն սնողզրկել է Փոքր Հայքը և Բարձր Հայքի հարավ-արևմտյան ճասաց: Ն. Մարտիրոսյանը հավանական է համարնել, որ Հայաստայի Արխասա

<sup>51</sup> Yakar J., Hittite Involvement in Western Anatolia, *AnSt*, 1976, № 26, p. 117-128 (անգլ. հոդվածում զիտական բաղնակը՝ էջ 118): Նույնի, Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an archaeological Assessment.-In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp, Ankara, 1992, p. 508-512. Նույնի, Ethnoarchaeology of Anatolia, Tel Aviv, 2000, p. 28 (անգլ. աշխատավորման զիտական № 4 բարեկարգը).

<sup>52</sup> Մարտիրոսյան Ն., Հայերնի յարաբերությունը Խերիստրելիք հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453:

<sup>53</sup> Մարտիրոսյան Ն., «Թիգբամեջ» դրայագիտությունը, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 75-83: Նույնի, Պրականձներ փորբաժական անոններու նասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 82-107: Նույնի, Նարաւան մը հետ և հայ բառարվեստյան, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 163-186:

բաղարք գտնվել է Ծովք լճի ափին կամ Վանա լճի արևմտյան ափերին: Կումմախան, ըստ նրա, գտնվել է Անրկայիս Կեծախի տեղում և հանդիսացել է Հայասայի սահմանամերձ և զիսավոր քաղաքներից մեկը: Ն. Մարտիրոսյանը նշում է, որ Հայասայի դաշնակցային պետության մեջ են մտել Խսովա (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ հետագայի Փոքր Ծովքի տարածքում), Պալա (Ծովքի Թալահովիտ գավառը), Խշմերիկա (սահմանակից է եղել Խսովա-Ծովքին և Ազգին և համապատասխանել է Անրկայիս Դերսին), Գաշգաշ (Կասկա) (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս ժողովուրդն ապրել է Հայիսի ակունքներից մինչև Վերին Եփրատ ընկած տարածքում, և նրա անվանումը մնացել է Շոյրիսի ակունքների մոտ գտնվող ներկայիս Կիսկին ավանի ամփան մեջ) և Ազգի նրկմները: Խերական աղյուսներում հիշատակված Մալագղյան (Խերկայիս Մալարիայի մոտ) մերբընդները գտնվել են Խերերի, ասոյնատանցիների և հայասացիների ծեսուում<sup>54</sup>:

Խորբերի դաշտն այդ ժամանակաշրջանում մասն է կազմել Հայկական լեռնաշխարհի մեջ այլ պետական կազմավորման Խսովայի, որը շի մոտել Հայասայի կազմի մեջ՝ չնայած յի կարելի բացառել խուվահայասկան դաշնակցային հարաբերությունների գոյարյունը որոշակի ժամանակահատվածում: Խսովան և Հայասա-Ազգին խերերի կողմից տարբերակվել են՝ որպես տարբեր երկրներ: Առավել ևս դժվար է պատկերացնել Հայասայի ամրացված քաղաք Արփասայի տեղորոշումը Խսովայի (Ծովքի) տարածքում, կամ Կասկա երկրի և Մալագղյայի (Մարիյա) գտնվելը Հայասայի կազմում:

Ա. Խաչատրյանն իր ուսումնասիրության մեջ շեշտել է, որ Խերերը Հայաստանի համար ունեն մի ընդհանուր անուն՝ Հայասա, որի աշխարհագրական դիրքը նա որոշել է Կարինից Վան ընկած տարածքում: Արփասա քաղաքը նա տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին: Հայասա և Հայաստան քառերի նմանութ-

<sup>54</sup> Մարտիրոսյան Ն., Պեղուսումներ փոքրասիական անունները հայուն, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, լո 93-105:

յունց հիմք ընդունելով՝ Ա. Խաչատրյանը նույնպես շեշտել է, որ այն Հայաստան անվան հնագույն ծեսն է<sup>55</sup>:

«Հայաստանի պատմություն» գիտական մեծարժեք մենագրության մեջ Ն. Աղբանց անդադարձն է նուև Հայաստանի պատմությանը խերական փափրազրնիր վերլուծության հիմքի վրա<sup>56</sup>. Նա նշել է, որ խերական բազավոր Թուղթսալիյաս III-ը Հայաստանի դեմ կատարած իր երկրորդ արշավամբը ժամանակ (նրա հետ եր նաև իր որդին՝ Սուսպիլուշտմասը) ընդհարվել է նրա բազավոր Կարամնիի հետ Կոտմախա բաղարի մոտ: Կարամնի բազավորի ամունից Ն. Աղբանցը բխեցրել է հայկական Կարիմ բաղարի անվանումը, իսկ Կոտմախայից՝ Դարանալյաց գավառի Կամախ անունը: Որևէ հիմնան վրա էլ նա Հայաստան տեղորոշել է Վերին Եփրատի հովտում: Ըստ Ն. Աղբանցի՝ Կամախի հովտինում Հայաստան սահմանակցել է Կասկա երկրին, որը տարածվել է Արևելապոնտական լնոնիքի շրջանում մինչև Հայիսի գետաքերանը: Նա նաև նշել է, որ Հայաստան և Ազգի անունները հոմանիշ են և զործածվել են Մորպիլիսի տարեգրության մեջ նույն տարածքի իմաստով: Ըստ որում, Ն. Աղբանցը տարանցաւով է Հայաստան-Ազգի, Աշխի և Իսուվա երկրները՝ գտնելով, որ դրանք առանձին են ներեց: Նա Ազգի նրկիլոր տեղակայել է՝ Դեբահիմի շրջանում՝ Կոտմախաս-Կամախս բաղարի հարավամբ: Ազգիի նրեք քաղաքները՝ Ինձարավան, Արիալուն, Դոգգաման, նաև տեղադրի է Կոտմախսա տամող ճանապարհների վրա: Իսուվայի բազավորությունը, ըստ նրա, գտնվել է Հայաստանի հարավում՝ տաղըն Արածանիի հովտում, և գրադեցրել է Եփրատի և Խորաբրու միջև ընկած երկրամասը: Աշխի (կամ Ազգի) երկիրն, ըստ Ն. Աղբանցի, գտնվել է Իսուվայից արևելք:

Այսպիսով, ըստ Ն. Աղբանցի՝ Հայաստանի բազավորությանը գտնվել է Արևմայստ Եփրատի վերին հովտին ափերին՝ Դեբա-

<sup>55</sup> Խաչատրյան Ա., «Հայաստանի սեպագրական շրջանի բննական պատմություն», Երևան, 1933, էջ 41-48:

<sup>56</sup> Արքանց Ն. «Հայաստանի պատմություն», Երևան, 1972, էջ 33-47 (բարդամանքած 1946թ. հրատարակված ֆրանքիրն թագավորի):

մի գանգվածի շորջը, և Խոտվա, Աշխ բազավորությունների հետ միասին ներկայացնել է՝ որպես Հայաստանում նայողի առաջին բաղարական կազմավորմներից մեկը<sup>57</sup>.

Հայաստայի պատմությանը հիմնարար ուսումնասիրություն է նվիրել Գ. Ղափանցյանը: Իր «Հայաստան-հայերի բնօրբան» մենագրությունում հեղինակն անդրադարձել է Հայաստայի պատմության, լեզվի, տեղադրության, մշակույթի և երթիկական հարցերին<sup>58</sup>.

Իր աշխատության մեջ մա պատկերացում է տվել նաև Հայաստայի ընդգրկած տարածքի մասին՝ համամիտ լինելով այն տեսակետին, որ Հայաստանը երկիրը գրադեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը՝ Տորոլս, Եփրատ և Արար գետերի վերին հոսանքի շրջանները՝ Փոքր Հայքի արևելյան և Բարձր Հայքի տարածքները՝ կենտրոնում դնելով Կամախի, Երզնկայի, Դերջանի և Սպերի միջև ընկած տարածքը: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Ազգին ընդգրկել է Հայաստան-Ազգի արևմտյան շրջանները, իսկ Հայաստան, հասկանարար, գրավել է այլևէյան շրջանները՝ Դարձանադին, Եկեղեցացը. Դերջանը և Սպերը, միգուցե նաև՝ Կարինի շրջանը: Այսպիսով, մա, Կոմիտան տեղադրել է ներկայիս Կամախի տեղում՝ այն համարելով Հայաստան-Ազգին կենտրոնը, իսկ հիշատակված Ռուա քերը՝ Կամախի մոտ գտնվող իին հայկական Անի ամրոցի տեղում: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Արխանուն և Դուզգաման գտնվել են Հայաստան-Ազգի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խթական հարձակումներից Կարինի մոտ գտնվող ճահճուռ վայրերում, կամ ներկայիս Թերժակ քնակավայրի մոտ, կամ էլ Երզրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (VI-VII.) հիշատակվել է Արարիս գյուղը հնարավոր համարներով, որ այդ քնակավայրի տեղում ճահճին է եղել: Դեռևս հոդվածական ժամանակներից իշխատակվող Ազա քաղաքը (հայոց Սատաղ քնակավայրից արևմուտք), ըստ նեղինակի, հանդիսացել է Ազգի երկ-

<sup>57</sup> Ալբեց Ն., Հայաստանի պատմության, էջ 35, 39-40, 44-46.

<sup>58</sup> Կառավար Դ., Խանոս-կօչքելու արյան, Երևան, 1948.

բանվան վերափոխված ձևը: Հայաստայի միջրառիկա (Պարքեյա-  
թիկա) բաղաց գտնվել է հետագայի թթաօիքի մոտ:

Հայաստան Գ. Դափանցյանը համարել է հայ-արևմեների  
հնագույն օրրանը, որն արևմուտքում սահմանակցել է խերական  
աշխարհի հետ, հավանաբար, հետագայի հոռմեական Զիմարա-  
կարահիսար զժով՝ Խարևան լինելով Վերին Երկրին, իսկ արևել-  
յում նրա սահմանները հասել են մինչև Կարինի շրջանը՝ ընդգր-  
կեցվել Կամախի, Երզնկայի. Դերջանի և Սպերի շրջանները:  
Արևմուտքից արևելը Հայաստան տարածվել է մոտ 150-170կմ:  
Սակայն, ուստ հեղինակի, այն հավակնություններ է ցուցաբերել  
նաև ավելի արևմուտք և հարավ ընկած տարածքների վրա<sup>55</sup>:

Կումմախան քաղաքը խերական սկզբնաղբյուրներում նշվել  
է՝ որպես առանձին քաղաքական միավոր, և եթե գտնվել է Հա-  
յաստայի կազմում, ապա ժամանակավորապես, և հետագայում  
անցել է խերական զերիշխամության տակ: Քիչ հավանական է,  
որ այն Հայաստայի կենտրոնն է եղել՝ հաշվի առնելով այդ քաղա-  
քի աշխարհագրական դիրքը (Խարբիլիմ մոտ գտնվելը) և խերա-  
կան աղբյուրներում այդպիսի տվյալների բացակայությունը:

Ըստ Ե. Թասունու՝ Հայաստան մի հզոր պետություն է եղել, որը  
տարածվել է Արևմտյան Եփրատի ավազանից մինչև Վանա լիճ:  
Հայաստայի արևմտյան մասում է գտնվել Ազգին, որը ենրական է  
եղել Հայաստային և ունեցել է իր քաջակորը: Ազգին գտնվել է  
Բարձր Հայրում և իր մեջ է ընդգրկել ներկայիս Երզնկա քաղաքը  
և Արևմտյան Եփրատի վերին քաղուկի ավազանը: Նա կարծիք է  
հայուննել, որ Ազգին մայրաքաղաքը գտնվել է հետագայի Արծն  
քաղաքի տեղում: Ազգի-Հայաստայի և Խոտի-Միտամնի պետութ-  
յունների միջև են գտնվել Խոտվա կամ Խոտա, Ալշա և Սեմբրի  
Երկրները: Ըստ Ե. Թասունու՝ Հայաստայի հյուսիս-արևմտյան  
գտնվել է Կասկա Երկիրը, որը Փոքր Հայքից տարածվել է մինչև  
Պափագումիա: Խոհ Հայաստային մոտ գտնվող խերերի Վերին  
Երկիրն, ուստ հեղինակի, ընդգրկել է հետագա Փոքր Հայքի մեծ

<sup>55</sup> Կառնու Ռ., Խանու-կոչումը քրոն. Երևան, 1948, է. 58-64.

մասը՝ Կասպաղովիլիայի որոշ շրջաններով հանդերձ: Կոմախսակամ Կամոխսա քաղաքը Ե. Քասումին համարել է Հայաստայի բաղադրելիք մեկը և նույնպես տեղորոշել է Անի-Կամախի տեղում: Սուրախիսի տարինգործյան մեջ հիշատակված Ինզալավա քաղաքը նա տեղորոշել է միջնադարյան Անզեղ թնդիլ տեղում, իսկ Արփասա քաղաքը՝ Վանա լճի ափին: Դատվանի կամ Խոլարի մոտ: Նա համակարծիք չէ այն հեղինակների հետ, որոնք Հայաստայի Դուռգամա քաղաքը տեղադրել են Դատվանի մոտ: Նա այդ քաղաքը տեղորոշել է Մանազկերտի մոտ և հավանական է համարել, որ այն հանդիսացել է պետորյան մայրաքաղաքը: Ազգի Խայինանա բնակավայրը նա տեղորոշել է Ծոփրում Խոլոմետոս բնակավայրի տեղում<sup>60</sup>:

Այսպիսով, Ե. Քասումին նույնպես Հայաստան տեղադրել է Հայկական լիոնաշխարհի արևմտյան մասում միևնույն ժամանակ կարծիք հայունելով, որ իր հզրացման ժամանակ այն, հավանաբար, տարածվել է մինչև «Անախ սար և Ուրմիա լիճ»<sup>61</sup>: Մակայն Հայաստա-Ազգի կենտրոնների տեղորոշումը հետագայի Արծնի և Մանազկերտի մոտ ոչ մի փաստով հիմնավորված չէ: Առավել հավանական է որպես մայրաքաղաք նշել Խերական տեղստերից հայտնի Հայաստան քաղաքը, որի տեղադրությունը, փաստերի սույն լինելու պատճառով, անհնար է որոշել:

Հայաստային փրաբերող հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել նաև Հ. Մանանոյանը, որի մոտեցումները Հայաստայի պատմության առանցքային շատ հարցերին տարբերվել են իր ժամանակակից շատ պատմարանների տեսակետներից<sup>62</sup>: Անդրադառնալով Հայաստա-Ազգի քաջավորության պատմությանը՝ նա տվել է նաև դրա տեղադրությունը Վանա լիճից

<sup>60</sup> Ն. Աղօնքը դեռև 1946 թ. իր աշխատության մեջ Խայինանա քաղաքի անունը համեմատել եք Ծոփրի Խոլոմետոս տեղամասի հետ (Աղօնք Ն. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 44):

<sup>61</sup> Քասումի Ե., Խախատակական Հայաստան, Պետր. 1950, էջ 76-78, 80-81, 91, 94, 97, 99, 102-106.

<sup>62</sup> Մանուկյան Ա., Օ մշտորոն շորոնք պրոբլեման պատմության և գեղագիտության մասին, Երևան, 1956, էջ 68-155.

արևմուտք և հյուսիսի բնելած շրջաններում: Նա գտնում էր, որ Հայաստայի հյուսիս-արևմտյան սահմանները հասնում էին մինչև Սնձորի լնոները, այսինքն՝ մինչև ներկայիս Դերինի շրջանը, իսկ արևմերում՝ մինչև Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը: Հ Մանանոյանը խնդրական արծանազրություններում նշված Կոմմախան կամ Կամոյխան նույնացրել է հայկական Կամախի հետ (Դարանալյաց գավառում), սակայն ի տարրնություն մյուս ուսումնասիրողների, որոնք նշել են, որ այդ բնակավայրը Հայաստայի կազմում է գտնվել, նա այն շի մոտցրել Հայաս-Ազգի կազմի մեջ: Կոմմախան և նրանից հարավ գտնվող Տանկուվան, ըստ նրա, գտնվել են խնդրելին պատկանող սահմանամերժ շրջանում, որն ընդգրկվել էր խնդրական արծանազրությունների հիշատակած Վերին Երկրի կազմում: Խնդրելի Վերին Երկիրն, ըստ Հ Մանանոյանի, Հայաստ-Ազգիին սահմանակցն է ոչ թե արևմուտքից, այլ հյուսիսից և հյուսիս-արևմուտքից: Ուստանասիրողների մեջ առաջինը Հ Մանանոյանն էր, որ տարբեր աղբյուրներում հիշատակված Աշի, Ազգի և Ազգի անվանումները միևնույն երկրին են վերագրել, իսկ պետությունն, ըստ նրա, կոչվել է Հայաստ իր մայրաքաղաքի անվանք (Հայաստ), որը Ասորենստանի արքա Սարգսն Ա-ի արծանազրության մեջ հիշատակվել է Ռույախն ձևով (ըստ Հ Մանանոյանի՝ այդ քաղաքը գտնվում էր Վանի լճի հյուսիսային ափին): Ազգի անունն, ըստ նրա, ունեցել է Երմիկական ժագում, որն սկզբնապես կրել է տեղի ժողովուրդը: Հ Մանանոյանը Հայաստինի հարեւան կասկերի ցեղերի բնակության հիմնական տարածքը համարել է ոչ թե Սև ծովի հարավային ափերը, այլ Վերին Եփրատից արևմուտք՝ ներկայիս Դիմիրիդի (միջնադարյան Տեֆրիկե) և Արարիդի քաղաքների շրջանները: Նա Հայաստայի Ռուա ամրոցը տնօրորչել է հետագայի Խարբեյի բնակավայրի տեղում, որից արևմուտք գտնվել է Խառսիա Երկիրը (նիմ Խայկական Ամձիստ գավառը), որը նոյնպես, ըստ նրա, մտել է Հայաստայի կազմի մեջ և համբխացել է նրա հարավ-արևմուտյան սահմանամերժ շրջանը՝ Երիքատ գետով քաժանվելով հարեւան

Մելիտենից: Ըստ Հ. Մամանյանի՝ Խերական արձամագրության մեջ հիշատակված Խճղալավան հին հայկական Անդր բնակավայրն է և ուրա ամրոցի հետ մտել է Հայասայի կազմի մեջ։ Հ. Մամանյանն Ազգի Արիպսա քաղաքը տեղորոշել է Վանա լեի ափին, սակայն չի մշկ Մուրսիլիսի տարեգրությունում Արիպսայից հետո հիշատակված Դուզգանա քաղաքի գտնվելու վայրը<sup>83</sup>։

Հ. Մամանյանի աշխատության մեջ նշված Ազի և Ազգի երկրանունների նույնացումը պատմագրության մեջ չի ընդունվել, քանզի Ազիի տեղադրությունը Խոտվայից (Շոփից) հարավ-արևելք հենավում է իմշան Խերական, այնպես էլ ասորեստանյան տերստերի վկայությունների և հետազայի հայկական Աղձնիրի հետ համապերման վրա։

Հայասայի սրատմությանը, ինչպես նաև նրա պատմագրության, տեղադրության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների խնդիրներին ամոցադարձել է Լ. Բարսեղյանը։ Նա շեշտել է, որ Հայասան և Ազգին թե տարածքային, թե քաղաքական առումով իրենցից ներկայացրել են միևնույն երկիրը։ Հայասայի կենտրոնը՝ համանուն Հայասա քաղաքը, նա որոնել է Երզնկայի շրջանում Խայիր կամ Խայեր գյուղի տեղում, որը գտնվում է Բարերդից 40կմ հարավ-արևմուտք։ Իսկ Ազգին տարածվել է Մեծորի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները։ Այն գտնվել է Հայասայից հարավ՝ մինչև Խոտվայի սահմանները, որը Լ. Բարսեղյանը համարել է Հայասա-Ազգի կազմի մեջ մտնելու երկիր։ Նա Դուզգանա քաղաքը տեղադրել է Խոտվայում (ներկայիս Խարբերդի շրջանում)։ Դուզգանայից ոչ շատ հեռու գտնվող Արիպսան նույնպես գտնվել է Խոտվայում։ Խարբերդից ոչ հեօտու գտնվող Շոփ լճի (ներկայիս Գյողցուկ) ափին և հանդիսացել է Հայասա-Ազգի ամրացված բնակավայրերից մեկը։ Այս հարավային սահմանի վրա՝ նաև Խնգալավա քաղաքը, որտեղից Արիպսա քաղաքի դեմ արշավել է խերական Մուրսիլիս

<sup>83</sup> Մանուկյան Ա., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. с. 68-155.

Ա բագավորը, Լ. Բարսեղյանը տեղորոշել է հայկական աղբյուրներից հայտնի Ամօնդտուն գավառում, որը գտնվել է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում։ Ըստ նրա՝ այստեղ հայտնի է եղել Ակլ զյուղը, որի տեղում գտնվել է Ինգալակա քաղաքը։ Այսպիսով, Լ. Բարսեղյանը Հայաստ-Ազգին հիմնականում տեղորոշել է Բարձր Հայրում և Փոքր Հայրում՝ նրա հարավային սահմանները անցկացնելով պատճական Ծոփը նահանգով<sup>64</sup>.

Խոսված գտնվել է խեթական պետության արտաքին քաղաքականության ոլորտում և նշվել՝ որպես Հայկական լոռնաշխարհի ազդեցիկ երկրներից մեկը։ Նրեւ Արիասան գտնվեր Խոսվայի հարավում, ապա այդ դեպքում այն ամբողջապես պետք է մտներ Հայաստ-Ազգի կազմի մեջ, ինչի հետ դժվար է համաձայնել, սակայն շրացառելով նաև Խոսվայի և Հայաստայի քաղաքական և մշակութային կապերը։

Հայաստայի պատմությանն է անդրադարձել նաև Ս. Երեմյանը։ Նա նշել է, որ հայ ժողովրդի ծեավորման ընթացքն անցել է շորս հիմնական վուլ, և դրանցից յուրաքանչյուրը կապված էր պատմական Հայաստանի տարածքի շորս կենտրոնների հետ՝ Բարձր Հայք, Ծոփիք, Վամա լին ավագան և Արարատյան դաշտ։ Ամենահին և հիմնական օղակներից մեկն այս գործընթացում հանդիսացել է Հայաստ-Ազգի ցեղային միությունը։ Այն խեթական արձանագրություններում անվանվել է «Հայաստ (կամ Խայաստ) քաղաքի երկիր» կամ «Ազգի քաղաքի երկիր» իր քաղաքային կենտրոնների անուններով։ Ս. Երեմյանը Թիշ-Հայաստ քաղաքը տեղադրել է հին հայկական Թիշ ավանի տեղում։ Այս տեղորոշումը տալով՝ նա հանգել է այն մոտին, որ Հայաստ երկիր կորիմը և նրա սկզբնական

<sup>64</sup> Բարսեղյան Լ., Խայաստ-Ազգի ո նրա մի քանի բնակչափական տեղորոշման հարցի շուրջ, ԹՌՀ, 1963, թիվ 3, էջ 307-313; Նոյնիք, Էջ աշուշումնեան պլանավորություններում անվանվել է «Հայաստ-Ազգ» (Համբա-Ազգ), Երևան, 1964, Նոյնին, Հայաստ-Ազգի սոցիալ-ոլորտական հարաբերությունների մասին, ՏՀԴ, 1964, թիվ 6, էջ 101-106; Նոյնիք, Հայաստ-Ազգի ուսումնական պատմությունը, ՏՀԴ, 1964, թիվ 7, էջ 73-79.

տարածքը նդել է հին հայկական Եկեղեցաց գավառը՝ անտիկ դարաշրջանի Ալիլյանենն, որը և համապատասխանել է Երզնկայի դաշտին: Թիվ ավանը տեղադրված է նդել այդ դաշտի կենտրոն Երիզա (Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տնօրում գտնվել է Հայաստ երկրի մյուս կծնտրոնը՝ Ազգի քաղաքը: Ս. Երնմյանը համաձայն չեղ այն վարկածների հետ, որ Հայաստ Ազգի երկիրը գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք ընկած տարածքներում կամ Սև ծովի մերձարևոտույան ափերին: Նա համաձայն էր Ն. Աղբենի այն եղրակացության հետ, որ Արիպսա քաղաքը պետք է տեղադրել Ենրկային Դենիզի գյուղի տեղում՝ Դիվլիդի քաղաքից ոչ հեռու: Դենիզի գյուղը գտնվել է ճահճոտ վայրում, որտեղ, հավանաբար, նախկինում լին էր եղել, որի մասին է վկայում նաև Գյուղադաշտան անունը, որը նշանակում է «Լճի լեռ»: Ս. Երնմյանը Արիպսայի հետ հիշատակված Դուգգամա քաղաքը տեղադրել է Ենրկային Դուգգամ գյուղի տեղում, որն, ըստ նրա, անտիկ Դագոնան է: Այս բնակավայրերից քացի խերական ազդյուրերը Հայաստ երկրում ենթատակել են Ուրան՝ «Հայաստ երկրի գլխավոր ամբողջը», որի տեղադրման հարցում Ս. Երնմյանը համակարծիր է Գ. Ղափանցյանի հետ, որն այն տեղադրել է Երզնկայի դաշտում: Ս. Երնմյանը գտնում է, որ այդ ժամանակաշրջանում պետք է գյուրյուն ունեցած լիներ նաև հին հայկական Դարանադի գավառի ամրոց-քաղաքը Եփրատի ափին՝ Առուսա անվան տակ, որը կապ է տանցել Հայաստայի Աննիյա քագավորի անվան հետ: Հեղինակը նշում է, որ Երզնկայի դաշտի խոր կենտրոններից է եղել Բիբրարիկա քաղաքը, ներկայումս՝ Բրառիճ, որն այլ կերպ կոչվել է Պարբեյարիկա, որի անունը երբեմն վերագրվել է ողջ Հայաստ-Ազգի երկրին: Ըստ Ս. Երնմյանի բուն Հայաստ-Ազգին հյուսիսում սահմանակցնել է Բալա (Պալա, Գայլ գետի վերին հոսանքի շրջանը) և Դուման անտիկ Դումանայի, հետագայի Թումանա գյուղի շրջանը՝ Բարերդից արևմուտք, նորու գետի հովտում) ցեղերի երկրների:

Այսպիսով, Ս. Երեմյանը նգրակացնում է, որ Հայաստ-Ազգին տարածվել է Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքներում<sup>55</sup>:

Իր մի շարք աշխատանքներում Հայաստայի պատմությանն է անդրադարձել նաև Վ. Խաչատրյանը՝ իր ուսումնափրուրյուններն ամփոփելով «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ<sup>56</sup>: Նա նույնակա մեջէ է, որ Հայաստան հաճախ հանդիս է զայն Ազգի անվանը: Հայաստ-Ազգի երկրի մեջ են գտնվել Խնդարավա, Արիպսա, Դողգամա, Ուրա քաղաքները: Խնդարավա քաղաքը ենդինակը նույնացրել է նորոյն զնոտի տոռին հովտում գտնվող հայկական Նիզալ զավառի հետ՝ իր համանուն կենտրոնով: Արիպսան գտնվել է նորոյն զնոտի միջին ավագանում Մսկերից թիշ դեպի հյուսիս-արևելք: Դողգամա քաղաքը տեղադրվել է միջնադարի Ազորի զավառում: Այս զավառի անվան մեջ, ըստ Վ. Խաչատրյանի, պահպանվել է Ազգի երկրի անոնցը: Հայաստ-Ազգին ընկած է եղել նորոյն զնոտի ավագանում ճգիբով մինչև Սև ծով: Այն հարավում սահմանակցել է Բարձր երկրին (ըստ հնդինակի՝ Երզնկայի և Երզրումի շրջաններ): Բարձր երկրի մեջ մտել են Խատենա, Խախտանի և Խատիսինա զավառները: Խատենան իր Կումնախսա քաղաքով, որը հետագայի Խամախն է, գտնվել է Եփրատի հովտում ողյուանից մինչև Երզնկայի շրջանը: Խակ Երզնկայի շրջամը Խախտանին է եղել՝ Խախսա (հայկ. Խախս), Դամելուսա (միջնադարի Մբմի, Ենրկայիս՝ Միտինի) և Թիտեյարիգա (հայկ. Թրայառիճ) քաղաքներով: Խատիսինան, ըստ նրա, ընկած է եղել Երզնկայի շրջանից անմիջապես դեպի արևելք՝ մինչև Եփրատի ակունքները: Խատիսինա զավառի բնակավայրերից են եղել Զաղիսան, որի Երզրումի շրջանի Զագան է: Խակ Խստիսինայի Արծիյա քաղաքը միջնադարի հայկական Արծմն է: Այդ շրջանում է գտնվել նաև Խախմանա բնակավայրը, որը Վ. Խաչատրյանը նաև կամ անվանելու միջնադարի Մանյա այրը տեղանվան հետ: Կամուկա-

<sup>55</sup> Երեմյան Ս., Հայ ժողովով կազմափորձան ընթացքը, ՊՈՀ, 1970, թիվ 2, 19-29-33.

<sup>56</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998:

բա բնակավայրը գտնվել է Խստիտինայի տարածքում: Վ. Խաչատրյանն առաջարկել է այն նույնացնել Կարինի շրջանի միջնադարի հայկական Կան բնակավայրի հետ: Նա համարում է, որ Հայաստ երկրի մեջ է մտել նաև Բարձր կոչված նահանգը (Կունմախան քաղաքի շրջանը): Հաջորդ երկիրը, որը նույնպես մտել է Հայաստայի կազմի մեջ, Պահսխուվան է իր Արխիտա քաղաքով. այն հեղինակը նույնացրել է ժամանակակից Պախ բնակավայրի հետ: Այն գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան մասում: Հայաստայի կազմի մեջ, ըստ նրա, մտել է նաև Խսովան (Արածանի գետի ստորին ավազանը): Տարածաշրջանի հաջորդ վարչարադարձական միավորը, որը Վ. Խաչատրյանի կարծիքով Հայաստայի կազմի մեջ է մտել, Ծովանան է: Նա այն նոյնացրել է ասորեստանյան արձանագրություններում վկայված Ծովանու (Սովոնու) երկրի հետ, որը գտնվել է Բյուրակնի լեռների արևելյան հատվածում:

Վ. Խաչատրյանը նշել է, որ Հայաստ բազավորության սահմանները ոչ միշտ են ընդգրկել նշված բոլոր նահանգները, քանի որ նրանցից մի քանից մերօքնմերը նվաճվել են խեթական բազավորների կողմից և մտել Խեթական պետության կազմի մեջ: Հայաստան հարավից սահմանակից է նոյն Տիգրիսի վերին ավազանի Ալզիյա (Խայկ, Աղձնիր), իսկ հյուսիս-արևելյում Կասկա երկրին (Արևելաստանական լեռների շրջան):

Այսպիսով, ըստ Վ. Խաչատրյանի, Հայաստ երկիրն ընդգրկել է Ազգի, Կունմախան (Բարձր), Խսովա, Պահսխուվա և Ծովանան նահանգները և գրադեզրել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Հայկական Տավրոսի, Արևմտյան Եփրատ գետի և Ալ ծովի միջև<sup>47</sup>:

Հայաստային և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի մյուս քաղաքական միավորներին վերաբերող սեպագիտ աղք-

<sup>47</sup> Խաչատրյան Վ., Восточными провинциями Хеттской империи, Ереван, 1971, с. 128-145. Նոյնին, Հայաստան, ՅՈՒ, 1972, № 8, с. 32-35. Նոյնին, Հայաստան, ՅՈՒ, 1973, № 11, с. 32-41. Նոյնին, Հայաստանը մ.թ.մ. XV-XVI դարերում, Երևան, 1998, էջ 34-38.

յուրների համակողմանի վերլուծությամբ կարևոր են Ա. Քոսյանի հեղինակած աշխատությունները: Դրամբ առանձնանում են նաև նորահայտ սկզբնադրյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խարքի հարաբերությունների նորովի մեկնարանուրյուններով: Կարևոր է նաև ընդգծել նրա՝ 2004թ. հրատարակած «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (բառ խերական սեպագիր աղյուրների)» մենագրությունը<sup>68</sup>:

Նա նույնպես Հայաստան-Ազգին տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտացում Վերին Եփրատի ավազանում: Արևմտարից այն ասհանակցել է Վերին երկրին, որի ընդգրկել է Հայկական վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած շրջանը: Ա. Քոսյանը խերական արձանագրություններից հայտնի Կումմախան նույնական նույնացրել է ժամանակակից Կեմախի (հայկ. Ամի-Կամախ) հետ: Սակայն ի տարբերություն ուսումնասիրողների մեջ ճասի՛ նա Կումմախան համարել է առանձին քաղաքական միավոր, որը չի մտել Հայաստայի կազմի մեջ և գտնվել է վերիննեփրատյան տարածաշրջանի երկու առաջատար քաղաքական միավորների՝ Հայաստան-Ազգիի և Խառվայի անմիջական մերձակցությամբ: Ըստ Ա. Քոսյանի՝ մինչ այդ անհայտ Լիտոտա, Տավատնա, Ուտկունիա, Խույզո, Պարտանտա, Իյանինա, Լալատոտա, Տայսանիստարա, Ուկուն քաղաքները, հավանաբար, գտնվել են Հայաստայում<sup>69</sup>:

Այսահանգ, ուսումնասիրողների հիմնավորումները Հայաստան-Ազգիի պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ որոշակի առումով տարբեր են: Ընդհանրացմելով խնդրո առարկա թճային մվյարված նասնագետների աշխատությունները՝ մենք փորձնացնք նեյկայացնել պատմագիտության մեջ եղած տարրեր կար-

<sup>68</sup> Քոսյան Ա. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004.

<sup>69</sup> Քոսյան Ա. Ա. թ. XII դարի մերձակութական նամաշամբ և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 71, 72, 84; Խոյին, Ամի-Կամախը խերական դրագրագետում, Պիշ, 2002, թիվ 3, էջ 236-240; Խոյին, Նոր տեղանուններ խերական սեպագիր տեղանունում, ՄԱՍԵԽ, 2003, ԽХII, էջ 254-259; Խոյին, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101, 157.

ծիրները, որոնք, թատ պատմաաշխարհագրական բռվանդակուրյան, կարելի է խմբագրել հետևյալ կերպ:

ա) Հայաստա-Ազգին գտնվել է Վերին Եփրատի, Վերին Գայլի և Նորոխի ավազաններում ընդգրկելով Թարձր Հայրի և Փոքր Հայրի տարածքները (Ն. Մարտիրոսյան (Հայաստա-Ազգիի դաշնակցային պնտության մեջ է ընդգրկել նաև Ծոփրի տարածքը), Ա. Գյորգե, Է. Կավեմյակ, Ֆ. Հասպ, Ջ. Զարար, Ն. Աղոնց, Գ. Ղափանցյան, Լ. Թարսելյան (Հայաստա-Ազգին հիմնականում տեղորոշել է Թարձր Հայրում, սակայն նրա մեջ ընդգրկել է նաև Ծոփրի տարածքը), Ս. Երևանյան, Ա. Քոյսյան),

բ) Հայաստա-Ազգին գտնվել է Ան ծովի ափերին և հիմնականում տեղորոշվել է Հայկական լեռնաշխարհից դուրս (այս սկզբնապես Ան ծովի հարավ-արևելյան ափերին էր տեղորոշել նաև Ա. Գյորգեն, այնուհետև նա վերանայել է իր այդ տեսակները: Ֆ. Կոռնելյանը տեղորոշել է Հայաստա-Ազգին Ան ծովի ափին գտնվող ներկային Սամսոն քաղաքի մոտ: Ի. Շյակոնովը նոյնպես առաջարկել է Հայաստա-Ազգին տեղադրել Ան ծովի ափերին՝ Խարշիտ գնահատագրությամբ, սակայն նրա հարավային սահմանները հասցըն չ մինչև Տորոխի ավագանը),

գ) Հայաստա-Ազգին գտնվել է Վաճառ լիից հյուսիս և արևմուար և ընդգրկել Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը (Է. Ֆոներ, Յ. Ֆրիդրիխ (առաջարկել է Հայաստան տեղադրել Արևելապնտտական լեռների և Վերին Տիգրիսի ակումբների միջև), Ա. Խաչատրյան, Հ. Մամանյան, Ե. Թառումի (կարծիք է հայտնել, որ իր հզորացման ժամանակ Հայաստա-Ազգին տարածվել է մինչև Ուրմիա լիճը), Վ. Խաչատրյան (նշել է, որ Հայաստա-Ազգին ընկած է եղել Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Ան ծովի միջև), Ջ. Մելլանը (Հայաստա-Ազգին տեղորոշել է Թարձր Հայրից մինչև Արարատյան դաշտավայր ընկած տարածքում)):

Քննելով մասմագետների կարծիքները Հայաստա-Ազգին պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ՝ կարելի է ասել, որ այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում և արևմուարից

տահմանակից է եղել Խերական տերությանը: Պատմաբանների մեծ մասը հաճարում է, որ Հայաստան-Ազգին գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողման Կենտրոն նշանով հիմնականում Ռարձը Հայրի տարածքը: Մակայն ակնհայտ է նաև, որ Հայաստան-Ազգիի տարածքի մասին խերական սկզբնադրյալք մերում ավշալներ կան այնքանով, որքանու խերքերը կարողացել են ներափառնել Հայկական լեռնաշխարհի խորքերը: Մասնակիութեան առավել հստակ ցույց են տվել Հայաստանի հատկապն արևմտյան սահմանները, որոնք անցնում էին հիմնականում պատմական Փոքր Հայրի կամ Ռարձը Հայրի տարածքով, որտեղ Հայաստան-Ազգին սահմանակցել է Խարբիի հետ, իսկ Արևելյապնտական լեռներով՝ կասկական ցնդերի հետ: «Ծովի մեջ գտնվող» Արիանա քաղաքը հարկավոր չէ Սև ծովի ափին վկանութեան բանցի Ա.ԱՅ.ՎԱ<sup>20</sup> գաղափարագիրը նշանակել է նաև լիճ, որը մնում էապանականությամբ կարող էր լինել Վանա լիճը:

Թմական է, որ ժամանակին Հայաստան, քացի արևմտյան հարևանից (Խերական պետություն), ունեցել է որոշակի կապեր նաև հարավային և արևելյան երկրների հետ: Մակայն դրանց մասին որևէ զրագործ աղբյուր առայժմ հայտնի չէ, ինչն անհնար է դարձնում որոշեալ Հայաստան-Ազգի պետության ընդգրկեած տարածքները Հայկական լեռնաշխարհի արևելյում ու հարավում:

<sup>20</sup> Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 104.

## ՀԱՅԱՍՏԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև ներկայացված ցանկում տրիստ են Հայաստանի խերական աղբյուրներից հայտնի տեղանունները (KUR-երկիր, URU-քաղաք, HUR.SAG-լեռ): Ցանկում ներառված են Հայաստանի կազմում գտնվող տեղանունները, ինչպես նաև անուններ, որոնց հայաստանի պատկանելությունը ենթադրվում է:

1. Ազգի (KUR<sup>URU</sup>Az-zi, KUB Az-zi, URU Az-zi, KUR<sup>URU</sup>A-a-z-zi)<sup>71</sup>  
Խերական աղբյուրների հաղորդած վկայությունները ցույց են տալիս, որ թե քաղաքական, թե՝ տարածքային առումով Հայաստան և Ազգին իրենցից ներկայացնում էին միևնույն երկիրը: Այս համանմանությունն ակնհայտորեն նույն է խերական բազավոր Մուրսիլիս Ա-ի տարեգործության մեջ, եթե հիշատակվում է, թե ինչպես խերական զօրքերի երանմանատար Նուվանցան հաղբեց Ազգի երկրի մարդկանց Կամնուվարա քաղաքի մոտ: Նույն տարեգործության մեջ այլ տեղում խերական բազավորն արձանագրել է, որ Նուվանցան Կամնուվարայի մոտ հաղբել է Հայաստան երկրի մարդկանց<sup>72</sup>: Այս համանմանությունը առաջին անգամ նկատել է Ե. Ֆոնդը<sup>73</sup>: Գոյություն ունի նաև Մուրսիլիս Ա-ի մեկ այլ տեքստ (KUB XIV 4), որտեղ խերական արքան նորից միևնույն երկրի մասին նշում է կամ Հայաստան կամ Ազգի<sup>74</sup>:

Ամենայն հավանականությամբ, Ազգի անվանը քաղաք գոյություն չի ունեցել՝ չնայած խերական սկզբնադրյալներում Ազ-

<sup>71</sup> Ազգի անվանածեր գրփում է նույն Ազի ժամկետ, հավանական է համորդում, որ երկու շտանքի հացորդավանությունը այս անվան մեջ կարելի է գրի նաև մեկ տառություն (RGTC, VI, S. 59; RGTC, VI/2, S. 19).

<sup>72</sup> KBo IV 4 II, KBo III 4 IV (Götze A., Die Annalen des Mursili II, MVAG, 1933, № 38, S. 122-123).

<sup>73</sup> Ferrer E., Մայսա-Ազի, Caucasica, 1931, № 9, S. 4.

<sup>74</sup> Քոյսուն Ռ., Մուրսիլիս Ա-ի հայտագրելու աղջափակընթերք, ՊԲՀ, 2004, թիվ 2, էջ 199-200 (տես՝ Խովինյան 12):

զի երկրանունց բազմիցս նշվել է նաև «քաղաք, բնակավայր» շումերերին գաղափարազրով (URU)<sup>75</sup>.

Ռւսումնասիրուներից շատերն Ազգին տարանջատել են Հայաստանից՝ այն համարելով ինքնուրույն միավոր, ո տարբեր տեղադրություններ են առաջարկել (մերձալինտական շրջանում, Շորոխի ավազանում և այլուր)<sup>76</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ազգի անունը պահպանվել էր Փոքր Հայրում՝ Անտոլինոս կայսեր նրբուդում իիշատակվող Ազ (Ազա) քաղաքի անվան մեջ<sup>77</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ազգի անունը պահպանվել է Շորոխի ավազանի կենտրոնում գտնվող միջնադարի հայկական Ազորդ գավառի անվան մեջ<sup>78</sup>: Ա. Թօսյանն Ազգին Հայաստանի՝ Խարթին սահմանակից շրջանն է համարում և ենթադրել է, որ Հայաստան և Ազգի տերմիններով բնորոշվող տարածքն իրենից ներկայացրել է էքսոլեգվական կատերով մինչյանց հետո սերտորեն կապված երկու ցեղային միավորների միություն<sup>79</sup>:

Հաշվի ամենալով վերը նշված փաստը (Հայաստանի համանմանուրյունը Ազգին հնաւ) կարմիր է շնչուել, որ Ազգին ընդգրկել է նույն տարածքը, որը Հայաստան:

## 2. Արիանա (<sup>1</sup>URU A-ri-ip-ša-a, <sup>2</sup>URU A-ri-ip-ša-a-an, <sup>3</sup>URU A-ri-ip-ša-aš)<sup>80</sup>

Արիանա քաղաքը իիշատակվել է Մուրսիիս Ա-ի տարեցրյան մեջ՝ որպես Հայաստան-Ազգի ամրացված քաղաքներից մեկը: Խերական արքան Հայաստանի դեմ կատարած արշավանքի

<sup>75</sup> Ն. Մարտիրոսյանց Խոհեմանկան է Խոհեման, որ Ազգի երկրանունը առաջացել է հայերնին ազ- ազն ացեղ, սկրմն, տոհմ, գլուխաստան» քայլը (Մարտիրոսյան Ն., Խապատ մը հեր և նայ քառեմնուրյան, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 171):

<sup>76</sup> Curneau F., Neue Altheorientalische Geographie, Anatolica, 1967, № 1, Տ. 68. Դյակոնով Ի., Պредыстория армянского народа, Ереван, 1968, с. 83.

<sup>77</sup> Ա.Լ.Բ., I, է. 43-46.

<sup>78</sup> Խաչատրյան Վ., Հայաստան մ.թ.ա. ԽV- VII դարերում, Երևան, 1998, էջ 35:

<sup>79</sup> Քոչոր Ա. Հայկական խոնաշարիք տեղականները, Երևան, 2004, էջ 45:

<sup>80</sup> RGTC, VI, Տ. 37.

Անբացրում գրավել է Արիաստան, որն, ըստ տարեգրության «ծովի մեջ էր գտնվում»<sup>81</sup>:

Խերական թագրում Արիաստանի տեղադրության այսպիսի նկարագրությունն առաջ է թերել տարրեր կարծիքներ: Ռատոնասիրողների մի մասը Հայաստան-Ազգին տեղորոշել է Սև ծովի ափերին ելնելով այն տնտեսկետից, որ Արիաստան գտնվել է Վերոնչյալ ծովի ափերին: Սակայն է Ֆառերն Արիաստան տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին՝ Կրպան-Դադ կոչվող վայրում<sup>82</sup>: Խակ Ն. Աղոնցն այն համարում է Եփրատի ջրերից գոյացած ճահիճների մեջ գտնվող մի թերդ, որը գտնվել է Եփրատի և նրա վտակ Արարկիր գետակի միացման կետում գոյություն ունեցող Դենիկու քնակավայրի տեղում<sup>83</sup>: Գ. Ղափանցյանը կարծում է, որ Արիաստան և Շուզգաման գտնվել են Հայաստան-Ազգի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խերական հարձակումներից՝ Կարին-Երզրումի մոտ գտնվող ճահճուտ վայրելում՝ կամ Բերդակ քնակավայրի մոտ, կամ Էրզրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (VII.) հիշատակվել է Արարես(ոս) (Արարիս) գյուղը՝ հնարավոյ համարներով, որ այդ քնակավայրի տեղում ճահճը է եղել<sup>84</sup>: Լ. Բարսեղյանն Արիաստան քաղաք տեղորոշել է Ծովիք Ծովք լճի ափին<sup>85</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Արիաստան հետագային Արար-կալե թերդն է՝ Մաներից հյուսիս-արևելք՝ Շորոլիսի ափին: Նա ստուգարանել է Արիաստանու հայերենի առ՝ «կողոքին, առջև» նախսդիրով և ափի արձատով<sup>86</sup>: Ա. Թույանը նույնպես հավամական է համարել Արիաստան տեղադրել Երզրումի շրջանում ճահճացած լճի կամ Թորբումի լճի մոտ<sup>87</sup>:

<sup>81</sup> KBo IV.4 IV.5 (Götze A., Die Annalen des Mardiliš, S. 132-133)

<sup>82</sup> Forrer E., Hajasa-Azzi, S. 18.

<sup>83</sup> Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46:

<sup>84</sup> ԱՀՊ, 1, է. 56, 59.

<sup>85</sup> Բարսեղյան Լ., Խայաստան-Ազգին ու նրա մի քանի քնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 311:

<sup>86</sup> Խաչատրյան Վ., Հայաստանց մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 35, 44:

<sup>87</sup> Թույան Ա., Հայեական թանաշխարհի տեղականմենք, էջ 39:

Արիականի տեղադրման հարցում զգալի պարզություն կարող է մտցնել Դուգամա քաղաքի տեղորոշումը, որը հիշատակվել է նշված տարեգրության մեջ: Այն խեթական արքան պրավիկ է Արիականի նվաճումից հետո: «Դուգաման շեր կարող մնձ հեռավորության վրա զունվել Արիականից: Այն հիշատակվելու է նաև «Պախսուվացի Միտայի» տեքստում, որին ակտիվ մասնակցություն է համեմու քերել տարածաշրջանում (Հայկական Խօնաշխարհի արևմտյան մաս) ծափարված ուզմաքաղաքական գործընթացներին<sup>86</sup>: Ըստ այդ՝ կարելի է Արիական տեղորոշել այնաև զունվող որևէ ջրային տարածքի (ամենայն հավանականությամբ, լի՛) ափին: Հավանական է, որ Մորսակիս II-ի կառավարման 10-րդ տարվա արշավանքի ժամանակ հայտնվել էր Վանա լճի ավազանում, որտեղ և զունվել էր Արիական քաղաքը<sup>87</sup>:

### 3. Արիսիտա (ԱՅԱ Ար-ի-տա, ԱՅԱ Ա-ար-ի-ի-տա, ԱՅԱ Ե-er-ի-ի-տա)<sup>88</sup>

«Պախսուվացի Միտայի» տեքստում հիշատակված նմ Հայկական խօնաշխարհի մի շարք երկրներ<sup>89</sup>: Հայաստան անվանակես չի նիշատակվել, սակայն տեքստում համեմու նմ զայիս որոշ քաղաքներ, որոնք հնուազայն խեթական սկզբնադրյալներում նշվել են՝ որպես Հայաստա-Ազգի բնականային: Համաձայն վերոնշյալ տեքստոյի «Պախսուվացի հակախեթական գործունեության ջրամում այդ երկրի դաշնակիցը Արիսիտան է եղել:

Է. Ֆոռերն առաջինն էր, որ Արիսիտա քաղաքամունք նոյնացրեց Էրիսիտուայի հետ<sup>90</sup>: Գ. Պափանցյանը շեշտել է, որ քաղաքի անունը առաջացել է խեր. այժա-«սահման» քաղից, և հավանական է համարել, որ քաղաքի անունը նշանակել է «սահմա-

<sup>86</sup> KUB XXIII 72 (Քոյսան Ա., Նոր նյութեր Խեթական տեղությամբ և Հայկական խօնաշխարհի երկրների Փոխանակացերերությամբ մասին, ՄՄԱՆԺ, 2001, Խ. էջ 240-242).

<sup>87</sup> «Ազգային Ռ.- Հայաստա-Ազգի տեղադրության հարյի շարք (Օբս Ոլորսիս Ա-ի տարեգրության), Մերձավոր Արևած, 2005, էջ 37-38:

<sup>88</sup> RGTC, VI, Տ. 31.

<sup>89</sup> KUB XXIII 72.

<sup>90</sup> Fører E., Hajača-Laz, S. 8.

նային»<sup>93</sup>: Վ. Խռաշատրյանը նույնպես նշել է, որ Արխիտօն քադարի ամունք խեթերին արհ «ասինսամ» քաղի գործիական հոլովաճեն է, և քաղաքը տեղորոշել է պատմական Հաշոյանը զափառի Երիգա (հոյ, երեք «օգլո») պամի տեղում<sup>94</sup>:

Այս քաղաքը իշխատակվել է նաև Խնքահայասական պայմանագրի վերջում տրված աստվածներից ցուցակում<sup>95</sup>: Հայաստի աստվածների շարքում իշխատակվում է «Արխիտօն քաղաքի Ամպրույի աստվածը» (<sup>96</sup>Ո տակ-ձա-առ-ու-առ Ար-ի-ւա»<sup>97</sup>): Այս վերյան իհման վրա կարելի է նշել, որ Արխիտօն համբխացել է Հայաստայի պաշտամոնքային կենտրոններից մեկը: Այն իշխատակված է նաև Խնքական տերության հյուսիս-արևելյան շրջանների և վերիննեփրատյան երկրների առանձին բնակչություններից ցանկում, որտեղ նշված է տվյալ վայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների մասին: Տեղանկան Ակզրում ա-ը/ հերթագայությունը լորջ խոշներու չե, քանի որ ցուցակում Արխիտօն տրված է Երիտօն անկանածնեվ (<sup>98</sup>Երիտա = տր Արիտա): Խեթական տերության հյուսիս-արևելյան և արևելյան շրջաններին հայող երկրների շարքում Արխիտօն քաղաքը (<sup>99</sup>Երիտա ծևով) վկայված է Սալս քաղաքից Իտոս Լիտոս և Տեմիյա քաղաքներից առաջ<sup>100</sup>: Ա. Քոյայան այս քաղաքը տեղորոշել է Կումմախտայի և Մախսուսայի հարեանությամբ<sup>101</sup>:

<sup>93</sup> ԱԼԲ, 1, ս. 60 (նորու 1).

<sup>94</sup> Խռաշատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-XII դարերում, էջ 44.

<sup>95</sup> Այս պայմանագրից կրթել է կամ ձարբերի արա Խռախտիխա Ա-ի և Հայաստայի արքու Կառառի միջնի միջն. (Բ.ա. XIVդ. 1 կտ) (Forrer E., Սայա-Ազր, Տ. 3), կամ Սուսպիրալիտաս 1-ի և Խռականայի միջն. (Բ.ա. XIVդ. կտեր) (Խանգրան Ե., Յօստոնու քրօնոգրաֆիա Հետեւու ուլուրու, Երևան, 1971, ս. 148), կամ Սուսպիխա Ա-ի և Անհիայի միջն. (Բ.ա. XIVդ. 2 կտ) (Carruba O., Die Hesaya-Vestfälle Hattis, Dotsumentum Asiac Minoris, Wiesbaden, 1988, Տ. 59-75), սակայն վերցնականացես հարցը չի պարփակ, և պայմանագրի այլ նաևնամբ մնացել է շրմաքրված:

<sup>96</sup> KUB XXVI 39 I 32 (Forrer E., Սայա-Ազր, Տ. 6).

<sup>97</sup> KUB XXVI 62 IV 34 (Քոյայ Ա. Նոր տեղամասուոց խեթական մնացածը տերություն, ՄԱՊՍԸԾ, 2003, XXII, էջ 256).

<sup>98</sup> Քոյայ Ա., Հայկական լիոնաշխարի տեղամասուոց, էջ 37:

Խնչափս երևոմ է, Արխիտուան գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, որտեղ էլ ծավալվել են «Պահսխութացի Միտայի» տեքտում հիշատակված իրադարձությունները:

#### 4. Արմիյա (<sup>ՈՐՈՇ</sup>Ար-ու-յա)

Հայասայի Արմիյա քաղաքը նույնական հիշատակվել է խեթահայասական վերոիշյալ պայմանագրի վերջում՝ Հայասայի աստվածներից ցուցակում, որտեղ հիշատակվել է «Արմիյա քաղաքի Ամսպրոսի աստվածը» (<sup>ՈՐՈՇ</sup>Ար-ու-յա)<sup>102</sup>: Արմիյա քաղաքը Հայասա-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկն էր: Ե. Հոռերն այն համեմատել է Ք.ա. 714թ. Սարգոնյան տարեգրությունում հիշատակված Արմարիլի նահանգի Արմիյա քաղաքի հետ, կամ ինն հայոց Ալեքս քաղաքի հետ՝ «Լանա լճի հյուսիսային ափին»<sup>103</sup>: Ըստ Գ. Զահեռկյանի՝ այս տեղամիկան հիմքում ընդհանուր փոքրասիական Ար-իիմքն է, իսկ ըստ Վ. Խոշաբրյանի՝ Արմիյա բնակավայրը Սպերի Ալենում է, որի մեջ առկա է հայերենի հիդավարական ծագմամբ առն «վայրի խոյ» արմատը<sup>104</sup>:

Ալյուրմերի՝ ներկայումս հայտնի տվյալները հնարավորություն չեն ընձեռում Արմիյայի համար որևէ հատուկ տեղադրություն առաջարկել:

#### 5. Գազու[...] (<sup>ՈՐՈՇ</sup>Ga-zu-ն(?)])

Այս քաղաքը նույնական հիշատակվել է վերոիշյալ խեթահայասական պայմանագրում: Այն Հայասա-Ազգիում ՌԱՆԱ-Ա-ՏԱ-ԱՏ (<sup>ՈՐՈՇ</sup>Ga-zu-ն(-)կ-լ)՝<sup>105</sup>:

Ըստ Գ. Զահեռկյանի՝ Գազու քաղաքի անվանումը կարելի է համեմատել կամկական Գազզար (Gazzara) քաղաքի հետ:

<sup>102</sup> KUB XXVI 39 I 29 (Forrer E., Խայտա-Ազզ, Տ. 6).

<sup>103</sup> Forrer E., Խայտա-Ազզ, Տ. 8.

<sup>104</sup> Զահեռկյան Գ., Հայոց լույսի պատմություն. Երևան, 1987, էջ 339; Խոշաբրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում. էջ 44:

<sup>105</sup> KUB XXVI 39 I 31 (Forrer E., Խայտա-Ազզ, Տ. 6).

կամ Պլնտոսի Գազզիուրա ամբոցի հետ (Խոռոմեական ժամանակաշրջանում) <sup>103</sup>; և Մանանդյանի կարծիքով Գազու քաղաքն իր անվանք և տեղադրությամբ համապատասխանել է ներկայիս Հազոր քնակավայրին (Քիրլիսից 60կմ հայրավարձությանը) <sup>104</sup>. «Լ հաշատորյանը հավանական է համարել, որ այս քաղաքը հայերեն կոչվել է Գազ և իր հիմքում ունեցել է հայերեն գազ՝ «արցան» արժատը և այդպես է կոչվել տեղի քնական պաշտպանվածության հետևանքով» <sup>105</sup>:

Սակայն քնակավայրի անոնք տրված է թերի, քանզի բայի վերջում տրված սեպանշանը (Կամ սեպանշանները) չի ընթերցվում, և դժվար է կարծիք կազմել, թե ինչպես է այն հնչել և արդյոք ունեցել է հայերեն քառարմատ: Առավել նա դժվար է պնդել, որ քաղաքը այդպես է կոչվել քնական պաշտպանվածության պատճառով:

Նյութի սոլորյունն ու քաղաքանվան այս նօալից հիշատակությունը քուլ չեն տալիս առաջարկելու հույս տնկալուրյուն:

## 6. Գասմիյախսա (<sup>ԱՐԿ</sup> Ga-ač-mi-ya-ხա)

Հայաստ-Ազգի պաշտամունքային կենարուներից Գասմիյախսան նշված է միայն Հայաստայի աստվածների ցողակյուն: Այս համելիս է գալիս՝ որպես [...] իս-իս-ս առածո պաշտամունքի վայր <sup>106</sup>: Գասմիյախսայի հայաստան այս աստծո անունը պահպանվել են միայն վերջին երեք սեպանշանները (-իս-իս-ս) <sup>107</sup>:

<sup>103</sup> ИЛР, 1, с. 46, (նոյն 2).

<sup>104</sup> Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 103.

<sup>105</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը միա ԽV-ԽVII դարերուն, էջ 43:

<sup>106</sup> KUB XXVI 39.1.34 (Foerster E., Այալեա-Ազե, Տ. 6). Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս քաղաքը համարածառափական է Կասման քնակավայրին Տիգրիդ և Շինվանի միջև՝ Զիաքարայի մոտ (Մարտիրոսյան Ն., Պրատուռներ Փոքրասիսկան անուններ մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 98):

<sup>107</sup> Ըստ Գ. Ղափանցյանի՝ այս աստծո անունը պատր է ինչեր՝ որպես Կարիստիւն (Օսման Կարլիսխան) կամ ևս արաբական մասի ափելացման դիցության (ИЛР, 1, с. 95):

Աղբյորների սակավ տվյալները հնարավորություն չեն ընձեռում Գամմիյախոա քաղաքի համար առաջարկել որևէ տեղադրություն:

7. Դուգգամա (<sup>ՀՐՄ</sup>Du-ug-ga-am-ma-na, <sup>ԼԱՒ</sup>Du-ug-ga-ma, <sup>ՄՐՄ</sup>Du-ug-ga-a-ma, <sup>ՄՐՄ</sup>Du-uq-qas-am-ma, <sup>ՄՐՄ</sup>Du-uk-kam-ma-an, <sup>ՄՐՄ</sup>Du-uk-ka-ma-an, <sup>ՄՐՄ</sup>Du-uk-ka-am-ma-an)<sup>108</sup>

Հայաստ-Ազգի այս ճշանակալի քաղաքը հիշատակվել է «Պախսուսվացի Միտույի» տեքստում, Մուրսիլիս Ռ-ի տարեգրություններում, Խարբուխիս III-ի «Խնճակենաազգությունում», ինչպես նաև խերահայասկան պայմանագրի տեքստում, որտեղ տրվել են Հայաստայի պաշտամունքային կենտրոնները:

«Պախսուսվացի Միտույի» տեքստում Դուգգամայից Ախսին հանդիս է գալիս՝ որպես Պախսուսվացի հետագա հակատարմության երաշխավոր: Այսպիսով, Դուգգաման՝ որպես քաղաք, գոյություն է ունեցել դեռևս Ալոնվանդաս I-ի օրոք (Ք.ա. XIV դարի 1 կես) և խերերի կողմից դիտվել է՝ որպես դաշնակից քաղաք<sup>109</sup>:

Մուրսիլիս Ռ-ն իր տարեգրություններում նշել է, որ արշավելով դեսի Հայաստան՝ գրավել է Արիասա և Դուգգամա քաղաքները: Խերական գործը գրավել է Դուգգաման Արիասան նվաճելոց հետո, ուստի, ինչպես վերը նշվեց, այս քաղաքները մոտ են գտնվել իրար<sup>110</sup>:

Հայաստայի աստվածների շարքում հիշատակվում է «Դուգգամայի Թալրախի աստված» (<sup>Ի</sup>Ba-al-ta-ik <sup>ՄՐՄ</sup>Du-ug-ga-am-ma-na)<sup>111</sup>: Այս վկայության հիմնան վրա դժվար չէ ներադրել, որ Դուգգաման հանդիսացել է Հայաստայի ոչ միայն քաղաքական, այլ նաև պաշտամունքային կենտրոններից մեկը:

<sup>108</sup> RGTC, VI, S. 435-436.

<sup>109</sup> Ըստան Ա. Նոր Այուքիր Խերավան տերության և Հայեական լիոնաշխարհի երեսների գոյնարարակությունների մասին, էջ 240-242:

<sup>110</sup> Götze A., Die Annalen des Mardulis, S. 132-137.

<sup>111</sup> KUB XXVI 39 1 32-33 (Forster U., Այասա-Ազզ, S. 6).

Մասնագիտական գրականության մեջ փորձ է արվել տեղուածքների Նուզարական բաղադր. այն համեմատվել է Փոքր Հայքի ամսագիտական գրականության հետ<sup>112</sup>. Վանա լին ավիին գտնվող Նատվամի հետ<sup>113</sup>. Մասնագիտական գրականության մեջ ամսագիտական գրականության հետ<sup>114</sup>. Ամսագիտական գրականության մեջ ամսագիտական գրականության հետ<sup>115</sup>. Ամսագիտական գրականության մեջ ամսագիտական գրականության հետ<sup>116</sup>. Ամսագիտական գրականության մեջ ամսագիտական գրականության հետ<sup>117</sup>. Ամսագիտական գրականության մեջ ամսագիտական գրականության հետ<sup>118</sup>.

Հաշվի առնելով այն, որ Նուզարական խերական տերսունքամ հիշատակվել է ավելի վաղ, քան Հայաստան, կարծի է հերացըն, որ այն սկզբնապես առանձին բաղադրական միավոր է համոյիւսցել, որը կապեր է ունեցել Լեռնաչխարին մյուս նրբունքի և Խարբերի հետ: Հետագայում այն կամ միավորվել կամ ընդունվել է հզորացած Հայաստան-Ազգի կազմում:

Նշենք, որ Նուզարական տեղադրությունը պետք է պայմանագրված լինի Արխապայի տեղադրությամբ:

### 8. Իյամիննա (ԿԱՍ-ԵԱ-Թ-Ա-Պ)

Այս բաղադրը նշվել է Հայաստանի նորա սահմանային բաղադրի մոտ գտնվող բնակավայրերի ցուցակում<sup>119</sup>. Սակայն մասնագիտների մի մասը հակված է տերսունք հիշատակված նորա բաղադրը նույնացնել Հաշուային Կիլիլիայի համանուն բաղադրի

<sup>112</sup> Աղբաց Ն., Հայաստանի պատմության, 19-45. Երևան-Ս., Հայ ժողովով կազմակերպած ընթացքը, «ԱՀ», 1970, թիվ 2, էջ 31:

<sup>113</sup> Foerster E., Այասե-Ազը, Տ. 19-20.

<sup>114</sup> Քառումին Ե., Խախատեալիսկան Հայաստան, Պէյլոյ, 1950, էջ 104:

<sup>115</sup> Խաշապարհն, Ա., Հայաստանց ք.թ. XV-VII դարերում, էջ 35, 44:

<sup>116</sup> Բոյան Ա., Հայեալիս թօննաշաբարի տեղականությունը, էջ 99:

<sup>117</sup> KUB ԽԽVI 29+KUB ԽԽI 55 (Բոյան Ա., Հայեալիս թօննաշաբարի տեղականությունը, էջ 58):

հետ (տես Արա քաղաքի մասին հաստվածք): Ցուցակում քացի Իյաթիմնայից հիշատակվել են նաև <sup>URU</sup>Ukšu, [....]-u, [?]-x-x-ri-u, [....]-uš]ata, [....]-mitta, <sup>URU</sup>Huddu, [....]-i]sta, <sup>URU</sup>Lalatta բնակավայրերը<sup>118</sup>:

Արային մոտ գտնվելը հնարավորություն է զննելում այս բնակավայրը տեղորոշել Կումմախայից արևելք՝ եետագայի Եկեղյաց գավառում:

#### 9. Ինգալավա (<sup>URU</sup>In-ga-la-wa)

Ինգալավա քաղաքը հիշատակվում է միայն Մորսիլիս II-ի «Տասնամյա տարեգուրյունում»: Տասներորդ տարվա տարեգուրյան մնջ նկարագրվել է արշավանքը դեպի Հայաստ-Ազգի: Ծարժվելով դեպի Ազգի Մորսիլիս II-ն իր քանակի գորատնեն անցկացրել է Ինգալավա քաղաքում.

57. ma-al-ի-ա-ա-մա ի-ա-մե-է-ի-ա-ա-za ki-ša-at nu *I-NA* KUR  
Արև Աչ-ցի

58. da-a-ա-ա KAS-ši նամ-մա pa-a-սո-ու-za *I-NA* <sup>URU</sup>In-ga-la-wa

59. *A-NA* ÉRIN <sup>MES</sup> ANSU.KUR.RA <sup>URU</sup> ն-ա-ս-տար ի-յա-սո-սո...<sup>119</sup>

«Հենց որ զարոնք քացվեց, դեպի Ազգի երկիր երկրորդ անգամ ճանապարհ բնկա և Ինգալավա քաղաքում հնտևազորի և մարտակառքերի գորատն անցկացրի...»:

Այնուհետև խեթական արքան գրավել է Հայաստ-Ազգի Արիստա և Դուզզամա քաղաքները:

Պատմագրության մնջ կարծիք է հայտնիլի, որ Ինգալավան Հայաստ-Ազգի քաղաքներից մեկն է եղել և գտնվել է հին հայկական Անգեղ տուն գավառում: Առաջարկվել են նաև այլ տե-

<sup>118</sup> Кампенхайбер А., Keilschrifttexte aus Bogazkoy (KBo XVI), Orientalia, 1970, № 39, 4, S. 557. Թույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղաբնիւթեան, էջ 116-117:

<sup>119</sup> KBo IV 4 III 57-59+2Bo TU 58 (Götze A., Die Annalen des Mursilis, S. 130-131).

Պայմանագրությունները: Ե. Ֆոռերին Ինգալավան փետրիկ է Անգլեղ տուն զավարի Անգլ ամրոցի տեղում, սակայն նշել է, որ այն չի գտնվել Հայաստանի կազմում շրացանելով նաև, որ Ինգալավան կարող էր գտնվել նաև Վերին Եփրատի հովտում<sup>120</sup>: Գ. Ղափանցյանց հմարավոր է համարում, որ Ինգալավան մինչև արշավանքի սկիզբն արդին Հայաստան-Ազգից գրավվել էր<sup>121</sup>: Զ Գարստանցի և Օ. Գրնիի աշխատուրյան մեջ Ինգալավան տեղորոշվել է Գայլ (Լյուկոս) գետի հովտում գտնվող անտիկ Մեծայուղա քաղաքի տեղում<sup>122</sup>: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Ինգալավան Ծոփիշ Անգլեղ տեղանունն է (Խետագայի Ալի)<sup>123</sup>: Ըստ Ս. Երեմյանի՝ Հայաստանի Ինգալավան-Թարխիզամա քաղաքը գտնվել է Խետագայի Թորդանի տեղում Ելեղյաց զավառում<sup>124</sup>: Ն. Աղոնցց Ինգալավան քաղաքը փետրիկ է Կումնախա տաճող ուղիների վրա Եփրատի արևմտյան ափին<sup>125</sup>: Հ. Մանանցյանը համաձայնել է Ե. Ֆոռերի այն տեսակետուի հետ, որ Ինգալավան Խետագայի Ինգիլեննին է՝ ինմ հայկական Անգլեղ տունը, ներկայուն Էգիպտ: Այդ քաղաքն, նաև Հ. Մանանցյանը, Հայաստան-Ազգիի բնակավայրերից է եղել և նվաճվել է խերերի կողմից<sup>126</sup>: Վ. Խաչատրյանն Ինգալավան համեմատել է Նորդիսկ ստորին հովիդ հայկական Նիզալ զավարի համանուն կենտրոնի հետ՝ գտնելով, որ հայաստան այդ քաղաքի անոնց կազմիած է հայերենի հնդեվրոպական նիգ՝ «որան ետևի սողմակ», և ալ-ը՝ «փոքր, խորունկ տեր», արձատներից: Խերերն, ըստ նրա, այդ անվան «ի» հիշյունը դրափոխել են՝ ավելացնելով իրենց լեզվի -awa(r) ածանցը<sup>127</sup>: Ըստ Ա. Քոս-

<sup>120</sup> Forrer E., Հայուն-Ազգ, Տ. 13-14.

<sup>121</sup> ԱլԲ, Տ. օ. 54.

<sup>122</sup> Garstang J., Gurney O., *The Geography of the Hittite Empire*, London, 1959, p. 39.

<sup>123</sup> Մարտիրոսյան Ն., «Պրագումներ փոքրասիական անոներու մասին», էջ 90-91:

<sup>124</sup> Երեմյան Ս., «Հայ ժողովով կազմավորված քարագը», էջ 31:

<sup>125</sup> Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 45:

<sup>126</sup> Մանուկյան Յ., «Ո ուշուրության մասին պատմություններ»: Հայաստանի պատմության մասին, էջ 99:

<sup>127</sup> Խաչատրյան Վ., Հայաստան Ա.թ.ա. XV-XVII դարերուն, էջ 34, 42-43:

յանի՝ Ինգալավան կարող էր գտնվել կամ Հայաստան սահմանակից տարածքում, կամ հենց Հայաստան սահմանամերձ որևէ շրջանում<sup>128</sup>.

Հարկ է նշել, որ Մուրսիլիսի տարիզգրությունում չի եխչառակվել, որ նա անցել է Եփրատ գետը և առաջացել Իսուվայի տարածք, եթե ընդունենք, որ Ինգալավան գտնվել է Անգեղ տուն զավառում։ Տեսանից կարելի է եզրահանգել, որ բաղարք, ամենայն հավանականությամբ, գտնվել է Խայասա-Խերական սահմանային գոտում։

Ըստ այդմ բաղարքի տեսապատճենում կարելի է առաջարկել Աքրիմ Եփրատի ավազանում, որտեղից ճանապարհ էր բացվում դեպի Հայաստ-Ազգի պետության խորքերը։

#### 10. Լալատոտա (<sup>URU</sup>La-la-at-la)

Այս տեղանունը հիշատակվել է Հայաստանի սահմանամերձ Ուրա քաղաքի մոտ գտնվող բնակավայրերի ցուցակում<sup>129</sup>. Ուրան Հայաստանի տարածքում գտնվող կուրլուր վարչապարական միավորներից մեկն էր։ Անօհապես սահմանակից լինելով Խերական տարածքներին՝ այն տեղորոշվել է հետագայի Եկեղյաց զավաոյի տարածքում, որտեղ և գտնվել է Լալատոտա բնակավայրը։

#### 11. Լախս (<sup>HUR.SAG</sup>La-խ-a-a)<sup>130</sup>

Լախս լեռնանոնց համեմ է զայխս խերական արքա Սուսպիլուլումա 1-ի արձանագրությունում։

22. ... ar-ḥa wa-ar-nu]-ut <sup>URU</sup>Zu-uḥ-ḥa-pa-an-ma-kān URU-an  
23. [lu-u-ma-an-da-an ar-ḥa] wa-ar-nu-ut NAM.RA<sup>MES</sup>-ma-kān  
24. .... J-NJ4 <sup>URU</sup>Ha-ya-ḥa i-ya-at-ta-at  
25. .... ḥa-at na-an IS-[T]U <sup>MES.SAG</sup>La-խ-a-a

<sup>128</sup> Քայրան Ա., Հայկական լիոնաշխարհի տեղանունները, էջ 110.

<sup>129</sup> KUB XXVI 29.6 (Ձևայան Ա., Հայքական լիոնաշխարհի տեղանունները, էջ 69, 117).

<sup>130</sup> Gonnez H., Les montagnes d'Asie Mineure d'après les textes Hitites, 1968, p. 116.

“...այրեց Ծովիսապա քաղաքը, ամբողջովին քաղաքն այրեց, փախատականները... դեսպի Հայաստա գնացին... և մրան Լախա լեռներից...»<sup>131</sup>:

Խեթական քանակն արշավանքի ժամանակ ներխուժել էր Ե-սուլա, այնուհետև ուազմերը շարունակելով հասել էր Ծովիսապա երկրը: Այս նվաճելոց հետո խեթական արքան շարժվել էր դեսպի Հայաստա:

Ծովիսապան Խոռվայի հարեւանությամբ էր և սահմանակից էր նաև Հայաստային, որտեղ և գտնվել են Լախա լեռները (կամ լեռ): Հավանաբար, այս լեռները Խոռվայից հյուսիս-արևելք են գտնվել: Վ. Խաչատրյանը կարծիք է հայտնել, որ Լախա լեռները Եներկային Թյուրակնյա կամ Հայկական Պար լեռներն են<sup>132</sup>, որի հետ դժվար է շնամաձայնել, քանզի արշավանքի երրորդին բույլ է տալիս այբափախ ներահանգման գալ: Այդ տեղորոշմամբ որոշակիորեն հստակեցվում է նաև Հայաստա-Ազգի տարածվելը մինչև Հայկական լեռնաշխարհի այդ հատվածը:

## 12. Լախիրիսիպա (<sup>ԱՐՄ</sup> La-hi-ir-hi-la)

Այս քաղաքի մասին իշխատակուրյուն է պահպանվել և KUB XXVI 39 լ տեղայում, որտեղ Լախիրիսիպան ներկայացվել է՝ որպես [...]ա/տ]անուս աստծո պաշտամունքի վայր (լ<sup>թ</sup>...-Ց/Յա-ան-ու-սէ սրմ **La-hi-ir-hi-la**)<sup>133</sup>: Հայաստական բնակավայրերի շարունական նշվել է երրորդը և հանդիսացել է Հայաստա-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը:

<sup>131</sup> KUB XXXIV 23 և 25 (Götterbock H., The Deeds of Supplication as Told by his Son, Mesopotamia II, 3, p. 83).

<sup>132</sup> Խանդրան Բ., Восточные провинции Хеттской империи, с. 141. Դույնի.

Հայաստանի մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 58:

<sup>133</sup> KUB XXVI 39 և 28 (Forrer E., Այսա-Ազգ, Տ. 6), «Է կաշապյանն այս պատճեն անոնք վիրականներն է որպես Ու-Շի-Ցլ-Ա-Ա-Ա (Խանդրան Բ., Յօհոնի պատճենների համապատասխան պատճենների շարքում պահպանված ամսաքանակի և Հախիրիսիպա բնակավայրի վայրը)» (ԽՍՀՀ ԱՀ Արքայի պատճենների հայտը (ԽԱՀԱ, Լ. 2, 60 ( կողմէ 1)):

Դժվար է Լախիրիսիլա բաղարի համար որևէ հասուն տեղադրություն առաջարկել, բանի որ նյութը շատ սույ է, և որևէ այլ տեքստում այս բաղարանունը չի հիշատակվել: Որևէ կովան չկա տեղադրության համար:

#### 13. Լիտուա (<sup>ԱՐԱ</sup>Li-it-ta)<sup>134</sup>

Հիշատակվել է Խերական տերության հյուսիս-արևմելյան շրջանից և Վերիմեծվելուոյն երկընթիր առանձին բնակավայրերից հափառագրված պայմանագրային զինծառայության զինվորների ցուցակի տեքստում: «Պայմանագրի տեքստում ներկայացվել են եինզ տեղանուններ հետևյալ հաջորդականությամբ՝ <sup>ԱՐԱ</sup>Ha-x-[...], <sup>ԱՐԱ</sup>Sa-a-la, <sup>ԱՐԱ</sup>E-er-ի-ta, <sup>ԱՐԱ</sup>Li-it-ta, <sup>ԱՐԱ</sup>Te-mi-ya: Լիտուա բաղարը ցուցակում տրվել է Հայաստանի Արխիտուա (տեքստում տրվել է Երիսիտուա մասը) և Տեմիլյա (որը քերևս, ուսուն է, ինչ այլ տեքստերից հայտնի Տեմիլյան, ժամանակակից Զիմինը Երգմկայից ըիշ Խարապացնելով) բաղարների միջև<sup>135</sup>: Ա. Շոսյանն այս բաղարը հնարյագոր է համարում տեղորոշել հեռնական առցորդներում վկայված Օլոօւարիզա (տարբերություններից մեկը՝ Lyatararizos, գտնվել է Նիկոպիլիսից Սատուղ ճամապարիի վրա) բնակավայրի տեղում<sup>136</sup>:

Լիտուա բաղարն, ըստ երևոյթին, գտնվել է Վերին Եփրատի սկզբանում, ներկայիս Զիմին բաղարից արևելք՝ Հայաստ-Ազգի սահմանային արևմտյան նաստում:

#### 14. Խապիմանա (<sup>ԱՐԱ</sup>Ha-ii-та-на-ա)

Հայաստան այս բաղարը հիշատակվում է Մուրսիլիսի տարիեկորյունում: Իր արշավանքի ընթացքում գրավվելով Հայաստ-Ազգի Արիանա և Շուլգանա բաղարները՝ Մուրսիլս Ա-ը վերադառնում է Խարբի, սակայն հաջորդ տարի՝ իր բազավորության

<sup>134</sup> Ercem H., Cografya Adaları Dizisi, Ankara, 1973, s. 87, RGTC, VI, S. 249.

<sup>135</sup> KUB XXVI 62 IV 35 (Քոյազ Ա, Նոր տեղանուններ խերական մակագիր տեքստում, էջ 256).

<sup>136</sup> Քոյազ Ա, Խերական KUB XXVI 62 մակագիր տեքստը և Անդրեյ Եփրատոյի ամեազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԾ, 2004, XXIII, էջ 276.

տասնմեկերորդ տարում, նա կրկին արշավում է Հայաստ այն-  
տեղ խերական գերիշխանությունն անքապնդիլու համար: Հա-  
յասայի բնակչութերը խերական առքային ընթառաց են ուղար-  
կում Խալիմանա քաղաքի Մուտսիթի: Նրան հաջողվում է բա-  
նակցությունների միջոցով բոյլ շատ, որպեսզի խերական ար-  
քան կրկին ներխուժի Հայաստ-Ազգի<sup>137</sup>.

Ն. Աղոնցն այս քաղաքանունը համեմատել է Ծափրի  
Խոլիմբանուն բնակավայրի հետ<sup>138</sup>: Նման տեղադրությունը Ծափ-  
րում հեճանում է արտաքին որոշ նմանության վրա, իմայ դժվարեց-  
նուել է այդ տեսակետի հիմնավորումը: Գ. Վափամուշը կար-  
ծիր է հայունել, որ Մուտսիթ կարող էր հանդիս զայ նաև՝ որպես  
Հայաստ-Ազգի քաղաքոր, որը փոխարինել չը խերերից պար-  
ուություն կրած Աննիյային<sup>139</sup>: Եթե այդ կարծիքը ճիշտ է, ապա  
կարելի է ենթադրել, որ Խալիմանան այդ ժամանակ հանդիսա-  
ցել է Հայաստ-Ազգի քաղաքական կենտրոնը:

Սակայն մյուրի սղությունը բոյլ չի տալիս առաջարկել որևէ  
կոնկրետ տեղադրություն Խալիմանա քաղաքի համար:

### 15. Խարսանասա (ՀԱՅԱՀԱՐ-ՏԱ-ԼԱ-ԱՅ-ՀԱ-ԱՌ)

Խարսանասա քաղաքանունը իիշատակվել է երկու անգամ՝  
ինվենտարային և գուշակային խերական տերստերում: Ինվեն-  
տարային տերստում իիշատակվել է խառաւ կոչվող սրբավայ-  
րում պահպող <sup>ԱՐԿՈՒ</sup> Խարշալաձի քաղաքի Անսպրոպի աստվծո արծանը,  
իսկ գուշակային տերստի նպատակն է եղել պարզել Հայաստ-  
Ազգի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի  
ընթացքը<sup>140</sup>: Հնարավոր է նաև, որ <sup>ԱՐԿՈՒ</sup> ՀԱՐ-ՏԱ-ԱՅ-ՅԻ-Ա նույնա-  
կան չէ <sup>ՀԱՅԱՀԱՐ-ՏԱ-ԼԱ-ԱՅ-ՀԱ-ԱՌ</sup> բնակավայրի հետ<sup>141</sup>.

<sup>137</sup> KBo IV 4 IV (Götze A., Die Annalen des Murzili, S. 138-141).

<sup>138</sup> Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 44.

<sup>139</sup> ИЛР, 1, с. 74.

<sup>140</sup> RGTC, VI, S. 90. RGTC, VII/2, S. 52 (ձևաչափ Ա., Նոր տեղանուններ  
խերական սեպացիր տերստերում, էջ 254-255).

<sup>141</sup> Պույտ Ա. Հայկական թագավորություններումները, էջ 54.

Այս բաղարք գտնվել է Հայաստանի սահմանային Ռուա բաղարի մոտ, այսինքն՝ Ազգի Խաթրիին սահմանակից շրջանում:

### 16. Խուդը (ՄՅՄՀս-սծ-սւ)

Խերական տերատում հիշատակվել է՝ որպես Ռուա բաղարի ծոտ գտնվող բնակավայրերից մեկը: Տերստն իրենից ներկացնում է «միջին խերական փուլի» (Զ.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) պայմանագիր՝ կերպած Ռուա բաղարի հետ<sup>142</sup>: Ամենայն հավանականությամբ, գտնվել է Հայաստան-Ազգի արևմտյան՝ սահմանամերձ շրջանում:

### 17. Կամ... (ՄՅՄԿամ [...] )

Այս բաղարամունք հանդիպում է հայաստան աստվածների ցուցակում: Այն հանդիսացել է Տարումու աստծո պաշտամունքի Վայրը (Պա-ա-ռո-ս-ոս ՄՅՄԿամ-[...])<sup>143</sup>: Ըստաբի ամփան ծեց պակասում են մի քանի սեպանշաններ, ինչը դժվարություն է ստեղծում տեղանունն ամբողջովին վերականգնելու համար:

Այս բաղարը նույնագլուխ է խերական սկզբնադրյութերից հայունի Կումմախայի (KUR ՄՅՄԿամ) հետագայի Կամախի հետ: Ն. Աղոնց այս թերի տեղանունը վերականգնել է Կամ(սի)՝<sup>144</sup> Հայու Ն. Մարտիրոսյանի խերական արձանագրություններում պահպանված Կոմմախան Ետրկայիս Թեմախն է պատճական Դայանաղյաց գավառի Կամախը: Նա համարել է, որ այդ բաղարը համբիտացել է Հայաստան-Ազգի սահմանամերձ և զիհավոր բաղարներից մեկը<sup>145</sup>: Հ. Մանանդյանն այս տեղանունը համեմատել է և վերատառ Կամախի հետ, սակայն նշել է նաև Բիբրյանց Տիկի հեռու գտնվող Ժամանակակից Կամախ գյուղը՝ որպես այդ բնակավայրի հավանական տեղադրություններից մեկը<sup>146</sup>:

<sup>142</sup> KUB XXVI 29+KUB XXXI 55 (Քոյսյան Ա., ճշգ. աշխ., էջ 58, 117).

<sup>143</sup> KUB XXVI 39.1.29 (Foster E., Hajaçaz-Azzi, S. 6).

<sup>144</sup> Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 46:

<sup>145</sup> Մարտիրոսյան Ն., Պրազմուններ փոքրային անոններու մասին, էջ 94-95:

<sup>146</sup> Մանանդ Յ., Օ Անկուրով շորով որովուած պատմությունների պատմությունների մասին:

Երեւանի Կառ [...] քաղաքանունը հմարավիր է վերականգնել՝ պրափս ՄԱՐՈՒ Կոմտայա, ասքս կարծի է ենթացը, որ Կումմախս քաղաքը պայմանագրի կերպան պահին զունվել է Հայաստանի կազմում:

Դեռևս Թուղթալիյաս III-ի հայաստան արշավանքի բնագրում Կումմախսայի մոտ հանդիպել է ին խերական և հայական զորքեր:

42. ու տա-ահ-իա-առ *A-BI A-BI-YA I-NA KUR* ՄԱՐՈՒ Հա[-յա-ձա ձ]-  
ար[-աՏ(?)]

43. ու-ս-է "Kar(?) -առ-ն-ի՛ ԼՈՂԱԼ ԿՈՐ ՄԱՐՈՒ Հա-յա-ձա[...]

44. (*SA-PAJL(?)*) ՄԱՐՈՒ Կոմ-մա-իա զա-ահ-ի-չ-յա[...]

«Երբ պապս Հայաստ երկիր նկալ, մրան հարանքնի Հայա-  
սայի արքան ... Կումմախսայի տակ ճակատամարտ...»<sup>147</sup>

Արձանագրությունը կազմել է տվել Մուրսիլիս II-ը՝ նշելով, որ  
իր պապը՝ Թուղթալիյաս III-ը, շարժվել է Հայաստ և այնուհետ  
Կումմախս քաղաքի մոտ հանդիպել է Հայաստայի Կարանքի ար-  
քայի զորքերի հետ և ճակատամարտ տվել: Հետագայում քաղա-  
քը նորից անցել է խերական գերիշխանության ներք և նշվել է՝  
որպես առանձին քաղաքական միավոր»<sup>148</sup>:

Սակայն այս տեղանկան ընթերցումը և առաջարկված տեղու-  
թոշումները խիստ պայմանական են:

18. Հայաստ (KUR ՄԱՐՈՒ Հա-յա-ձ, KUR ՄԱՐՈՒ Հա-ա-յա-ձ, KUR ՄԱՐՈՒ Հա-  
յա-ձ-ձ, ՄԱՐՈՒ Հա-ա-յա-ձ, ՄԱՐՈՒ Հա-յա-ձ-ձ, ՄԱՐՈՒ Հա-ա-յա-ձ-ան,  
ՄԱՐՈՒ Հա-յա-ձ-ան, ՄԱՐՈՒ Հա-յա-ձ, ՄԱՐՈՒ Հա-յա-ձ-ան, ՄԱՐՈՒ Հա-ի-յա-ձ)<sup>149</sup>

ՃՐԵՆԻ Արմենիա, շ. 76.

<sup>147</sup> Güterbock H., The Deeds of Suppilaliuma as Told by his Son, Mursili II. JCS, 1956, № 10, 2, p. 66.

<sup>148</sup> Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B. C.), p. 75. Թուղթալ Ա. Անդրամանից խերական դրաւշքանման, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 225-241.

<sup>149</sup> RGTC, VI, 5, 63-64. RGTC, VII/2, 5, 22

Բ.ա. XIV-XIII դր. խեթական սկզբնադրյութերում հիշատակվել է Հայաստ երկիրը, որը երբեմն հանդիս է զայխ Ազգի անվանք. Արձանագրություններում Հայաստ գրվել է և՝ որպես երկրանուն. և՝ որպես քաղաքանուն: Խեթական սեպագիր ադրյութերներում URU «փաղաք, քաղաքավայր» շումերերն օգտագիտագլուխ որպես և նաև որոշ երկրների անունների առօնից. մինչդեռ այդ երկրներուն հաճանուն քաղաքներ չեն եղել: Սակայն, ամենայն հայանականությամբ, Հայաստ-Ազգիում Հայաստ անվամբ քաղաք գոյություն է ունեցել և հանդիսացել է քաղաքության քաղաքական և պաշտամունքային կենտրոն:

Խեթական սեպագիր տեղայտերում տվյալներ չկան այն ժամանք, որ խեթական արքաներից որևէ մեկի օրոք Հայաստ քաղաք նվաճվել է, չնայած նրանք քաղմից մերինութեան և Հայեկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, ինչը վկայում է այն ժամանք, որ քաղաքը հեռու է մնացել խեթական զորքերի արշավանքների երթուղիներից: Ամենայն հավանականությամբ, երկրի մայրաքաղաքը գտնվել է առավել անվտանգ և անհասանելի արևելյան շրջաններում: Խեթահայաստական պայմանագրի վերջում տրված աստվածների ցուցակում հայաստական քաղաքների շարքում առաջինը հիշատակվել է Հայաստ քաղաքը՝ որպես երկրի գլխավոր աստվածության պաշտամունքի կենտրոն<sup>150</sup>.

Հայաստ տեղամունք մասնագետների մեծ մասի կարծիքով հայ ցեղանվան վկայությունն է Բ.ա. II հազարամյակում: Առաջին անգամ Ն. Մարտիրոսյանը հայտնեց այն կարծիքը, որ Հայաստան հայ ազգի հմագույն հայրենիքը է եղել, իսկ Հայաստայի բնակչիները Խաչերի մայնիներն են հանդիսացել: Նա Աշնչ է նաև, որ Հայաստ երկրանունը (իր մոտ տրված է Խայաշա ձևով) կազմված է Հայա դիցանունից և «ուս» խեթական մասնիկից: Այսինքն՝ Հայաստ անունն, ըստ նրա, նշանակում է Հայայի երկիր<sup>151</sup>. Կ. Ռոբ,

<sup>150</sup> KUB XXVI 39 I 26 (Forster E., Արագա-Աշո, Տ. 6).

<sup>151</sup> Առդաբանական Ն., Հայերէնի բացարկությունը Խեթիշերէնի հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453: Նոյնին, «Գիշամիշ» ոյուցագմերքարյունը. ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 79 (անու կողմէ 1):

այնուինուն ոլ. Կրնչմերը նույնպես ցույց են տվել, որ Հայաստանի երկիրը նույնն է, ինչ որ Հայքը կամ Հայաստանը<sup>152</sup>. Գ. Շահվանցյանը Խայեր (Բարձրություն հարավ-արևմուտք) բնակավայրի անոնքը բխեցնում է Հայաստան տեղանունից<sup>153</sup>. Ս. Եղիշյանը Թիր-Հայաստան բաղադրք տեղադրել է ինը հայկական Թիր ավանի տեղում (Երզմիւայից ոչ հեռու)<sup>154</sup>: Հ. Մանանյանը նշել է, որ Երկիրը Հայաստան է կոչվել իր անյալաքաղաքի անվանք (Հայաստան), որը Սարգսն Ա-ի արձանագրությունում հիշատակված է եղել Ռուսական ճեղով և գտնվել է Վանա լճի հյուսիսային ափին<sup>155</sup>. Վ. Խաչատրյանն ավելի հիմնավոր կերպով պացանցել է, որ Հայաստան տեղանվան հիմքում հայ Երմոնին է ընկած: Ըստ նրա՝ Խերերը օտար արձատին, որը հարեւան ժողովովի ինքնանունն է, ավելացրել են իրենց ածանցը (-ռձա)<sup>156</sup>.

Մենք համամիտ ենք այս կարծիքի հետ և գտնում ենք, որ խերական Խա-յա-ձա տեղանունը ծագում է տեղական հայ ցեղանունից:

#### 19. Պախսխոտնյա (ԱՐԱ-ակ-իս-ս-տե-յա)

Այս բնակավայրը նույնպես հիշատակվել է KUB XXVI 39 Ի տեղանուն, որտեղ տրվել է հայաստան աստվածների ցուցակն իրենց պաշտամունքի կենտրոններով: Ըստ այդ ցուցակի՝ Պախսխոտեյան հանդիսացել է Հայաստան-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը, որտեղ պաշտել են Ամարտովի աստծոն (ԱՐԱ-ակ-իս-ս-տե-յա)<sup>157</sup>:

Ըստ Վ. Խաչատրյանի՝ Պախսխոտեյան ժամանակակից Պախս բնակավայրն է և գտնվել է Բյուրակի լեռների արևմտյան

<sup>152</sup> Roth K., Die Bedeutung des Armenischen, ՀԱ, 1927, թիվ 11-12, էջ 741-750:  
«Հայք» անոնքը ըստ Թ. Կուչեմբի, ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 429-432:

<sup>153</sup> ԱԼԲ, 1, է. 41.

<sup>154</sup> Երեբան Ս., Հայ ժողովովի կազմակերպման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30:

<sup>155</sup> Մանուկյան Յ., Օ հետութեա տորոտ թթվամասնութեան պատմութեան և գեոգրաֆիա պահուածութեան մասին, է. 103.

<sup>156</sup> Խաչատրյան Յ., Խանակ, ՅՈՒ, 1972, № 8, է. 38.

<sup>157</sup> KUB XXVI 39 Ի 30 (Forster E., Արակ-Ազզ, Տ. 6).

հասովածում: Նա Պախստուտեյան նմանեցնում է «Պախստուվարդարի հետ»<sup>158</sup>, որն, ինչպես վերը նշվեց, եթշատակվն է «Պախստովացի Մշտայի» տեքստում (KUB XXIII 72): Ըստ այս տեքստի՝ Պախստովան գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան նատում, սահմանակից է եղել Խոսովայի և Հայաստան տարածքներին:

Ըստ Զ. Գարստանզի և Օ. Գրմիջի՝ Պախստուվան գտնվել է Անքայիս Դիվիդիի բնակավայրի տեղում<sup>159</sup>: Գ. Զահուկյանը հավանական է համարել, որ Բայտեևա անվան թեյս մասմիկը խուսիերենի թեյս «մնձ» բառից է առաջացել, և այս բաղարք համդիսացել է Պախստովա երկրի կենարունք: Պախստուտեյա անվան առաջացումը նա կապել է հայերեն «փախ», «փախուստ» բառի հետ<sup>160</sup>:

Ինչ վերաբերում է Պախստովա և Պախստուտեյա անունների նմանությամբ, ասկա, ամենայն հավանականությամբ, այս բարձրերը տարրեր են եղել, սակայն գտնվել են նոյն տարածաշրջանում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում):

## 20. Պատմեու[...] («ՐԱ-Ա-Ա-Թ-Ե-Ա-[....]»)

Հայաստական աստվածների ցուցակում Հայաստան բաղարից հետո եթշատակվել է «Պատմեու[...]» բաղարի աստվածուին («*ISTAR* Առաջա-Ա-Ա-Թ-Ե-Ա-[....]»)<sup>161</sup>: Ընդ որում, այս աստվածուին համելս է զայիս՝ որպես Հայաստանի պամբեռնի պլյասվոր աստվածություններից մեկը: Բաղարամվան վերջում բացակայում է մի բանի սեպանշան: Մասնազնուների մի ճամս ընդունել է, որ այս բաղարի անվանումը կարծիվ է վերականգնել՝ որպես Պարբյարիզա (նոյնանում բաղար գոյություն է ունեցել մաս, Խար-

<sup>158</sup> Խաչատրյան Վ., Հայաստան մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 36:

<sup>159</sup> Garstang J. and O. Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1939, p. 35.

<sup>160</sup> Ջակուբ Ռ., Օ հօգուածությունների համար և առաջարկների մասին, ԻՓՀ, 1988, № 1, է. 76-77.

<sup>161</sup> KUB XXVI 39.1.26.

թիոմ)<sup>162</sup>. Իր աշխատությամ մեջ է Ֆունքը կարծիք է հայտնել, որ այս բաղարամունք չէր կարող նույնացվել խերական տերուտում հիշատակված Պարքեյարիզայի հետ. նա այն համեմատել է մերկայիս Բրառինի հետ (Կամախից 16կ հյուսիսարևմուտք)<sup>163</sup>. Ըստ Գ. Ղափանցյանի՝ -ու-ց (կամ -rig) վանկերով լրացվելու դեպքում Պատես- բաղարամունք նույնանուն կղաղնա Pittiariga-ի հետ, որը մերկայիս Բրառինի է Երգմկայից ոչ հեռու<sup>164</sup>. Իսկ ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս բաղարքը անունը համապատասխանում է Երիգայից (Երգմկայից) արեներ գոնվող Բիտարիք կամ Փիտտերին տեղանվանքը<sup>165</sup>. Ըստ Ա. Թուրյանի Պատես- բաղարամվան վճառված մասի վերականգնումը և համադրումը խերական տերուտքի Պիտտիյարիզայի հետ արդարացված չէ, և Պիտտիյարիզա բաղարք չէր կարող գոնվել Հայուսյի տարածքում<sup>166</sup>.

Ալոգարկիոդ բոլոր սուսպարամուրյունները որպես ելալին ունեն կամ համադրություն Pittiyarig/k/q(a)-ի հետ, կամ շնորհական հավաստի համարվել անվանաձեի թերի վիճակի սկանառուք:

## 21. Պարտամտա (<sup>ԱՐ</sup>Pár-ta-an-ta)

Խերական պայմանագրային տերուտում նշվել է՝ որպես Ուրա բաղարքի մերձակայքում գտնվող բնակավայր<sup>167</sup>. Ըստ այդմ՝ այն կարելի է տեղորոշել հայտա-խերական սահմանամերձ շրջանում:

## 22. Պարբայա (<sup>ԱՐ</sup>Pár-ra-y[ə]?)

Հայաստական այս բաղարքը Գագր[...] բաղարի հետ միասին սեպագիր աղբյուրում հիշատակվել է՝ որպես Ռինագստան (<sup>Ա-</sup>սեպագիր աղբյուրում հիշատակվել է՝ որպես Ռինագստան).

<sup>162</sup> RGTC, VI, Տ. 319-320. RGTC, VI/2, Տ. 127.

<sup>163</sup> Forrer E., Hajasa-Azzi, Տ. 7.

<sup>164</sup> ԱԼԹ, 1, ս. 59, 91-92.

<sup>165</sup> Մարտիրոսյան Ն., Պարտիրումներ վերքախական անուններ ճային, էջ 96-97.

<sup>166</sup> Թուրյան Ա., Հայեակաց թնօսշխարիք տերուտումները, էջ 79:

<sup>167</sup> KUB XXVI 29. KUB XXXI 55.3 (Թուրյան Ա., նոյն տեսլու, էջ 79).

na-ag-ga-az-ta-az ԱՐՈՒթ-րա-յա) աստծո պաշտամունքի վայր<sup>168</sup>. ինչը խոսում է, այն մասին, որ այս աստվածության պաշտամունքը տարածված է նորև Հայաստ-Ազգիում:

Ըստ Հ. Մանամյանի՝ Պարրայա քաղաքի անունը նման է աստրեստանյան արյուններից հայտնի Բարի տեղանվանք. որն, ըստ նրա, հետագայի հայկական Շերկորի բնակավայրն է՝ Հանա լիճի հյուսիս-արևելյան կողմում<sup>169</sup>.

Այդյուրմերի՝ ներկայումս հայտնի տվյալների հաճածայն առաջմանը կարելի է ասել՝ Պարրայայի տեղադրության մասին, քանզի որևէ կովան չկա այն հստակ տեղորոշելու համար:

23. Պիտոփյարիզա (ԱՐՈՒթ-տի-յա-րի-գա, ԱՐՈՒթ-տի-յա-րի-իկ, ԱՐՈՒթ-տի-յա-րի-գա)<sup>170</sup>

Պիտոփյարիզա (Պարքնյարիկա) քաղաքը հիշատակվում է Վերին Եփրատի ավազանի մի խումբ երկրների հետ խերական մայրաքաղաք Խոաքքուսաստում Առնուվանդաս Ի-ի կորած պայմանագրում (Ք.ա. XIVդ. 1 կես)՝ «Պախսխովացի Սիստայի» տեքստում: Պիտոփյարիզայից Արխապիցցին Նուգգամայից Ախասի և մեկ այլ քաղաքի (անվանումը չի պահպանվել) ներկայացոցի հետ միասին համեստ է գալիս՝ որպես Պախսխովայի հետագա հավատարմության երաշխատավոր: Պիտոփյարիզան խերական կողմից դիտվել է՝ որպես վստահելի քաղաքական միավոր Շուգգամայի հետ միասին<sup>171</sup>:

Ըստ Ս. Երեմյանի՝ Երզնկայի դաշտի խոշոր կենտրոններից է նորև Թիրառիկա քաղաքը (ներկայիս Թրաողիծ՝ Ալբն-Թեփեի ավերակներից ոչ հեռու), որ այլ կերպ կոչվել է՝ Պարքեյարիկա, և

<sup>168</sup> KUB XXVI 39 1 33 (Ferrer E., Խայես-Ազու, Տ. 6).

<sup>169</sup> Մանամյ Յ. Օ нескоторых спорных проблемах истории и географии древней Армении, с. 104.

<sup>170</sup> Ercem H., Coğrafya Adları Dizini, s. 112.

<sup>171</sup> KUB-XCIII: 72 (Բոյան Ա. Նոր պատրիկ Խերական տերություն և Հայկական Ծովածխարթի կորուսիք Փիխարարելությունների մասին, էջ 240-242).

այս անոնք երրեմն վերագրվել է ողջ Հայաստ-Ազգի երկրին<sup>172</sup>։ Մանամլյանը ենթադրել է, որ Պարքեյարիկա բաղադրի անոնքը կարելի է համեմատել ներկայիս Բրատիճ գյուղի անվան հետ (Երգնկայի դաշտուն), և այդ տարածքը մտնել է Խերական տերյան կազմի մեջ։ Իսկ հայաստական Պիքրիյարիկան, բայց նոր, կարող էր գումակ Շնրդակ ամրոցի տեղում՝ Խարբերդից 10կմ հյուսիս<sup>173</sup>։ Վ. Խաչատրյանը և Պիքրիյարիկան տեղորոշել է Բրատիճ գյուղի տեղում Երգնկայից հարավ-արևելք, և տեղանկան հիմքում դրել է հայերենի հնդեվրոպական բորբ միասունակ, բայց, բավական առիծ «զյուղ, շեն» արմատները<sup>174</sup>։

Սակայն խերական ադրյուներում առկա մյուրի հիման վրա կարելի է նպակացնել, որ Պիքրիյարիկան համդիսացնել է Խարբելի բաղադրելոց մեկը։

#### 24. Տախ(ա)նխարա (ԱՐԱ-Տախ-իս-չա-րա, ԱՐԱ-Տախ-ու-չա-րա)

Այս բաղադրամունք տրվել է մի գուշակային տերսուում, որի նպատակն է եղել պարզել Ազգի դիմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի ընթացքը։ Տերսուում հիշատակվել են մի շարք տեղանուններ ինչպես Հայաստ-Ազգին, այնպիսի և դրան սահմանակից խերական տարածքում։ Գտնվել է Հայաստայի Ուրա սահմանային բաղադրի մոտ<sup>175</sup>։

#### 25. Տամատոս (ԱՐԱ-Տա-մա-ատ-տա)

Տամատոս բաղադրի համդիսացնել է Տերյուտիուունիս աստծո պաշտամունքի կենտրոնը Հայաստ-Ազգին («Te-րի-մ-ո-նս-ո-ն-ի[Տ?] ԱՐԱ-Տա-ատ-տա»)<sup>176</sup>։

Նյուրի սղուրյունն ու բաղադրամին այս եզակի հիշատա-

<sup>172</sup> Երևանի Ս., Հայ ժողովրդի կազմակիրման ընթացք, էջ 31։

<sup>173</sup> Մանանք Յ., Օ ոչոտրեալ տորուում պրօբլեման իշորու և տօգրաֆու ձրանքն Արմենի, էջ 105.

<sup>174</sup> Խաչատրյան Վ., Հայաստաճք քառ. XV-VII դարերում, էջ 43, 78։

<sup>175</sup> ԿՈՒՑ ԽLIX 11 Ա III 7, ԿՈՒՑ ԽLIX 11 Ա 20 (Թուրք Ա., Հայկական ինուաշխառի մէջամտները, էջ 93)։

<sup>176</sup> ԿՈՒՑ ԽXVI 39 Է 30-31 (Forster E., Խայեա-Ազգ, Տ. 6)։

կորյունը թույլ չեն տալիս առաջարկել որևէ հատակ տեղադրություն:

## 26. Տավատենա (<sup>ԱՐՄ</sup> Ta-wa-te-na)

Հայասայի Տավատենա բաղարի մասին տեղեկություն կա խերական մի գուշակային տեքստում, որի մպատակն էր պարզել Հայասայի-Ազգիի դեմ կազմակերպված (կամ մախապատրաստվոյ) արշականը հնարավոր ընթացքը<sup>177</sup>.

Տավատենա բաղարը գտնվել է Հայասայի Ուրա սահմանային բաղարի շրջակայրում և, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է հայասական այդ ամրացված սահմանային գոտու ամրոցներից մեկը՝ հետագայի Եկեղյաց գավառի տարածքում:

## 27. Ուկու (<sup>ԱՐՄ</sup> Uk-ku-u)

Ուկուն «Միջին խերական» վուլք (Ք.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) մի պայմանագրում տրված Ուրա սահմանային բաղարի մերձակայրում գտնվող բնակավայրերից մեկն է<sup>178</sup>. Գտնվել է հայաս-խերական սահմանային շրջանում:

## 28. Ուտկունիսա (<sup>ԱՐՄ</sup> Ut-ku-ni-ša [ ])

Հիշտուակվել է միայն խերական վերոհիշյալ գուշակային տեքստում<sup>179</sup>: Ուտկունիսան տրվել է Տավատենա, Խարսալսա բաղարանուների հետ և նույնպես գտնվել է Ուրա բաղարի մոտ:

## 29. Ուրա (<sup>ԱՐՄ</sup> U-ra-ak, <sup>ԱՐՄ</sup> U-ra-a, <sup>ԱՐՄ</sup> U-ra-an)

Խերական Սուրբիլս II բազավորի «Տասնամյա տարեգրարյան» յորերորդ տարվան վերաբերող մասում կարդում ենք.

<sup>177</sup> RGTC V/2, Տ. 167 (Թույան Ա., Նոր տնդանուններ խերական սեպագիր տեքստերմ, էջ 259).

<sup>178</sup> KUB XXVI 29.2 (Թույան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղաբնումներ, էջ 100).

<sup>179</sup> RGTC V/2, Տ. 182 (Թույան Ա., Նոր տնդանուններ խերական սեպագիր տեքստերմ, էջ 259).

"nu URU U-ra-aš ku-iš URU-aš [ŠA KUR <sup>URU</sup>] (A-az-zí ḥa-an-to-ez-zí-iš) a-ū-ri-iš e-eš-ta na-aš-ká-n na-ak-ki-i pe-e-di [a-ša](-an-za...)")<sup>180</sup>.

«և Ուրա քաղաքը, որն Ազգի երկրի առաջին սահմանային ամրոցն է, այն մի զարդվայր (ոժվարածուշելի) տեղում էր»:

Հայաստ-Ազգի քաղաքոր Աննիյան ավելի էր խերական Դանեկուվա քաղաքը, ինչին ի պատասխան՝ Մորսիլիս Ա-ն արշավեց դեպի Հայաստ-Ազգի՝ գրավելով նրա սահմանային Ուրա քաղաքը<sup>181</sup>:

Գ. Դափանցյանը ներաղել է, որ Ուրան, հավանաբար, ինտագայի Կամախի մոտ գտնվող Ամի ամրոցն է, որի անունը տվել է Աննիյա քաղաքորը<sup>182</sup>: Խոկ Գ. Զահուկյանը Ուրա քաղաքնունը քացատրել է հինանատոյիական լեզուների հիմքի վյա-նուու որի՝ սրա-ն նշանակել է «մեծ»<sup>183</sup>: Հ. Սահմանյանը տեղորոշել է Ուրա քաղաքը Ծոփիք Անձիս զավանի Հռու-թերդի (Խորքերդ) տեղում<sup>184</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ուրա տեղանունն իր մեջ ունի հայերեն ուր՝ «օյուլ, ընծյուլ» արմատը և գտնվել է Բարերդի մոտ (Ուտեն բակավայրը)<sup>185</sup>: Խոկ Ըստ Ա. Քոսյանի՝ Ուրա քա-ղաքը գտնվել է Խարբիմ և Հայաստ միջանց կապող ճանա-պարհներից մեջի վրա՝ Գայլ գետի հոսանքի մոտ<sup>186</sup>:

Խերական տերստերում տվյալներ կան նաև Ուրա քաղաքը մոտ գտնվող Խարսալաստ, Տավատնամ և Ռուկունիսս քաղաք-

<sup>180</sup> Götz A., Die Annalen des Muršili, S. 98-99.

<sup>181</sup> Նոյնանուն խերական քաղաքը է գոյրոյն մթեցել նաև Խարբիմ (Hoewink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (c. 1450-1380 B.C.), p. 68. RGTC, VI, S. 458):

<sup>182</sup> Ի.Պ. Ի. և. 52.

<sup>183</sup> Ջալուկին Գ., Հայաստանի լեզու և ցեղային ազգականությունը, Երևան, 1964, ս. 81.

<sup>184</sup> Մանուկյան Յ., Օ ոեկորոյթ տպանական պրоблемան պատմության և գույքագույքական պատմության մեջ, Երևան, 1981, ս. 91.

<sup>185</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, չ. 43:

<sup>186</sup> Քոսյան Ա., Հայկական լութարիական տեղանուններ, Ե. 101:

ների մասին<sup>187</sup>: Հավամարար, ուրա քաղաքն իր շրջակա բնակավայրերով կազմնէ Հայաստ-Ազգի արևմտյան սահմանային ամրացված շրջանը:

Ըստ այդմ կարելի է առաջարկն քաղաքի տեղադրությունը Կումահիայից արևմուր հալաճարար, հետագայի Եկեղյաց գավառում, որտեղից ճանապարհ էր քացվում դեպի Հայկական լոռնաշխարհի կենտրոնական գավառները:

### 30. Քաղկուսա/Քաղմասա (Qa?-ad-ku/ma-ša/ta?)

Այս քաղաքանվան ընթերցումը կասկածելի է, քանի որ քաղականին դժվարընթեռնելի է<sup>188</sup>: Ա. Շույանը, մի շաբ նկատառություն ենթադրով, այս դժվարընթեռնելի քաղաքանունը առաջարկել է վերականգնել հետևյալ կերպ՝ [<sup>ԴՐ</sup> .....-այս-չ-բա<sup>189</sup>]:

Քաղկուսան հանդիսացել է Հայաստ-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը, այստեղ պաշտել են Զազգա(-)[...] աստծուն ("Za-աց-ցա-(-)[...]" <sup>ԴՐԱՆ</sup> Qa?-ad-ku/ma-ša/ta?):

Քաղաքանվան եզակի հիշատակությունը և նյուրի ամրավարար լինելը հնարակություն չի տախի որևէ տեղադրություն առաջարկել Քաղկուսա քաղաքի համար:

Փոքրելով ամփոփել այս գլուխը՝ կարելի է նշել, որ շատ տեղանունների կազմակցությամբ տարբեր հետինակների տված քացատրություններին և մեկնարաբանություններին կարելի է վերապահումով մոտենալ, քանզի մենք զգիտենք, թե խեթերն այդ տեղանունները տվել են իրենց լեզվին համապատասխան, թե դրանք նույնությամբ վերցրել են տեղաբնիկներից: Բացի այդ, քոյլը տեղադրությունները կարելի են առաջարկել մոտավորապես՝ հաշվի առնելով այն, որ մեզ հազարամյակներ են քաժա-

<sup>187</sup> Շույան Ա., 'Նոր տեղանուններ խեթական մելապակը տեղատերում', էջ 254-259:

<sup>188</sup> KUB XXVI 39 և 28 (Forrer E., Այասա-Ազզ, Տ. 6).

<sup>189</sup> Շույան Ա., Հայաստայի աստվածները (KUB XXVI 39), ՄԱԱԹ, 2003, XXIV, էջ 450-451:

նույն այդ ժամանակաշրջամից, և շատ տեղանուններ չեն պահպաննել իրենց նախնական անունները, կամ տնդանվան եզակի հիշատակությունը թույլ չի տալիս առաջարկել որևէ հատակ տեղադրություն: Որոշ դեսպանում էլ ակնհայտորեն խերական տեղանունները մասնագիտական գրականության մեջ ներկայացվել են՝ որպես հայաստական, ինչը հանգեցրել է սխալ մեկնարանությունների: Հիմ տեղանունների հետ հաճացվող ժամանակակից տեղանունները ներկայացվել են այնպէս, ինչպէս դրանք առկա են ուսումնասիրություններում:

Ներկայացնելով յորաբանչյուր տեղանվան աղբյուրագիտական հեմքը և դրա մեկնարանությունը մասնագիտական գրականության մեջ՝ մենք ներ նաև մեր կարծիքն այս կամ այն տեղադրության վերաբերյալ, որքանով հնարավորություն է տալիս քննարկվող գրավոր նյութը:

Կարծում ենք՝ Հայաստանի և Խնորդ առարկա մյուս քաղաքան միավորների պարագայում հնարավոր է միայն դրանց ընդհանուր տեղադրությունը՝ Հայկական լոռնաշխարհի որոշակի տարածքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
(Ք.Ա. XIV-XIIIդդ.)

**Ո-ԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ  
ԽԱԹԹԻՒ ՄԻՋԵՎԸ (Ք.Ա. XIV դար)**

Ք.Ա. XIVդ. 1 կեսին Հայկական լեռնաշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ է զայփ խեթական սկզբնադրյուրմերից հայտնի Հայասա-Ազգին: Այդ ժամանակաշրջանի պատմությունը լուսաբանու խեթական տեքստերից է, այսպես կոչված, «Պախստովացի Միտայի» տեքստը<sup>110</sup>: Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական պետության կերպար ժամանակագրութեն ամենավաղ պայմանագիրը:

«Պախստովացի Միտայի» տեքստը պատկանում է խեթական այն արձանագրությունների թվին, որոնք վերջին տասնամյակներին են ստացել իրենց ճշգրիտ բնագրումը: Այս տեքստը կազմվել է խեթական արքա Թուղթսալիյասի և նրա որդի Ալոնվանդասի կողմից, որոնք սովորուարար նույնացվել են Ք.Ա. XIIIդ. երկրորդ կեսին իշխան Թուղթսալիյաս IV-ի և նրա որդի Արմավանդաս III-ի հետ: Մի շաբթ հանողի ապագույցների հիման վրա՝ այժմ այս տեքստը վերարկագրվել է:

<sup>110</sup> KUB XXIII 72 (Sayce A., Hittite and Moscha-Hittite, RHA, 1930, № 1, Է.Յ., p. 1-8; Gurney O., Mita of Palmyra, AAA, 1948, № 28, p. 32-47; Hoffner H., A Note to the Hittite Mita-text, JCS, 1976, № 28, p. 60-62; Kozyan A., Arminianas I in the East, AJNES, 2006, I, p. 72-97).

Ք.ա. ԽIVդ. Ի կեսով՝ Առնուլանդաս I-ի կառավարման առաջին տարիներով<sup>191</sup>:

Ըստ «Պախստովացի Միտայի» տեքստի՝ Հայկական լնոնաշխարհի Պախստովա երկիրը երկար ժամանակ անհնազամդուրցուն էր դրաւորել, և նրա դեկալիաները (Ռուսապա, Միտա, Պիգգանա և այլն) ոչ միայն խախտել էին խերական արքային տված հավատարմության երդումը, այլև գրավել էին խերական քաղաքներ: Խերական արքան Պախստովայից պահանջել էր իրեն հանձնել Միտային: «Պախստովան հնագանեցնելու փորձերից հետո խերական արքան մայրաբաղաք Խաքքուսա էր կանչել Հայկական լնոնաշխարհի երկրների ներկայացուցիչներին: Տեքստն իրենից ներկայացնում է խերական արքայի վերջնազիրը՝ Պախստովայի պահանջերին, ինչպես նաև պարունակում է Հայկական լնոնաշխարհի երկրների հետ կնքված պայմանագիրը<sup>192</sup>:

«Պախստովացի Միտայի» տեքստում Հայաստ-Ազգին չի հիշատակվել, սակայն այստեղ հանդիս են զայխ որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խերական աղբյուրներից հայտնի են՝ որպես այդ երկողի բնակավայրեր: Նոգգանան և Արխիտան: Դուզգանացի Ախսին պիտույքարիացի Արիստիբիցին հետ միասին հանդիս է զայխ՝ որպես «Պախստովայի» հետագա հավատարմության երաշխավոր: Իսկ Արխիտան հանդիսացել է Պախստովայի դաշնակիցն ընդում Խաքքի: Պախստովայի հետ միացած՝ Արխիտան հարձակվել էր Կումմահայի բնակավայրերի վրա, իսկ խերական գորքի հարձակման ըմբացքում արխիտացիներն ապաստանել էին Պախստովայում:

Առնուլանդաս I-ի հաջորդ Թուրիստիայաս III-ի (Ք.ա. 1360-1344թթ.) կառավարման շրջամի վերաբերյալ սկզբնադրյուրներում (որոնք գրի է առել նրա բոոք՝ Մուրսիիս II-ը) հանդիպում են

<sup>191</sup> Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (c. 1450-1380 B.C.), p. 63. Ձևալան Ա., Խերական պետություն և Հայկական լնոնաշխարհի երկրները մ.թ.ա. XV դարում, Պետ. 2000, թիվ 3, էջ 161:

<sup>192</sup> Houwink ten Cate Ph. H. J., Աշկ. աշխ., էջ 65-66; Ձևալան Ա., Նոր նյուրեր Խերական տերության և Հայկական լնոնաշխարհի երկրների փոխարքարերությունների մասին, ԱՊՄԵթ. 2001, XX, էջ 241:

առաջին տեղեկությունները Խարբիից արևելք՝ Հայկական լեռնաշխարհում կազմավորված Հայասա-Ազգի պիտուրյան մասին։ Այս պիտուրյան կազմավորումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Ք.ա. ՔԻՆԴ. Ի կեսին՝ «Պալմիրուկացի Միտայի» տերստում Ակարազրված իրադարձություններից հետո ընկած ժամանակահատվածում՝ Առնուլանդաս 1-ի և Թուդիսալիյաս III-ի կառավարման շրջանում։

Խարբիի հօրությունը և պիտուրյան միասնականությունը պահպանելու համար խերական միապետություն անընդհատ պատրազմներ են վարել իրենց հարակից երկրների դեմ, որոնց շարուն էր նաև Հայասա-Ազգին։ Այդ պատճառով էլ Հայասայի վերաբերյալ առաջին տեղեկություններն ունեն ուազմական հադրիւազրությունների բնույթ։ Այսպիս, Թուդիսալիյաս III-ի օրոք Խերերն արշավել են դեպի Հայասա-Ազգի, որի համար, ամենայն հավանականությամբ, պատճառ էր հանդիսացել այն, որ Հայասան ուազմական համագործակցության մեջ է եղել Խարբիի վուանզավոր հյուսիսային թշնամյների՝ կասկերի հետ։

Խերական արձանագրություններից մեկում նշվել է, որ հայասական գործը հանդես է եկել իր նրկրի տարածքից դրասկանական նախահարձակ լինելով։ Կասկա և Հայասա երկրների դեմ արշավանքը դեկավարել է Թուդիսալիյաս III-ի որդին՝ Սուլավյալումասը, որը շնանդիավելով այդ նրկրում (երկրի անունը բաց է բողնիքած) Հայասայի գործին այնտեղ հանդիպել է Կասկա երկրի գործերին և հաղթել նրանց<sup>191</sup>։

Խերերը դեպի Կասկա և Հայասա երկրներ արշավելու համար որպես հենակետ օգտագործել են Վերին Երկիրը<sup>192</sup> (թշնամյական հարձակումների և, մասնավոր մայրաքաղաքի ամբողջ մասնամբ հետևանքով Թուդիսալիյաս III-ը ստիպված էր ժամանակա-

<sup>191</sup> BoTU 34-KUB XIX 11(Götterbock H., The Deeds of Suppliciums as told by his Son, Manus. II, JCS, 1956, № 10, 2, p. 62-63) (անս՝ Խոմթիվան 1)

<sup>192</sup> Վերին Երկիրը Ծակը. KUR 1<sup>81</sup>UGU<sup>23</sup> գտնվել է Խերական տնտերյան երասիս-պահեցում Հայոցի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրամոյ մեծ ուրբան ընկած տաղասծրում հյուսիսուն հաստեղով մինչև Պայլ գետի ափաքարը։ Արևելյան այն սահմանակցիք է Հարուս-Ազգին (տես՝ RGTC, VI, S. 293-294):

փորապես մայրաբաղարք տեղափոխվել կրօնական խոշոր կենտրոն Սամուխա քաղաք, որը համբաւացել է Վերին Երկիր կենտրոնը՝ Վերին Հայիսի ավագանում<sup>195</sup>), որտեղ նրանք մաս զօրահավաք են անցելացրել և գործ են պահել այդ Երկրների դեմ:

Ըստ Փոքր Ասիայի Մաշատ-հյոյուր թագավայրից (խեր. Ալ-Տարիցցա) հայտնաբերված մի տերսութ՝ Խերական արքան Տապիգայում գտնվող մի քարծրաստիճան պաշտոնյայի համձնաբարում է գնալ Վերին Երկիր և գործ հավաքագրել դեպի Հայսա արշավամբ կազմակերպելու համար, որպեսզի այդ Երկիրը «վարզի բնույթ»<sup>196</sup>:

Խերական այդ տերսուց բվագրվել է ԿՄԲ ՀՀԻ 72-ից հետո ընկած ժամանակաշրջանով, այսինքն դեպքերը տեսլի են ունեցել Թուղթավայրի առողջականացման III-ի օրոր:

Այս արձանագրություններում չի նշվել Հայաստայի բազավորի անունը, սակայն այս դեպքերից հետո խերական արքյուրներում հիշատակվել է Հայաստայի արքա Կարաննին, որից առաջ «Խոեկանայի պայմանագրում» հիշատակվել է հայաստացի Մարիյան:

Ըստ Է. Ֆոռենի Հայաստայում Մարիյա անունով երկու անձնագրություն է գյուրյուն ունեցել: Առաջինը դեռև Թուղթավայրի առողջականացման III-ի օրոր երավլիրվել էր Խայրիի մայրաքաղաք ու սպանվել, իսկ երկրորդը Խոեկանայի փեսան ու գորավարն է եղել<sup>197</sup>: Ի. Դյակոնովը գտնում է, որ Մարիյա անունը կրել են երկու անձնագրություններ՝ մեկը Հայաստայի բազավորն էր դարձել Թուղթավայրի առողջականացման ժամանակ, իսկ մյուսին նա համարել է Խոեկանայի հետ զուգահեռ իշխող Ազգի տիրակալ: Այսուհետև Մարիյան էր դարձել Հայաստայի բազավոր, որին հաջորդել էր Աննիյան<sup>198</sup>: Ըստ Վ. Խոաշատրյանի Մարիյա անունը համբաւացել է Հայաստայի բազավորների տիրապետ, և այդ անունը կրել է Հայաստան-Ազգի:

<sup>195</sup> Garstang J., Gurney O., *The Geography of the Hittite Empire*, London, 1959, p. 36.

<sup>196</sup> Alp S., *Hethitische Briefe aus Muzat-Hayit*, TTKY, № VI/35, 1991, S. 298-301. Թույան Ա.՝ Նոր Ծյուրեր Խերական անցություն և Հայեկան խոնաշխարիք երկրների վայսիարքությունների մասին, էջ 234-235-ին համեմատ 27:

<sup>197</sup> Förster E., Ենյաս-Ազա, S. 3. Դյակոնով Ի., *Предыстория армянского народа*, Ереван, 1968, с. 91-92.

առաջին հզոր բազավորը<sup>199</sup>: Ընյ որուն, Մարիյան, սատ Վ. Խաչատրյանի, Թուղթավիյաս III-ի ժամանակակիցն է եղել, իսկ նրանից հետո զային հաստատվել է Կարաննին, այնուհետև Խուկեանան<sup>200</sup>: Մարիյա անունը համեյսլում է նաև Մուրսիլիս Ա-ի օրոք՝ Աննիյա ամվան հետ գուգահեռ<sup>201</sup>: Հավանաբար, այս հաստվածի նասն է կազմել Մուրսիլիս Ա-ի Աննիյայի հետ կճրած պայմանագրի, որում նա կա՞մ նորից հիշատակել է Թուղթավիյաս III-ի պայտատում տեղի ունեցած ստորև նշված դեպքը, կա՞մ Աննիյայից բացի՝ Հայաստան իշխան է Մարիյա ամվանը մնկը, որին Մուրսիլիս Ա-ը հարկ է համարել հիշատակել:

Պայմանագիրը կճրվել է Սուպափլուղիումաս I-ի և Հայաստանի արքա Խուկեանայի միջև: Պայմանագրի մի հաստվածում տվյալներ կան այն մասին, որ դեռևս Թուղթավիյաս III-ի օրոք Խարթիի մայրաքաղաք Իրավիրգված Մարիյան սպանվել էր արքայի պալատում: Դրա համար պատճառը էր հանդիսացնել վնրօշնիս կողմից խերական արքունիքում ընդունված քարոյական շափանիշների խախտումը<sup>202</sup>: Այս դեպքը Սուպափլուղիումաս I-ը, հավանաբար, հիշատակել է պայմանագրում՝ որպես զգուշացում՝ ցանկանալով Խուկեանային անխոհեն քայլերից ետ պահել:

Խարթին Թուղթավիյաս III-ի կառավարման ընթացքում հայտնվել էր ծանր կացության մեջ: Բոլոր կողմերից նրա կենտրոնական շրջանների վրա էին հարձակվել թշնամի ուժերը, ավերվել էր նույնիսկ մայրաքաղաք Խարթուսասը<sup>203</sup>: Թուղթավիյաս III-ից մեծ ջանքեր պահանջվեցին կորցրած տարածքները ետ գրավելու համար: Այդ պայրաքարում նրան օգնում էր որդին՝

<sup>199</sup> Մարիյա անձնանումը նշվել է նաև Մաշատ-հյոյուրից գտնված նախակնիք մեջ՝ մեզոն՝ որպիս խերական մի պաշտոնայի անուն (Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, 1991, № VI/35, S. 206-209):

<sup>200</sup> Խառտրք Բ., Մարիա-հույն լալլասկուս ուսել. Դրանուն Յօստոկ, 1988, № 5, с. 57-62. Նույնի, Հայոստանը մ.թ.ա. XV-VII դարերուն, Երևան, 1998, էջ 48-49:

<sup>201</sup> Саркис Օ., Die Hajaña-Verträge Hattis. Documentum Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 71-72.

<sup>202</sup> Кбо V 3 (Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 Т., 1930, S. 126-129) (մեն՝ համելված 3):

<sup>203</sup> Кбо VI 28 (СТН 86).

արքայազն Սուպավիլուիլումասը: Խարբիի հյուսիս-արևելյում թշնամի երկիր էր մնում Հայաստա-Ազգին, որի գործերն, ավերելով Վերին Երկրները, Սամուխա քաղաքը սահման էին դարձրել Հայաստայի և Խարբիի միջև<sup>204</sup>: Տամիկանալով կասնցնել հայաստան առաջխաղացումը՝ Թուլիավեյաս III-ն արքայազն Սուպավիլուիլումասի հետ նախ պարտության մատնեց կամկական ցեղերին, այնուհետև շարժեց դեպի Հայաստա: Հայաստայի Կարամենի արքան իր գործով դեմ ելավ խերական ուժերին և Կուսմանիա քաղաքի տակ ճակատամարտ տվեց նրանց<sup>205</sup>: Հավամարայ, Վերին Երկրներից ետ քաշված հայաստան գործը դեռևս իր ծննդում էր պահում Կուսմանիա երկրոր, որը հնտագայում նորից անցավ խերական տիրապետության ներքո գտնվելով մի կողմից Խոսվայի (հարավից), մյուս կողմից՝ Հայաստայի հարևանությանը<sup>206</sup>: Ըստ ամենայնի Կուսմանիայի ճակատամարտն ավարտվել է հայաստական գործի պարտությամբ և Կուսմանիայի նկատմամբ խերական վերահսկողության հաստատմամբ:

Թուլիավեյաս III-ին հաջորդած Սուպավիլուիլումաս I-ի օրոր (Ք.ա. 1344-1322թթ.) սկսվեց Խարբիի նոր փերելքը: Կարամենից հետո խերական աղբյուրները որպես Հայաստայի բազավոր իշխատակել են Խուկվանային, որի հետ էլ խերական արքան դաշնագիր էր կնքել<sup>207</sup>:

<sup>204</sup> KBo VI 28 | 11-12 (Bryce T., *The Boundaries of Haiti and Hittite Border Policy*, Tel Aviv, 1986, № 13, p. 89).

<sup>205</sup> KUB XIX 11 IV 38-44 (Güterbock H., *The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Muwallat II*, p. 66).

<sup>206</sup> Առաջ Ա., Ամի-Համամից խերական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 237.

<sup>207</sup> Ըստ մեկ այլ փարկածի՝ Սուպավիլուիլումասը Խուկվանայի հետ դաշնիք է կերել, եթե ուս աղբայազն էր և աշտոքուց խառավարում էր հոր՝ Թուլիավեյասի կողմանը, եթե ուս աղբայազն էր և աշտոքուց խառավարում էր հոր՝ Թուլիավեյասը պահանջում էր աղբայազնությունը և աշխարհը աշխարհ ասիր է ծառակի այն, որ Սուպավիլուիլումասը պայմանագրում հիշառանքել է բազավոր, այնու սփյուռքը որպես «Խարբիի մեծ բազավոր» տիտղոսում: Խարբիի նախառական երանակներում խերական բանակի իրկրությունը հնարավոր հայաստանի հարձակությունը էր, որը Խարբիի գործում էր ծանր զրոյական և կրորդել էր իր արևմունքը, իդունային և կծնողունական տարածքում մեց և կրորդել էր իր արևմունքը, իդունային և կծնողունական տարածքում:

Ըստ Սուպալիլովիումասի տարեգրության<sup>208</sup> խերական արքան Խոտվայից շարժվել է դնայի Ծուխապա երկիր, ավերել այն և մտել Հայաստ։ Լախա լեռների շրջանը, այնուհետև վերադարձել Խոտվա<sup>209</sup>։

Փաստորեն, Սուպալիլովիումաս I-ին հաջողվել էր և հարավյաց, և արևմուտքից ընդհուպ մոտենալ Հայաստայի տարածքներին և փոսնզ ստեղծել մրա համար։ Այսպիսի ժամը կացության մեջ, երբ երկիրը կանգնած էր խերական ներխուժման փոսնզի առաջ, հավանական է, որ Հայաստայում տեղի է ունեցել գահակալի փոփոխություն, և իշխանության է նկա Խոտկանամ, հավանարար, ոչ առանց խերական միջամտության<sup>210</sup>։ Այս ամենից հետո խերական արքան շտապել է օգտվել ստեղծված հետագործությունից և դաշինք է կմրել ոոր գահակալի հետ, որպեսզի անվտանգ դրամի Խարքի-Հայաստ սահմանը՝ ճյուղ ուղղություններով իր հաջողությունները գարզացնելու համար։

Ըստ պայմանագրի, Խոտկանան պարտավորվում էր, քացի Սուպալիլովիումաս I-ից, նրա ժառանգորդ որդուց կամ մյուս որդիներից և եղբայրներից, շնանաշել որեւ այլ մնկի իշխանության օրինականությունը Խարքին։ Սուպալիլովիումասը դրա փոխարժեն խոստանում էր մույն ձևով վարչել Խոտկանայի, նրա որդու և ժառանցի հետ։ Նրանց որդիները միմյանց հետ կապվելու էին միևնույն փոխադարձ պարտավորությանց։ Երկու կողմանը էլ համաձայն էին առնում միմյանց ուղղական աջակցություն ցույց տալ թշնամիների դեմ։ Նրանք պարտավոր էին նաև մնկը մյուսին նախազգուշացնել իրենց դեմ հայտնարերին դավադրությունների մասին։ Սակայն պայմանագրուն Սուպալիլովիու-

<sup>208</sup> Տերութիք գիտական ուսումնավորությունից տվյալները (Güterbock H., *The Deeds of Supplikants as Told by his Son, Mansili II*, JCS, 1956, № 10, 2-4)։

<sup>209</sup> KUB XXXIV 23 (Güterbock H., Աշխ. աշխ., 3, էջ 83) (առն. համբեամ 4)։

<sup>210</sup> Ն. Աղանձը կարծում է, որ Մարիյամի ժամը Հայաստայում պատար էր բերդ խոտություններ, և որու հետևանքով խերական արքան միջամատ էր, որպեսզի նետագիր օրինագոր ժամանակը՝ հազար հունկանայի, որը խոտությունների ժամանակ Խարքին կողմնակիցն էր (Աղանձ Ն., Հայաստանի պատմության, Երևան, 1972, էջ 37)։

նասը չի շրջանցում այն փաստի, որ Հայաստան դեռ պահում է Խարքիից գրաված հողերը, և որ Խոլկանայի ծրկում կային նաև տարագիր խեթահպատակներ, ուստի դաշնագրի մի կետը Խոլկանային պարտավորեցնում էր տարագիրներին վերադանել և դուրս գալ գրավված խեթական ճարզերից:

Պայմանագրի համաձայն՝ Խարքիի արքան իր բրոջը կնուրյան է տալիս Խոլկանային: Միևնույն ժամանակ Սուպիլիումասը պահանջում է, որպեսզի Խոլկանան լին շառնի Հայաստան-Ազգիի իր ազգակիցներից: Նպատակը, բերևս, մեկն էր՝ խեթական միներ նրա միակ կինը՝ ապահովելով խեթական ներկայությունը հայաստական արքունիքում: Սուպիլիումասը դրանով փորձում էր գահի ժառանգման հարցը լուծել հօգուտ իր բրոջ պապա որդու<sup>211</sup>:

«Խոլկանայի պայմանագիրը» խեթահայտական հայրենությունների ամենավառ դրանորուններից մեկն է հանդիսացել: Պայմանագրում որպես գերակայող միտում համդես է նկատ միմյանց միջն հաստատված խաղաղությունը և օրինականությունը պահպանելու պայմանը, ինչն այդ պահին շատ կարևոր էր երկու երկրների հաճար: Դաշնագիրն արտացոլել է տվյալ ժամանակահատվածում միջազգային հարաբերություններում առկա մի շարք կարևոր դրույթներ՝ կապված տարածաշրջանում ուժիքի դրասավերվածության հետ:

Սուպիլիումաս 1-ը ցանկանում էր Հայկական լեռնաշխարհի երկրները դիմանագիտական ճանապարհով կտրել եւարքիի գլխավոր հակառակորդից՝ Միտամմիից, և ուզմական աջակցություն ստանալ այդ երկրներից: Դրան էր միտված խեթական արքայի պահանջը՝ ճանաչել միայն իր իշխանությունը և գործեր տրամադրել իրնմ, ոք որևէ երկիր թշնամական գործադրություններ ձեռնարկեր ընդունմ Խարքիի<sup>212</sup>:

Գոյություն ունի մի գուշակային տերսու, որում խեթական

<sup>211</sup> Friedrich J., Staatsverträge des Hattu-Reiches in hethitischer Sprache, 2 T., S. 124.

<sup>212</sup> Carruba O., Die Haja-S-Verträge Hattis, S. 59-75. CTH 42.

<sup>213</sup> Friedrich J., նշ. աշխ., էջ 106-109, 116-117.

արքան (ամենայն հազարականությամբ, Սուպալիլովիտմաս I-ը) գուշակային հարցում է արքե, որի միջոցով փորձել է տեղեկանալ Ազգի արքա Խուկկանայի ապագա հազարարմության մասին իր և իր սերունդների հանդեպ<sup>213</sup>:

Դրամից հետո խեթական արքան հարավում անցել է նվաճողական նոր գործողությունների՝ ընդլիմ Միտաննիի և Եգիպտոսի: Սուպալիլովիտմաս I-ը նամակ է հղել եգիպտական փարավոնին, որտեղ հիշատակել է իր կատարած նվաճումները նամակի առարձանը նախորդող շրջանում: Տեղատի վճարած ենթատերսում պահպանվել է Հայասա երկրամումը<sup>214</sup>: Սակայն խեթայասական դաշինքը կարծ է տևել: Ավելի ուշ՝ Սուպալիլովիտմասի տարեգործության մեջ, Հայասան դարձյալ հիշատակվել է՝ որպես թշնամի երկիր<sup>215</sup>:

Հարեւան երկրները սկսում են թշնամանալ խեթական տերության հետ դեռև Սուպալիլովիտմաս I-ի կենյանության վերջին տարիններին, երբ Խարբիում համաճարակ էր տարածվել: Այնուհետև թշնամիների թիվը գնալով աճում է՝ պայմանավորված այդ արքայի և նրա հաջորդ գահակալիք՝ Արտօվանդաս II-ի (Ք.ա. 1322-1321 թթ.) նահում: Իսկ երբ խեթական գահը փոխանցվում է դեռահաւ Մուլսիլիսին, քաղաքական իրավիճակը երկրում չի կարգավորվում<sup>216</sup>.

Խարբիմ թշնամացած երկրներն են Կասպան, Ալտամանին, Հայասան, Արծավան և այլն: Մուրսիլս II-ը (Ք.ա. 1321-1295 թթ.) տարեգործություններում հաղորդել է այն մասին, որ թշնամի երկրները, այդ թվում նաև՝ Հայասա-Ազգին, հարձակվել լին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Հավանաբար, Հայասայի և Կասպայի միջև գոյություն է ունեցել դաշինք, բանգլ այդ

<sup>213</sup> KUB XVIII 2 (CTH 579. Թույաթ Ա., Հայեկան թունաշխարիկ տեղանունները, Երևան, 2004, էջ 136-137).

<sup>214</sup> KUB XIX 20 (CTH 154. Թույաթ Ա., Հայեկան թունաշխարիկ տեղանունները, էջ 137).

<sup>215</sup> Götterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, 4, p. 113-114.

<sup>216</sup> Götz A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 14-21.

երկու երկրների ռազմական ընդհարումները Խարբիի հետ հաճախ ժամանակագրորեն համընկել են: Մուրսիլս Ա-ին հաջողվում է պարտության մատնել Արծավա (Փոքր Ասիայի արևմտաքաղաքացին) և Կասկեա երկրներին: Կասկեա Տիբիյա երկրի արքա Պիլիսխունիյային պարտության մատնելուց հետո նայն Մուրսիլս Ա-ի իր Խշխանության յոթերորդ տարում ուշադրությունը կենտրոնացրել է Հայասա-Ազգի վրա<sup>217</sup>:

Սուպալիուլումասի կառավարման վերջին տարիներին խերահայասական պայմանագիրը խախտվել էր հենց Աննիյայի կողմից, որը հրաժարվել էր իր նախորդի՝ Խոսկեանայի հաճանակացիություններից, և հայասացիները զնո՞ր էին քարձրացրել Խարբիի դեմ ու իրենց մոտ ընդունել խերահայասակ փախստականներին:

Ակզրանապես փորձնով հարցը խաղաղությամբ լուծել՝ Մուրսիլս Ա-ը նամակներ է ուղարկում Հայասա-Ազգի Աննիյայից պահանջելով վերադարձնել դեռևս Սուպալիուլումասի ժամանակ Հայասայում ապաստանած խերահայատակներին և Խոսկեանա ու Դամեկուլա («Նորին Երկրներ») խերական Երկրներից վերցրած գերիշմներին: Աննիյայից մերժում ստամակով՝ Մուրսիլս Ա-ը Հայասա-Ազգին սահմանային Ռուս քաղաքի վրա կառարում է հարձակում<sup>218</sup>, որի նըլի նախին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն հետագայում խերական արքան ատիպած էր կրկին արշավել դեպի Հայասա-Ազգի:

Ըստ «Մուրսիլսի տարեգրության» ութերորդ տարվա իրադարձությունների՝ հայասացիները, լալով Մուրսիլսի կողմից նախապատրաստվող արշավանքի մասին, նրա մոտ դիսպան են ուղարկում՝ համաձայնելով կատարել Խարբիի արքայի սրահնեցները<sup>219</sup>: Մուրսիլս Ա-ն առժամանակ նետածօռում է իր նախատեսած արշավանքը և գրալվում Կոմմանիի Խելպատ աստվածուած հում նվիրված տոնախմբություններով: Սակայն հաջորդ տարի նույն նվիրված տոնախմբություններով:

<sup>217</sup> KBo III 4=2Bo TU 48 (Գօւշէ Ա., ԶՀՎ. աշխ., Տ. 96-97) (տես՝ Խամբիկան 5).

<sup>218</sup> KUB XIV 17=2BoTU 56 (Գօւշէ Ա., ԶՀՎ. աշխ., Տ. 94-98) (տես՝ Խամբիկան 6).

<sup>219</sup> 2BoTU 56 (Գօւշէ Ա., ԶՀՎ. աշխ., Տ. 102-103) (տես՝ Խամբիկան 7).

Մուրսիլիս հայաստացիմենքից կրկին պահանջում է վերադարձնել ռազմավարը, բայց մերժում է աստանում Աննիյայից: Հայաստայի արքան ցանկանում էր գերիների փոխանակում կատարել. հրաժարվում էր վերադարձնել խեթական գերիներին, քանի դեռ չեր ստուգել իր հպատակ տարագիրներին<sup>220</sup>. Դեռ ավելին, օգտվելով հարմար առիթից, որ Մուրսիլիս II-ը գտնվում էր Խարքի հարավում, Աննիյան վերատիմ հարձակվում է Խստիշտինա երկրի վրա և պաշարում Կանոնվարա խեթական քաղաքը: Խեթական մի քանչ մեծ մասովականություն Նուվանցայի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում Կանոնվարա քաղաքին: Հայաստանինը, որոնք ուսպի դաշտ էին Խանի 700 մարտակառը և 10.000-անոց հետևագործ, Կանոնվարա քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում, ըստ խեթական սկզբանդրյուրների, պարտություն նմ կրում: Սակայն հավանական է, որ խեթական գորավարք անհաջողության և մատնվել, որի պատճառով Խարքի արքան առիսված էր Կարգամիտից իր գործերը շարժել դեսի Թիգարամա (գտնվում էր Կումմանիյի (անտիկ Կումմագին) և Վերին Երկրի միջև և տեղորոշվել է Ենթային Գյուրյոն բնակավարի տեղում<sup>221</sup>), որպեսզի ավելի մոտ գտնվի ուսպանական գործությունների անմիջական վայրին: Այստեղ օճառն պատճառով և իր գորակամանատարների խորհրդով նա առժամանակ դադարեցնեց Հայաստայի դեմ ուսպանական գործությունները և գործեց շարժեց այլ ուղղությամբ<sup>222</sup>.

Իր քագավորության հաջորդ 10-րդ տարում, Մուրսիլիս II-ը սկսում է իր ուսպանատարք դեսի Հայաստան-Ազգի: Ինգալրակա քաղաքում գորատես անցկացնելուց հետո խեթական արքան արշավում է դեսի Հայաստա: Հայաստայի գործը որոշել էր ցերեկը ճակատամարտ շտալ և պատրաստվում էր զիշերը լեռներում Խանկարձակի բնակել խեթերին: Իրագեկ լինելով դրամ՝ Մուրսիլիս II-ը հրաժարվում է իր քանակին կազմ ու պատրաստ լինել գիշերային հար-

<sup>220</sup> Götze A., Աշ. աշխ., էջ 102-107.

<sup>221</sup> Gurnung J., Gurney O., *The Geography of the Hittite Empire*, p. 47.

<sup>222</sup> Götze A., Աշ. աշխ., էջ 122-127.

Ժակումներին: Խեթերը, ներխուժելով Հայաստի տարածք, պաշտում և զրավում են «ծովի մեջ գտնվող» Արիապատ քաղաքը, որի բնակչները հեռացել էին մոտակա լեռները: Արիապատ ափարի մատնելուց հետո Մուրսիլիս Ռ-ը հպատակեցնում է նաև Դուզանա հայաստական քաղաքը, որի բնակչիները դիմադրություն գույց շնուրությամբ: Խեթական արքան քաղաքը չի ավերում, միայն 3000 դուզգանցիների՝ որպես գինվորների, տանում է Խարքի<sup>223</sup>.

Այսպիսով, Խարքի արքան իր գահակալման 10-րդ տարին անցելացրել է՝ արշավելով դեպի Հայաստան արշավամբ սկսելով գարնանը (խեթ. իամեշհառ-«գարուն») և ավարտելով ձմեռնամուտին (խեթ. ցիմման-«ձմռու»): Ժամանակային առումով արշավամբը բավականին ճգճգվել էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խեթական բանակը զրավել էր ընդամենը երկու հայաստական քաղաք, որից մեկն անձնատուր էր եղել: Առավել ևս, որ մինչև Արիապատ հասնելը որևէ ուազնական բախում տեղի չեր ունեցել խեթերի և հայաստաների միջև: Ամենայն հավանականությամբ, Մուրսիլիսը, Թարձր Հայքի տարածք ներխուժելով, այդ ժամանակահատվածում Տուրութերանի տարածքով հասել էր մինչև Վանա լճի ափերը, որտեղ և զանգվել էր Արիապատ<sup>224</sup>.

Այնուհետև՝ գահակալության 11-րդ տարում, Մուրսիլիս Ռ-ը, նախատակ ունենալով վերջնականացնելու հպատակեցնել Հայաստան-Ազգին, կրկին արշակիսների է եղում: Հայաստի իշխանակությունը, տեղի տալով զերազանցող ուազնական ուժին, սովորելով, տեղի տալով զերազանցող ուազնական ուժին, սովորելով բաժակցություններ են սկսում Խարքի արքայի հետ: Հայաստական կողմն պարտավորվում է զորք տրամադրել Խեթական քանակին, ինչպես նաև վերադարձնել դնուն իր մոտ գտնվող խեթական զերիներին: Այսպիսով, հայաստաները վերականգնում են դեռևս Խուկեանայի օրոց պայմանագրով ստանձնած պարտավորությունների մի նասը<sup>225</sup>.

<sup>223</sup> KBG IV 4-2BvTU 58 (Goetze A., Աշխ., էջ 130-139) (տես՝ համեմած 8).

<sup>224</sup> Հազարյան Ռ., Հայաստանի անդադրության հարցի շորք (ըստ Մուրսիլիս Ռ-ի տարիեզրության), Մերձական Արևելյան, 2005, էջ 37-38.

<sup>225</sup> KBG IV 4-2BvTU 58 (Goetze A., Աշխ., էջ 138-139) (տես՝ համեմած 9).

Մուրսիլիս II-ը վերադառնում է Խաքրի այն բանից հետո, երբ հայասական իշխանավորները նրան հավատարմության երդում են տալիս և վերադարձնում են 1000 խեթական տարագիրների<sup>226</sup>:

Մուրսիլիսի ժամանակաշրջանից պահպանվել է մեկ այլ տեքստ (KUB XIV 4), որտեղ ներկայացվում է արքայի և նրա խորի մոր՝ Մուպալիլույթումաս 1-ի վերջին կոնց՝ տավանանա (բազումի) Ամմիննայայի միջև հականարտության պատմությունը: Այդտեղ հիշատակվել է արքայի՝ դնալի Հայաստ-Ազգի կազմակերպած արշավանքի ընթացքում թագուհու՝ Խաքրուսասում պալատական հեղաշրջում իրականացնելու փորձը: Խոսքը վերաբերում է Մուրսիլիս II-ի տասներորդ և տասնմեկերորդ տարիների արշավանքներին<sup>227</sup>: Այստեղ ևս Հայաստան և Ազգին հիշատակվել են՝ որպես մեկ երկրի երկու տարրեր անվանումներ:

Մուրսիլիս II-ին հաջողվել է որոշ ժամանակով Խաքրի հյուսիս-արևելքում չեղողացնել հայաստական վտանգը: Սակայն խեթերն այդպես էլ չեմ կարողացել նվաճել Հայաստ-Ազգին: Նրանք բախտաբարվել են՝ միայն իրենց գերիներին վերադարձնելով և ուղարկած օգնություն ստանալով, սակայն որևէ խոսք չկա այն մասին, որ Հայաստան հարկ է վճարել Խաքրին՝ որպես պարտված երկիր:

Մուրսիլիսի կառավարման հաջորդ տարիներին խեթական վակիրագրերում տեղեկություններ չկան Հայաստ-Ազգի վերաբերյալ: Հավանաբար, Խաքրին և Հայաստան այդ ընթացքում խաղաղ գոյակցության շրջան են ապրել, և երկու երկրների միջև որևէ ուազմական ընդհարում տեղի չի ունեցել:

<sup>226</sup> KBo IV 4-2BcTU 58 (Գուչե A., Եզկ. աշխ., էք 139-141) (անս՝ Խավթելված 9).

<sup>227</sup> Քոյսյան Ա., Հայաստան և Ազգին, Ընթի ի վերուստ, 2008, էք 283-285:

## ԽԵԹԱՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք.Ա. XIII ԴԱՐՈՒՄ

Զ.ա. XIII դ. Հայաստ-Ազգի պատմության լուսաբանումը սերտորեն առնչվում է այդ ժամանակաշրջանի Մերձակոյք Արևելքի քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ:

Դեռ Զ.ա. XIV դ. կեսերից երկու գերտերությունների՝ Խարբի և Եղիպտոսի միջև հաստատվել էր անելայտն հակասարակություն այն քանից հետո, եթե Սուսպիրլուիումաս 1-ը գրավեց Միտաննին, և Հյուսիսային Ասորիի տարածքում ստեղծվեց խեթերից կախյալ Կարգամիսի քաջավորությունը: Զ.ա. XIII դ. առաջին քառորդում խեթանգիպտական հակամարտությունը հասավ իր քարծրակեստին (Զ.ա. 1274թ. Քաղեցի ճակատամարտը), որից հետո սկսեց աստիճանաբար տեղի տալ և ավարտվեց Զ.ա. 1258թ. Խարբուսիլս III-ի և Ռամզես II-ի միջև կմրգած խաղաղության պայմանագրով: Դաշնագիրը վակիրացնում էր Քաղեցից հետո ստեղծված իրավիճակը Ասորիում: Այն ժամանակ, եթե խեթերն ու Եղիպտոսցիները պայքարում էին ասորիյան քաղաքների (Թալեչ, Համատ, Ուգարիթ, Երլա, Խալսա, Ալայախ) վրա իրենց վերահսկողության հաստատման համար, Միտաննիի գերիշխանությունից ազատազրված Ասորեստանը, արևմտափոքրասիական երկրները (Արևականդա, Լուկիա, Սենա) և Ալիսիլյական քաջահայտորեն գտնում էին ինդարձակելիքնեց քաղաքական ազդեցության շրջանակները Խեթական տեսության հաշվին: Ոչ պակաս քարդ խնդիրներ էին առաջացել նաև Խարբիի ներքաղաքական կյանքում՝ կապված Ուրիխ-Թնդորի (Սուլսիլս III) և Խարբուսիլս III-ի միջև ընթացած ոինաստիական պայքարի հետ: Հավանաբար, Խարբուսիլսի իր դիրքին ամրապնդելու համար զիջման է զնացել վատրված Ուրիխ-Թնդորի կողմնակիցներին՝ Փոքր Ասիայի հարավում ստեղծվելով Թարխումտասսայի կախյալ պետությունը Ուրիխ-Թնդորի կրտսեր որդու՝ Կուրտումտայի գլխավորությամբ:

Սուրբիլս II-ին հաջորդած Մովատալիս II-ի (Ք.ա. 1295-1272թթ.), Ուրլսի-Թեզուրի (Մուրսիլս III) (Ք.ա. 1272-1267թթ.) և Խաքուսիլս III-ի (Ք.ա. 1267-1237թթ.) կառավարման տարիներից պահպանվել են գուշակային և խնվենտարային բույրի գրափոր աղբյուրներ, որտեղ հիշատակվել է Հայասա-Ազգին<sup>228</sup>. Հնարիավոր է, որ դա մի խաղաղ ժամանակաշրջան է նոյն խերահայասական հարաբերություններում: Որևէ տեղեկություն չկա այդ բազավորմերի օրոք Հայասայի գրավման կամ կախյալ վիճակի մասին, ինչը վկայում է այն մասին, որ Հայասա-Ազգիի բազավորությունն ինքնուրույն և անկախ է եղել և չի ներգրավվել խնթերի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն գոյուրյուն ունի Ազգիի դեմ նախապատրաստվող պատերազմի վերաբերյալ մի խերական գուշակային տեքստ, որը բավարպել է Ք.ա. XIII դարի կեսերով<sup>229</sup>, և որի մասին հետագա տեղեկությունները բացակայում են:

Այսուանենայնիվ, եթե Մուրսիլս II-ի օրոք Հայասան ստիպված էր գործ տրամադրել Խաքուսիլս և, հավանաբար, մասնակցել խերական արքայի արշավամբներին, ապա այս ժամանակաշրջանում խերական բանակի կազմում Հայասայից որևէ զինվորական միավոր հիշատակված չէ:

Մովատալիս II-ն իր եղբարը՝ Խաքուսիլս ապագա մեծ արքա Խաքուսիլսին, նշանակել էր Հայասայից արևոտոք գտնվող Վերին Երևի կառավարիչ, միաժամանակ նաև խերական բանակի հրամանատար: Իր «Ինքնակենսագրությունում» Խաքուսիլսը նկարագրել է նաև իր ռազմական գործողությունները՝ ուղղված Խաքուսիլսի թշնամիների և անհնազանդ նրանքների դեմ<sup>230</sup>: Այս տեքստում որևէ տեղեկություն չկա Հայասա-Ազգիի մասին՝ շնայած ռազմական գործողություններն ընթացել են Հայասայի սահմաններից ոչ հեռու: Վերին ու եռակա Երևաներում:

<sup>228</sup> KUB XXXI 62, KUB XLII 69, KUB XLVIII 105+KBa XII 53, KUB XLIX 1 (CTH 225, 245, 530, 572, 575).

<sup>229</sup> KUB XLIX 70 (CTH 572, ձեռային Ա., Հայերական լետուշխարիդ տիեզարանները, Երևան, 2004, էջ 148).

<sup>230</sup> CTH 81, Friedrich J., Heilatisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 10-14.

Քաղեցի Աշանավոր ճակատամարդում հիշատակվել են Խարբի Երկրի դաշնակից և հպատակ մի շարք Երկրներ՝ Միտաննի, Արծավա, Լուկա, Կիցցուվատնա, Կասկա և այլն<sup>231</sup>. Այս ցուցակում չի հիշատակվել Հայասա-Ազգի Երկիրը՝ որպես Խարբի դաշնակից կամ հպատակ, ինչը վկայում է այս մասին, որ Հայասան Մուրախիս II-ից հետո՝ արդին Մուվատալիս II-ի օլոր, վերականգնել էր իր անկախությունը և զորք չեր տրամադրել Խարբին:

Հայասա-Ազգիի վերաբնյալ ժամանակագրութեան վերջին հիշատակությունները հանդիպում են Խարբի արքա Թուլխալիս IV-ի (Ք.ա. 1237-1209թ.) կառավարման շրջանից:

## II.

12. [n]am?-ma-aš-ma-aš šu-me-e-eš ku-i-e-eš *BE-LU*<sup>232</sup>

13. [b]a-an-te-zi a-u-ri-uš ma-ni-ia-aḫ-he-eš-kat-te-ni

14. *IS-TU KUR* *URU* Az-zi *KUR* *URU* Ga-aš-ga

15. *IS-TU KUR* *URU* Lu-uq-qa-a nu *ZAG* še-iš?-kan-te-et

«Տերեր, ովքեր առաջին հերթին (Շ) կառավարում եք Ազգին, Կասկային, (և) Լուկային նայող սահմանային կետերը... »<sup>233</sup>:

Այս հաղորդումը պարունակում է տեղիկություն Թուլխալիս IV-ի կողմից Խարբի սահմանային նահանգների կառավարիչներին տրված իրականացների մասին: Խարբի արքան, հայանարար, ցանկացել է նախազգուշական միջոցներ ծնոր առնել Ընդդեմ Ազգի, Կասկա և Լուկա Երկրների:

Փաստորեն, նշված ժամանակաշրջանում Խարբին բարիության հարաբերությունների մեջ չի եղել ոչ միայն Կասկա (Արևելյանաբնտական լեռների շրջանում) և Լուկա Երկրների (Խա-

<sup>231</sup> Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1998, p. 257.

<sup>232</sup> KUB XXVI 12 (Forster E., Hajass-Azzi, Caucasica, 1931, № 9, Տ. 22. Թուլխալիս II, Ք.ա. XII դարի մերձափրարկելան նօնաժամը և Հայկական թագավորությունների մեջ չի եղել ոչ միայն Կասկա (Արևելյանաբնտական լեռների շրջանում) և Լուկա Երկրների (Խարբիության III-ին):

տագայի Լիլիխան՝ հարավ-արևմտյան Փոքր Ասիայում), այլ նաև Ազգի հետ: Դեռ ավելին, Թուղթսահիյան IV-ը ցամկացել է նաև պատերազմել Հայաստ-Ազգի դեմ: Պոյություն ունի մի գուշակային տերսու, որտեղ խնդրական արքան փորձում է տեղեկանալ, թե ում է նպատակահարմար հանճնարարել դեպի Ազգի կազմակերպվելիք արշավանքի դեկավարությունը<sup>233</sup>: Սակայն որևէ տվյալ չկա որպան հաջորդած իրադարձությունների մասին:

Ք.ա. XIII դ. կեսերից Հայկական լեռնաշխարհը հայտնվում է Խեթական տերության և Ասորեստանի ռազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան զբավոր աղբյուրներն առաջին որոշակի տեղեկություններն են տախս Հայկական լեռնաշխարհի երկրների մասին: Այդ տեղեկությունները գալիս են ասորեստանյան արքաների դեպի հյուսիս կատարած արշավանքների նկարագրություններից:

Թուկուլիքի-Նինուրտա 1-ի (Ք.ա. 1233-1197թթ.) տեքրատերում հանդիսան է Հայկական լեռնաշխարհի Նախիք երկիր հավաքական անունը: Ակնհայտ է, որ Թուղթսահիյան IV-ը և Թուկուլիքի-Նինուրտա 1-ը ժամանակակիցներ են եղիլ: Եվ եթե խեթները Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմերն անվանել են Հայաստ կամ Ազգի, ապա ասորեստանցիները Լեռնաշխարհի արևմտյան հատվածը հիշառուիլ են Նախիք երկրներ անունով: Ըստ ասորեստանյան սկզբնաղբյուրների Նախիք երկրները տարածվել են Տավրոսի լեռներից մինչև Սև ծով ընկած տարածքում և, ընականարար, իրենց մեջ ընդգրկել են նաև Խեթական սկզբնաղբյուրներում հիշատակված Հայաստ-Ազգին: Այդ սկզբնաղբյուրներում Հայաստ-Ազգի և Նախիք երկրներ անվանումների համաժամանակա հիշատակությունը վերայում է Հայկական լեռնաշխարհի խնդրությանը առաջակա տարածքում պիտական կազմավորումների մերժադարձական գարգացումների մասին միևնույն ժամանակ, թերևս, գույց տալով Հայաստ-Ազգի տրոհման միտումը, որի բաղկացու-

<sup>233</sup> ԹՅԸ 1 32 (ԾԹ 572. Առայան Ա.՝ Հայեական լեռնաշխարհի տեղամունքները, Երևան, 2004, էջ 152).

ցիշ մասերը հանդիս են եկեղ իրենց իշխանավորմերի զյսափորբայամբ: Այսպես, Թուկուպիթ-Նինուրտայի թողած արձանագրություններում պատմվում է Ասորեստանի արքայի դժափ Հայկական լեռնաշխարհ կատարած արշավաճրների և մրւա դեմ դորս եկած Նախրիի 43 բազմավորմերի մասին<sup>234</sup>:

Ասորեստանի առաջիսադումը նյուսիսում լայն աշխարհագրական ընդգրկում է ունեցել (Թաքնի, Կաղմուխի, Պորուլումզի, Ալզի, Սուրարու, Նախրի և այլն): Դրույտնեն ավելի է սրբել խեթերի: Նիխորիյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիներից պարտություն կրներց հետո, որը բռյ տվեց ասորեստանյան գործին «Եփրատի այն կողմից» 28.800 խեթակապատակ բնակչություն զերծվարել<sup>235</sup>: Տարածաշրջանում Ասորեստանի ազդեցության ուժեղացումը շեր կարող չանչանգուտացնել Հայկական լեռնաշխարհի երկրներին: Հավանաբար, Հայաստայի ուշադրությունն այդ ժամանակաշրջանում թերուած է եղել Խարավից եկող Վտանգի վրա, սակայն արևմուտքից՝ Խարբիի կողմից նույնացն շեր կարող բացառվել Խարձակումը: Այդ վտանգում Խառսվայի խեթամնտ դիրքորոշման ավարտ է արձանագրվել<sup>236</sup>, մյուս կողմից Հայկական լեռնաշխարհի Խարավի սուրբարյան նրկները՝ Ալզին, Կաղմուխին, Խակաասորեստանյան դիրքորոշում են ունեցել: Հայկական լեռնաշխարհի այս երկրները, Խավանաբար, մերս կապեր են ունեցել լեռնաշխարհում ազդեցիկ ուժ ներկայացնող Հայաստ-Ազգիի հետ՝ ուղղված ընդդեմ Ասորեստանի և Խարբի:

Տարածաշրջանում Խեթական տերության հավասարակշռող դերի նվազումը պեսոր է ստիպեր Հայկական լեռնաշխարհի երկրներին գտնել իրենց իմցնուրույն կենսագործունեության ապահովման ուղիներ ինչպես խեթերի, այնպես էլ Ասորեստանի

<sup>234</sup> АВИИУ, 3, 5, 6.

<sup>235</sup> АРԼ, 1, ֆլ 773, 778. АВИИУ, 6, 7.

<sup>236</sup> Քույսի Ա., Խոսկան (Ծոփքը) մ.թ.ա. XIII-XII դարերում. ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 184-186:

ներտումների դեմ<sup>237</sup>: Առավել նպատակահարմարը տվյալ պարագայում Հայկական լեռնաշխարհի այդ երկրների միջև դաշնակցային հարաբերությունների հաստատումն էր: Հավանական է, որ դաշնակցային հարաբերություններ են զոյուրյուն ունեցել Ազգի, Խոսկայի և ստրարյան երկրների միջև և ուղղված են եղանական լեռնաշխարհի երկրներին արևալութից և հարավից սպառնացող վտանգների դեմ:

Թուղարժության IV-ին հաջորդել են Առնուվանդաս III-ը (Ք.ա. 1209-1207թթ.) և Սուպայիլույսաս II-ը (Ք.ա. 1207-XIIդ. սկզբ): Նախկինում Առնուվանդաս III-ի կառավարման շրջանուկ թվագրվող խերահայասական փոխարարերությունների վերջին փուլի հիմնական սկզբանիցուր համարվող, պայմանականորեն «Պախստովացի Միտա» անվանումը կրող տեքստն, ինչպես վերը նշվեց, այժմ վերարվագրվել է Ք.ա. XIVդ. սկզբով:

Սուպայիլույսաս II-ը հանդիսացնել է Խարքի վերջին մեծ տիրակալը, որի օրոք, կամ նրանից հետո Խերական տերությունը տրոհվել է, և արդեն Ք.ա. XIIդ. սկզբին Խարքին իր նախկին սահմաններով Փոքր Ասիայում չի հիշատակվել:

Ք.ա. XIIդ. սկզբներին Խերական տերության տրոհումից հետո Փոքր Ասիայում և հարակից շրջաններում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, որոնց հետևանքով հիմնավորապես վերափոխվեց քննարկվող տարածաշրջանի քաղաքական, երիտական և նշակութային պատկերը:

Վերջին շրջանում, շնորհիվ զգալի բվով նորահայտ զրավոր և հնագիտական նյութերի, Խերական տերության անկճան ընթացքն անվերապահորեն արտաքին զարծոնին վերագրելու միտումը զգալի փոփոխություններ է կրել: Ռւսումնասիրուաններն այժմ ավելի շատ տեղ են հատկացնում ներքին քայլայիշ զործներացներին՝ խնդիրը դիտելով ոչ այնքան որպես հետևածք բշնամական հարձակման («ծովի ժողովուրդներ»), այլ Խերական տերության քաղաքական կառույցի աստիճանական

<sup>237</sup> Головлева Л., Царство Алзин во второй половине II тыс. до н.э., Древний Восток, 1978, № 3, с. 72.

տրոհման՝ նրա բաղկացուցիչ մասերը համեխացող մի շաբթ կախյալ երկրների անկախացնան ու տնտեսական ճգնաժամի արդյունքում<sup>238</sup>: Խարքի անկման «ուրոհման» տնտօրյան համաձայն՝ այն հետևանքը էր առաջին հերքին Ք.ա. XIII դ. կտորից երկրի ներսում տարեցտարի խորացող ներքաղաքական անկայումուրյան, որը զլսավորապես բացատրվում է Մուրսիխս Ա-ի արքայատոհմի նրկու ճյուղավորումների միջև ընթացող հակամարտուրյամբ՝ սկսած Խարքուսիլս Ա-ից Ք.ա. XII պակապներին ներքաղաքական վայրիվերումների, տնտեսական լորջ բարդուրյումների և կենտրոնական Փոքր Ասիայի ընակչուրյան զգալի մասի գանգվածային արտագաղթի հետևանքով Խերական տերուրյունը տրոհվեց երեք բաղացական միավորների՝ Թարխունտասսա (Փոքր Ասիայի հարավում), Կարգամիս (Հյուսիսային Ասորիցում) և Մելիդ (Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտաքում):

Հենվելով կենտրոնական Փոքր Ասիայի՝ մոտավորապես Ք.ա. 1200-ը ավերված խեթական բաղարբների տեղաբաշխման բարտեզի վրա՝ Հ. Գյուտքրուկը կարծիք է հայտնել, որ խեթերի մայրաքաղաքը և հարակից բաղարբները հարձակման են ենթարկվել ոչ թե արևմտուրից կամ հարավից, այլ, հավանաբար, հյուսիս-արևելքից կամ արևելքից<sup>239</sup>, այսինքն՝ այն տարածքներից, որտեղ գտնվել են Կասկա և Հայասա երկրները: Խարքի նախորդ ողջ պատմուրյան բնրացրում կատակեան ցեղերի մշտական հարձակումները խեթական բնօրբանի վրա բույլ են տալիս ենթացրել նրանց ակտիվուրյունը նաև Ք.ա. XIII դ. վերջին և ԽII դ. սկզբին: «Դժվար է պնդել՝ արդյոք Հայասան մասնակցուրյուն ունեցել է Խարքի բնօրբանի վրա հարձակումներին, թե ոչ, սակայն զիտուրյան մնջ զոյտուրյուն ունեցող այն տեսակետոց, որ Խարքի կործանումից հետո անկում է ասպեկտ նաև Հայասա-

<sup>238</sup> Բույան Ա., Մ.ք.ա. XII դարի մերձավորայիշելսան ճգնաժամը և Հայեական ինքնաշխարհը, Երևան, 1999, էջ 113-114:

<sup>239</sup> Gutefuss H., Survival of the Hittite Dynasty, Cittas, 1992, p. 53-55.

Ազգիմ<sup>240</sup>, տրոհման տեսության ի հայտ գալով՝ կարևի է բացառել:

Ք.ա. XIIIդ. երկրորդ կեսին Հայաստա-Ազգին հանդիսան է եկել՝ որպես ամեկախ երկիր և չի մտել ոչ Խարբիլի և ոչ էլ Ասորեստանի տիրապետության տակ: Ք.ա. XIIդ. սկզբին Խարբիլի տրոհվելը նիշ շարք պետությունների նոր, ավելի մասաստավոր իրադրություն սիեռ է տուեցնելու համար: Ասորեստանը նույնապես քաղաքական անկում է ապրել այդ ժամանակաշրջանում<sup>241</sup>: Այսպիսով, տարածաշրջանում որևէ արտարին լուրջ գործոն չկար, որը կարող էր թերեկ Հայաստա-Ազգի կործանմանը:

Խերական տերության տրոհման հետևանքով Ք.ա. XII-Հերթ Մերձավոր Արևների պատության վերաբերյալ զրավոր աղբյուրները կտրուկ նվազում են, իսկ եղած ասինանալիք նյութը լուսաբանում է զիշափորավես ներմիջազետորյան և ներեզիպուտական խնդիրները քացառությամբ Ք.ա. XIIդ. վերջերի և XIIդ. առաջին կեսի ասորեստանյան տերությունից<sup>242</sup>: Հավանաբար, Հայաստան իր գոյությունը պահպանել է նաև Ք.ա. XIIդ. լուրացքում, սակայն ոչ որպես միասնական պետություն, այլ մի շարք քաղաքական միավորներից քաղկացած երկիր: Այդ միավորներն, ամենայն հավանականությամբ, մտել են ասորեստանյան սկզբանակյալ նրանքում նիշատակված Նախիրի երկրների կազմի մեջ<sup>243</sup>:

Ըստ մի շարք եեղինակների՝ Հայաստա-Ազգին համեխսացել է այն տարածքը, որտեղից սկիզբ է առել հայ ժողովությունը: Այսպիսս, ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Հայաստան հայ ժողովությի նախահայրենիք է եղել, և հայաստական ցեղերը իիմբ են համեխսացել հայ

<sup>240</sup> Թարմելյան Լ., Հայաստա-Ազգի ուսումնա-քաղաքական սրացությունից, ՏՀԿ, 1964, թիվ 7, էջ 78: Երեմյան Ս.-Հայ ժողովությի կազմավորման ընթացք, ԹիւՀ, 1970, թիվ 2, էջ 36: Ալոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 52: Մոնակոն Յ., Օ ոչորոյն տորոնի քոբելություններում և գեղագիտական առողջության վերաբերյալ, Երևան, 1956, էջ 120. Խաչատրյան Վ., Հայաստան ճ.ք.ա. ԽV-ՎII դարների, Երևան, 1998, էջ 94:

<sup>241</sup> Քայուան Ա., Մ.ք.ա. XII դարի մերձադրության հզմանամարտ և Հայեական մասնաշնորհց, էջ 139:

<sup>242</sup> ԱԲՈՒ, 10 - 18.

<sup>243</sup> Խաչատրյան Բ., Խառը և Արանձ, ՅՈՒ, 1976, թ. 8, էջ 62.

ժողովրդի<sup>244</sup>: Նման եզրակացության էլ եկել նաև Պ. Կընծնըք: Ըստ նրա՝ Հայաստ անունը նշանակում է Հայաստան, որի բնակիչներն իրենց հայ անունն այնուհետև ժառանգել են հնդեվոպացի արմեններին<sup>245</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի՝ հայ-(sa) էր հիկական տերմինը նոյնական է: «Իսայ» ինքնանվանը, և Հայաստ-Ազգին նա համարել է հայերի նախնական բնօրբանը: Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Խարբիի տրոհումից հետո Հայաստ առավել հզորացն է, և հայերի նախնիները հայաստցիները, ներքափանցել են հարավ՝ Մելիտենի ուղղությամբ, և Լեռնաշխարհի արևելյան կողմը<sup>246</sup>:

Սակայն Հայաստ անունից չէ, որ առաջ է եկել հայ ցեղանոնց, այլ՝ հայ անունից՝ Հայաստ: Խերերը, ծանոք լիմենով իրենցից արևելյան քնկած երկրի բնակիչների հայ ինքնանվանը, նրանց երկիրը կոչել են իրենց լեզվական օրինաշափությունների համաձայն՝ Հայաստ, այսինքն՝ հայերի հայ ինքնանվանն ավելացրել են իրենց լեզվին հասուկ տեղ, բնակավայր, երկիր ցույց տվող «առա» վերջածանցը, որով և՝ Հայ+աստ նրկրանունը:

<sup>244</sup> Մարտիկոսեան Ն., Հայերէնի յայտարկությունը հերիքքէնի հետ. Հ.Ա. 1924, թիվ 9-10, էջ 453; Նոյնիւ, Պայտումներ վիրքախական անուններու մասին, ՊՈՀ, 1961, թիվ 3-4, էջ 90; Նոյնիւ, Նպաստ մը հնք և հայ բառացնության, ՊՈՀ, 1972, թիվ 2, էջ 164-165:

<sup>245</sup> «Հայոց անունը ցայ Պ. Կընծնըքի. Հ.Ա. 1933, թիվ 7-8, էջ 431-432:

<sup>246</sup> ԽԱԲ, 1, էջ 125. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1963, էջ 36-61:

## ՀԱՅԱՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհի ուշրոնզեղարյան քաղաքական, սոցիալ-տնտեսական կյամքի և հոգեար մշակույթի զարգացմանն անմասն չեր կարող մնալ Հայաստ-Ազգին: Պատմագրության մեջ հաճախ Հայաստան դիտարկվել է՝ որպես գնդային միուրյուն՝ ներկայացվելով որպես համեմատարար ավելի ցածր պետական համակարգ ունեցող միավոր<sup>247</sup>. որը մենք համարում ենք վիճարկելի: Քննարկենք պատմագրությունից մեզ հայտնի փաստեր:

Ինչպես վերը նշվեց, Հայաստայի մասին բոլոր տեղեկությունները մենք քաղաքում ենք խերական սկզբնաղյուրներից: Խերերն յիշեց աղյուրներում տարրերակել են բազմավորական իշխանություն ունեցող միավորներն ու պարզապես ցեղային առաջնորդներով դեկապարփու քաղաքական կազմավորումները: Դրա լավագույն օրինակն է համելիսանուն կասկերի առաջնորդ Պիլիսխոնիյայի դիմաքը: Արևելակասկական Տիրիյա երկրի առաջնորդ Պիլիսխոնիյան իրեն հոչակել էր բազավոր: Ինչպես արձանագրված է խերական սկզբնաղյուրում, Կասկա երկրում մինչ այդ ընդունված չեր, որ մեկ մարդ իշխան երկրում, իսկ Պիլիսխոնիյան սկսել էր Կասկայում կառավարել բազավորակերպ<sup>248</sup>: Այսինքն՝ խերերը հոսուի տարրերակում են բազավորական իշխանությանը օժուված անձին ցեղային առաջնորդից:

Խերական արձանագրություններում Հայաստայում լշխող Կարաննին, Խոռվկանան, Անմիյան հիշատակվել են՝ որպես բազավորներ<sup>249</sup>: Իհարկե, Հայաստ-Ազգի բազավորները Մերձա-

<sup>247</sup> Մելքոնիան Ռ., Հայու-Մարտրու, Երևան, 1954, ս. 81, 86-87. Դյանոս Ի., Պредыстория армянского народа, Ереван, 1968, ս. 82, 93. Hans V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands, Xenia. Das Reich Urarii, 1986, Բ. I, Տ. 23.

<sup>248</sup> Götze A., Die Annalen des Mursili, MVAG, 1933, № 38, Տ. 88.

<sup>249</sup> KUB XIX 11 IV 43 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, p. 66). KUB XVIII 2 (Թայաբան Ա. Հայկական լեռնաշխարհ

Վոր Արևնդի հզրագույն տերությունների (Եղիպտոս, Ասորեստան, Բաբելոնիա) միապետների նման շնորհ կրել «ոճեծ քաջավոր» տիտղոսը և Խարքիի արքաների կողմից շնորհ ամփանվել «եղբայր», քանզի այդպիս նրանք անվանում էին միայն նրանց, ուն համարում էին մեծությամբ իրենց համազոր արքաներ: Մակայն, դրանով հանդերձ, Խարքիի քաջավորները պայմանագրեր են կնքել, խնամիական կապեր հաստատել և իրենց արքունիք հրավիրել Հայաստայի քաջավորներին: Փաստեր, որոնք վկայում են, որ նրանց, այսուանձնայնիվ, Խարքիի արքաների կողմից մեծ համարում են ունեցել:

Թուն հայաստական տարրածքից (Հայկական լնոնաշխարհի արևմտյան հատված) մեզ որևէ գրավոր վկայություն չի հասնել Հայաստ-Ազգիի վերաբերյալ, սակայն դատելով խեթական սկզբնադրյուրներում խեթահայատական նամակագրության հիշատակությունից<sup>250</sup> հարկ է նկատել, որ Հայաստայի արքունիքում պետք է լիներ նաև դիվան իր դպիրներով, որոնց վարել են պետական գուգությունը:

Ցուրաքանչյուր պետության անվտանգության և հետագա գոյության կարևորագույն նախապայմանը և ծրաշխիքը քանին է: Հայաստ-Ազգին ի վիճակի էր ռազմադաշտ դուրս քեզել 700 մարտակառքից և 10.000-անոց հետևազորից բաղկացած քանակ, որն այդ ժամանակաշրջանի համար մշամակալից ուժ էր<sup>251</sup>: Հայաստայի գինվորները մերքրավկել են խեթական քանակ՝ որպես առավել մարտունակ գորական ուժ: Ազգին գինվորները խեթական քանակում ծառայել են նաև՝ որպես մարտակառ վարողներ: Այսպիս, խեթական արքա Սուլավիլությունաս Ի-Օ. Հայաստայի արքա Խոնկեանայի հետ կմքելով պայմանագիր, պահանջում էր նաև, որ Խոնկեանան իրեն հարկ նորած դեպքում

ստեղծագործող, Երևան, 2004, էջ 136): ԿԲՁ Ա 4 Ա 93 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 96).

<sup>250</sup> Götze A., Die Annalen des Muršiliš, S. 94-99.

<sup>251</sup> Կոյլի տեսողական, էջ 122:

գործ տպամատդի<sup>252</sup>: Մուկրսիս Ա-թ (Ք.ա. 1321-1295թ.) իր տարեօքության 10-րդ տարվա իրադարձությունների մեջ նշում է, որ Արփասա հայասական քաղաքն ավարի մատնելուց հետո հայատակեցրել է մաս Դուգգամա քաղաքը, որի բնակչները դիմադրություն ցույց չեն տվել: Խեթական արքան քաղաքը չի ավերում, փոխարեն՝ նա 3000 դրագամացիների որպես զինվորներ և կառամարտիկներ, տանում է Խարքի<sup>253</sup>: Խնդիրն խոստն փաստ է, որից կարելի է եզրահանգել, որ քաղաքը և նրա շրջակա տարածքը, որտեղից հնարավոր եր զերեվարն 3000 զինվոր, ունեցել է միծարամակ բնակչություն:

Հետաքրքիր փաստ է նաև, այսպիս կոչված, «Խոռվաճայի պայմանագիրը»՝ խեթահայասական միջամտական հարաբերությունների ամենավառ դրսւորումներից մեկը<sup>254</sup>: Պայմանագրում հիշատակված Հայասայի մարդկանց (ավագներ կամ աշխարհաժողով) որպես դաշինքի մասնակից կողմէ հիշատակելը վկայում է այն նասին, որ Հայասա-Ազգի քաջակորի իշխանությունը քաջարձակ չի եղել: Հավանաբար, այն մոտ է եղել «Կյուրութեղիայում» Ըստնովոնի հիշատակած հայոց քաջակորի իշխանությանը, որը, ինչպես և հոմերուսյան Հունասուանում, սահմանադրակից է ավագների խորհրդով՝ բուկեով (Յօսոլի), և ժողովրդական ժողովով՝ Էլլեսիայով (Էսօլիուս): Տեղին է հիշատակել մաս հայոց աշխարհաժողովը, որը դարեր շարունակ պետականակիր կարող է հանակարգ է հանդիսացել Հայաստանում և որի հիմքերն, ամենայն հավանականությամբ, կարող ենք գտնել հայատական ժամանակահատվածում:

Հայասա-Ազգիում, ամենայն հավանականությամբ, գոյություն է ունեցել նաև քրմական դաս: Հայաստանում հայտնարեր-

<sup>252</sup> Friedrich J., Staatsverträge des Hattī-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 117, 132.

<sup>253</sup> Götez A., Die Annalen des Muršiliš, S. 130-139.

<sup>254</sup> Friedrich J., Staatsverträge des Hattī-Reiches im hethitischen Sprache, S. 103-163. Çanlıba O., Die Hajaşa-Verträge Hattis, S. 59-75, CTH 42.

<sup>255</sup> Կրկավաշարյան Ս., «Հիմ Հայաստանի պետական կառուցվածքը (Ք.ա. VI-ն. թ. 17-րդ և 16-րդ դար), 2005, թ 96:

փած վիճական տվյալներից և Մովսես Խորենացու վկայություններից փառակ կերպով կարծի է եղուահանգել, որ քրմապետը Հայաստանում ևս, ինչպես և հարևան Երկրներում, բազավորից հետո Երկրորդ դեմքն էր. Երբեմն քրմապետի պարտականությունները նույնիսկ միահյուսվում էին բազավորի պարտականություններին, և միևնույն անձը հանդիսանում էր միաժամանակ և բազավոր, և քրմապետ: Ասվածը կարծի է վերագրել նաև Հայաս-Ազգի ժամանակաշրջանին, եթու հաճախ բազավորը հանդես էր գալիս նաև՝ որպես քրմապետ<sup>226</sup>.

Հայասայի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրության մեջ, որը, բերլա, խեթական և հայաստական արքաների միջև կնքված համաձայնագրի մի հատված է: Այդ արձանագրության մեջ հիշատակվել են տասնչորս հայաստական քաղաքների աստվածներ<sup>227</sup>: Ըստ այդ ցուցակի՝ կարծի է եղուահանգել, որ Հայասայի այդ 14 քաղաքավայրերում գոյություն են ունեցել ուսանաբներ՝ որպես այդ աստվածությունների պաշտամունքի կենտրոններ:

Խեթական սկզբնադրյարբեններում հիշատակվում են Հայաստ-Ազգի երկու տասնյակից առևիշտ քաղաքներ (բնակավայրեր) (Արիստա, Արիստա, Արմիս, Գագու[...], Գասմիյախա, Դուզգանա, Լախիրիսիլա, Լիսոսա, Խոյլիմանա, Խորտալասա, Կամ[...], Հայրա-սա, Պախիսուտեյա, Պատունու[...], Պարրայա, Տախ(ա)նիսարա, Տամատոսա, Տավատենա, Ուռկունիսա, Ուրա, Զադկուսա):

Այսպիսով, խեթական սկզբնադրյարբեններում հիշատակված Հայաստ-Ազգի քաղաքները փաստում են այդ երկրում քաղաքային կյանքի գոյության և այդ քաղաքներում հոգեւոր պաշտամունքի կենտրոնների առկայության մասին:

Հայկական լոռնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի բնակավայրերը և բնող-շեները քաղաքական, առնորոշական, տնտեկակավայրերը

<sup>226</sup> Մովսեսան Ա., Հայաստանը Քրիստոնից առաջ եղրող հազարամյակում, Երևան, 2005, էջ 92 (տես՝ նորմ 2):

<sup>227</sup> Forrer E., Արակա-Ազգ, Հայաստան, 1931, № 9, Տ. 6.

սական և ուազմական կենտրոններ էին<sup>258</sup>: Դրանք տեղաբաշխված էին հիմնականում կիլոպյան տիպի ամրոցների շորք<sup>259</sup>: Այդիսի հուշարձանները տառմասիրվել են Հայկական լեռնաշխարհի տարրեր ճամփորում՝ Արարատյան դաշտավայրում, Ծիրակում, Վանադրում, Կարինի, Սուշի շրջաններում, Վասպուրականում, Տաշիր-Շորագետում, Զավախրում, Թոնդրում, Արցախում և այլուր<sup>260</sup>:

Թարձր Հայքի և շրջակա տարածքների հնագիտական պեղումները նոր լույս են սփոռում Հայաստանի պատմության, մշակույթի և նրա քաղաքական ու տնտեսական կապերի վեա: Կատարված հնագիտական պեղումները, սակայն, հնարավորություն չեն ընձեռում փաստել այդ տարածքուն խոշոր բնակավայրերի գոյության մասին. որպան կարենի է փնտրել դեպի արևելք ընկած տարածքում հետագայի Մեծ Հայքի Տուրքերան, Այրարատ և Տայք աշխարհներուն:

«Խուլկանայի պայմանագրի» մի հատվածից կարենի է եղակացնել, որ հայաստաններն ունեցել են զարգացած երկրագործություն և ամասնապահություն, քանի որ խերական կողմն ի դեմս Սուպափլուլիումա Ի-ի, սպասում էր պայմանագիրը խախտելու դեպքուն ավերել և ոչնչացնել նրանց տները, դաշտերը, խաղողի այգիները, արոտերը, անասունները և այլն<sup>261</sup>:

Ներկայիս Երգումի մարզի տարածքը, որտեղ գտնվում են Սոս, Գյուղելովա, Բլուր, Կարազ (Արծո) հնավայրերը, հնուց ի վեր հայտնի է եղել իր տնտեսական նշանակությամբ: Տարածաշրջանի գյուղատնտեսական զարգացմանը զգալի կերպով

<sup>258</sup> Аревян Г., Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков, Научные сообщения, Москва, 1978, № X, с. 91-118.

<sup>259</sup> Belli O., Konur E., Archaeological Survey on Early Iron Age Fortresses and Necropoleis in Northeast Anatolia, Istanbul, 2001, p. 331-335. Orfez A., Research on the Cultures of East Anatolia in the 2<sup>nd</sup> Millennium B.C., Istanbul, 2001, p. 326.

<sup>260</sup> Карапетян Л., Промысловое хозяйство и духовная культура племен Армении в эпоху поздней бронзы и раннего железа, Ереван, 1980, с. 31.

<sup>261</sup> Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 Т., 1930, S. 134-136 (առև. հավելված 10).

նպաստել է գետային ջանցը: Մարզի տարածքից են սկիզբ առնում Հայկական լիոնաշխարհի խոշոր գետերից երեքը՝ Արևմտյան Եփրատը, Արարս ու Նորուսը, որոնք իրենց ջրային խիստ ցանցով ոռոգման լայն հնարավորություններ են ստեղծում երկրագործության զարգացման հաճար: Այդ առունելի առավել բարեմապատ պայմաններ տնեն Երգրումի ու Թասենի դաշտերը<sup>262</sup>: Հայաստանի ոչքրոնզեղարյան բնակատեղինները, որոնք, որպես կանոն, զնտեղված են համեմատարար բարձրադիր վայրերում, զնտերի ափերին կամ նրանցից ոչ հետու տափարակ ու բարերեղ դաշտերի մեջ, զրավում են մի քանի հեկտար տարածություն: Բնակատեղինների ու նրանց կից գամբատարածությունների այսպիսի տեղադրությունը լայն հնարավորություններ է ստեղծել մշակելի հողատարածությունների ոտոգնան հաճար: Երկրագործությունը զարգանում էր զնրազանցազն մեծ ու փոքր գետերի, արհեստական ջրանցքների ու առուների ջրերով ոռոգվող հարրակներում ու բարերեղ հովիտներում: Երկրի բարձրադիր շրջաններում՝ ալպյան մարգագետիններին կից, ստեղծվում էր ջրանցքների ու ջրավազանների մի ամրող համակարգ<sup>263</sup>:

Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում զարգանում էր նաև անասնապահությունը: Այսօնդ, ի տարբերություն նրկի նախալեռնային ու լեռնային շրջանների, որտեղ հիմնական հարստությունը մամր եղջերավար անասուններն էին, առաջատար նշանակություն էին սուանում խոշոր եղջերավար անասունները, որոնք լայնորեն օգտագործվում էին երկրագործության մեջ՝ որպես քաշող ուժ<sup>264</sup>: Տարբեր բնակավայրերի պեղումների ժամանակ գտնվել են ընտանի կենդանիների՝ կովերի, եզների, ոշխալմերի, այծերի, խոզերի, ավանակների, ձիերի ու շների կմախսների մնացորդներ<sup>265</sup>:

<sup>262</sup> Սևառանյան Ա., Երգրում, Երևան, 1994, էջ 29-30:

<sup>263</sup> Կարապետի Ա., մշվ. աշխ., էջ 33-44:

<sup>264</sup> Նույն տեղում, էջ 53-72:

<sup>265</sup> Նույն տեղում, էջ 53-72:

Հայաստական քանակում նդել են մարտակառքներ, և դրանից եղնելով՝ կարելի է նգրակացնել նաև Հայաստան-Ազգիում ծխարութուրյան գոյության մասին։ Չիարութուրյունը դարեւ շարունակ համդիսացնել է Հայկական լեռնաշխարհի բնակչության հիմնական անամապահական ուղղություններից մեկը։

Փաստական նոր նյութի և հայտնի աղջրութների քննական մեկնարարանուրյունը բույլ է տական այստեղերացում կազմել Հայաստան-Ազգի մասին։ Այն ուսումնական նշանակալի կարողություններ ունեցող պետական միավոր էր, որն ի վիճակի էր հավասար պայքար մոդել ժամանակաշրջանի հզոր տերություններից մեկի՝ Խարբի դեմ։ Որոշակի ժամանակահատվածում Խեթական պետության և Հայաստայի միջև դաշնակցային հարաբերություններ էին հաստատվել։ Հայաստան, որպես պետական միավոր, ունեցել է իր տարածքը, քանակը, արքունիքը, դիցարանը, քաղաքացին կենտրոնները։ Դատելով «Խուկկամայի պայմանագրից»՝ քառավորի իշխանությունը, հավանաբար, փոխանցվել է ժառանգարար։ Հայաստայի բնակչությունը վարել է նստակյաց կյանք, ունեցել է բարի կամքացած տնտեսություն։

Հարևան լինելով Խեթական պետությանը՝ Հայաստան չէր կարու իր վրա չկրել նրա քաղաքական, մշակութային ու տնտեսական ազդեցությունը։ Սակայն միևնույն ժամանակ, համենս զարով որպես ինքնուրույն պետական և մշակութային միավոր, Հայաստան-Ազգին իր ամբողջականությամբ նաևն էր կազմում Հայկական լեռնաշխարհի միասնական քաղաքական, մշակութային, տնտեսական արեալը, որի արմատները Ք.ա. III հազարամյակում էին, և որն իր շարունակական զարգացումն է ունեցել նաև հետագա դարերում։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՄԾԱԿՈՒՅԹԸ

### *ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՑ*

Հայկական լեռնաշխարհում Հայաստանի տարածքային ցողովրկման խնդրի լուծմանը զգալիորեն նպաստելու է զայս հնագիտական նյութի և խեթական սեպագլու աղբյուրների տվյալների համապատասխանությունը։ Լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան հնագիտական վայրերի ժամանակագրական շրջայի մեջ ընդհանուր յունական գույքում համարակալված հնարավորություն է ընձեռվում համակարգված մոտեցնամբ ըննարկել Հայաստան-Ազգի հուշարձանների պատմական նշանակության խնդիրը։

Հայաստանի բազավորության պատությանն, ըստ խեթական սեպագլու սկզբնապրյուրների, ընթացել է Ք.ա. XIV-XIII դդ.։ Այդ ժամանակահատվածը հնագիտուրեն համբաւմում է զարգացած կամ ոչ բրոնզի ժամանակաշրջանին։

Հայաստան-Ազգի տարածքը մասնագետների մեծ մասը տեսլու լուծում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում՝ որպես կենտրոն նշելով հիմնականում Թարձր Հայրը և հարակից տարածքները<sup>264</sup>։ Ներկայումս այդ տարածաշրջանում փաստագրված նմ հնագույն ժամանակներից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին վերաբերություն մի շարք հնավայրեր։

<sup>264</sup> Forster E., Hajaica-Azzi, Статистика, 1931, № 9, S. 11. Այրենց Ն. Հայրականը պատմություն, Երևան, 1972, էջ 46; Կառավար Ռ., Խեթա-սովորելու գրքն, Երևան, 1948, էջ 27. Երեման Ս., Հայ ժողովորի կազմագրումն ընդացը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30; Թույան Ս., Արք. Ք. դարի մերձափրարելեցան ճզմաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 166.

Կարին-Երգումի շրջանը Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան նշակութային արևալի մասն էր կազմում: Այս տարածքը մտնում էր Հայաստ-Ազգի կազմի մեջ և կապող կամուրջ էր համեմտանում մի կողմից Արարատյան դաշտավայրի. Գուգարքի բրոնզեդարյան գարգացած շրջանների, նյու կողմից՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների բնակավայրերի միջև: Կարազ, Բյուր, Գյուղելովս, Սու հնակայրերն այս տարածքում ուշրոնզեդարյան բնակավայրերի գոյության կարևոր վկայություններն են:

Երգումի շրջանում կատարված հնագիտական պեղումներն ի հայու թիրեցին Ք.ա. II հազարամյակի, մասնավորապես՝ ուշրոնզեդարյան նշակույրի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում: Այս փառառը հիմնված է Երգումի շրջանի մի շարք բլուրներից, նաևնավորապես՝ ներկայիս Բուլգարական հողուր (գտնվում է Երգումից 30կմ դեպի արևելք՝ Հասանկալայի մոտ), Սու հյույսուր, Ռոգոմահնող (գտնվում է Երգումից 15կմ արևելք), Էսկիշենից թեփն (գտնվում է Երգումից Տեղմ արևելք) կոչվող հնավայրերից պեղված խնցեղենի ուսումնաժողովրյան վրա: Այս բլուրներից պեղված նյութը պատկերացում է տոպիս այն մասին, որ այս շրջանում վաղբրոնզեդարից մինչև երկարի դար ընկած ժամանակահատվածում բնակավայրեր են գոյուրյուն տնեցնել: Հնակայրերից պեղված խնցեղենը պատրաստված է բրուտի անիմի դրոզի վրա՝ ավազախառն կամից, մակերեսը ևս ու կարմրավուն է, լավ հելլված է և տեսի տեղական նշակույրին բնորոշ զծեր, սակայն գորկ չէ նաև խերական նշակույրի որոշ ազդեցությունները<sup>257</sup>.

Sos Höyük (Սոս) հնավայր-թուրուր գտնվում է Երգում քաղաքից 25կմ դեպի արևելք: Ականա 1994թ.-ից՝ բուրք-ավատրակական միացյալ հնագիտական արշավախումբն Անտոնիո Սազոնայի զվարարությամբ ավելի ինտենսիվ կերպով շարունակեց բնակավայրի պեղումները: Պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը վերաբերում են տարբեր ժամանակաշրջանների՝ առնվազն Ք.ա. III հազարամյակից սկսած մինչև միջնադար (XIIIդ.):

<sup>257</sup> Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Üzerine Araştırmalar. AST, 1988, № 5/2, s. 51-65.

Ժամանակագրական տարրեր շերտերի առկայությունը վկայում է, որ Սոսում կանոն հարատևել է դարեր շարունակ։ Սոսը բնակեցված է եղել նաև Ք.ա. II հազարամյակում։ Այս հնավայրի հյուսիսային մասն ուշրոնզեպարյան ժամանակահատվածում արտադրական կենտրոն է եղել։ Այրված և կտրուված ուժիրների և օջախի մնացորդները, որոնք գտնվել են այնուհետ, հաստատում են, որ այդ մասում գտնվել է մասմբերքի մշակման կենտրոն։ Սոսում գտնվել են տմբերի և շինուարութեանների հետքեր։ Բոլոր շերտերում հայտնաբերված կառույցները բաղկացած են գալիքներից, կլոր կացարամներից ու հարակից բառանելյունի տմսուական շինուարութեաններից, որոնց հարդախտան աղյուսն պատճը հննվում են բարեկածածածերի վրա։ Տները իրենց ներքին հարդարանքով նման են Հայկական լոռնաշխարհի արևելյան հաստվածի նմանատիպ շինուարութեաններին, սակայն տարրերվում են ճախագծով և կառուցվածքով։ Տների մոտ գտնվել են նաև եռորդ՝ նախատեսված սմբաթերք պահելու համար։ Սոս հնավայրում հայտնաբերվել են օրինիանեն աշխատանքային գողոժքներ։ Այսուհետց պեղված խեցեղենը սերտ առնչություն ունի Թուղթի խեցեղենի հետ։ Դրա գերակշռող մնացանությունն ունի ու փայլնեցված մակերես և գումավոր, սովորաբար կարմրավուն ներքին մաս։ Երեսն հանդիպում են նաև գորշ, փարզագույն և մոխրագույն մակերես ունեցող արմաններ։ Գտնվել են լայնափոր սափորներ, որոնք ունեն «օնախիջևանյան» տիպի բունակներ։ Խեցեղենի վրա արևած նախշագարբեր հիմնականում ամորթների վերին մասում են։ Սոսի խեցեղենը սերտորեն առնչվում է նաև Բլորի և Գյուղօղումայի խեցեղենի հետ<sup>268</sup>։

<sup>268</sup> Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Anatomisi, s. 58-59. Sagona A., Sagona C., Özkorucuklu H., Excavations at Sos Höyük 1994, AnSt, 1995, № 45, p. 193-218. Լույզի, Excavations at Sos Höyük-1994, KST, 1995, № XVII, 1, p. 151-155. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howell S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 183-186. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, KST, 1998, № XX, 1, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, ANES, 2000, № 37, p. 66-68.

Երգումից 16կմ դեպի հյուսիս-արևմուտք տեղորշվում է Աշանավոր Karaz (Կարազ) հմագիտական վայրը: Կարազը (Դարարգ, Կար Արծն) գտնվում է հին հայոց Արծն քաղաքի մոտ: Այսուհետ պեղումներ են իրականացվել դեռևս XXդ. 40-ական թթ.: 1942թ. Հ. Թոշայը և նրա օգնական, Ք. Թուրիխանը կատարել են փորձնական պեղումներ, այնուհետև դրանք շարունակել են 1944թ.-ին:

Կարազի համայնտում գտնվել են նյութեր, որոնք վերաբերում են Էնտոլիքից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Այնտեղ հայտնաբերվել են կավի կլոր անորմեր, լայնաբերան սավորներ, ծոսքի ապարանջան, կավի օջախներ և այլն: Խնցեղեմը հիմնականում տեղական է՝ բնորոշ գարդանախշերով: Հայտնաբերվել են մեծ քամակուրյամբ օրինիանե աշխատանքային գործիքներ: Այսպիս կոչված՝ «Կարազի մշակույթը» նույնպիս սերտ առնություն ունի Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակույթի հետ<sup>266</sup>: Ըստ հնագետ Ք. Քյորքեմի կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմույան շրջաններում իրականացված հետազոտությունների արդյունքների՝ Կարազի նյութական մշակույթի ոճը հանդիպում է Բարերդի և Երզնկայի շրջաններում, այն իր արեալի մեջ էլ ընդգրկել նաև Երզնկայից հյուսիս գտնվող Բուլը Հօյուկ (Բլուր) հնավայրը: Կարազի նյութական մշակույթի ոճը ազդեցությունը նկատելի է նաև Վան լճի ավագանում<sup>267</sup>:

Բուլը (հայկական՝ Բլուր) նույնպիս հայտնի հնավայր է: Այն գտնվում է Երգումից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում նույնպիս ուսումնասիրություններ են կատարվել դեռևս XXդ. 40-ական թթ.-ին<sup>268</sup>: Բլուրում պեղվել են Ք.ա. II հազարամյակի դրամ-

<sup>266</sup> Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koşay H., Turfan K., Erzurum-Karaz kazisi Raporu, TTKB, 1959, № XXIII, s. 349-413. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 152-158.

<sup>267</sup> Lamb W., Անդ տեղում:

<sup>268</sup> Koçken K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi arastirmaları, TTKB, 1944, № VIII/32, s. 659-680. Կոչկեն, Կuzey-doğu Anadolu prehistoryasında

բարաններ, որտեղից հայտնաբերվել է մեծ քանակորյամբ խեցինեն: Ուշբոնզիդարյան թյուրի գերեզմաններն ուշազրավ ծե լիրիսց ձևով ուղափում: Թյուրում գտնվել է երեք գերեզման՝ 2 մ երկարությամբ: Մահացածների դիակները փարարփած են եղել պատամքի մեջ: Թաղվածներց մնեց (III գերեզման) մի ժեր կիմ է, որի հետ հայտնաբերվել է արծարել կրծքազարդ, իինց բրոնզն ասել և երկու բրոնզն ապարանջան: Կարևոր է շնչուել, որ երկու գերեզմաններում գտնված բրոնզն նետասայրերը շատ նմանատիպ օրինակներ ունեն Թունդրի համաժամանակյա գտածոնների մեջ: Պեղված բրոնզն նյութերը բավարպւում են Ձ.ա. XIII դ. վերջով և XIV դ. սկզբով, իսկ գերեզմանափութերում գտնված կավանորների մի մասը՝ Ձ.ա. XIV կամ XIII դարերով: Թաղման արարողությունների ժամանակ ընտանի կենդանիներ են գոհարերվել, և նրանց ննացորդները դրվել են զերեզմանափութերում<sup>221</sup>: Այսպիսի բարդությունները փաստում են, որ մեր նախնիները հավատացել են անըռչիրիմյան կյանքի գոյությանը, այդ իսկ պատճառով դամբարանների մեջ անյունի հետ միասին տեղակորել են կերակուր ու տնային սպասքի առարկաներ, գեմքեր և աշխատանքային գործիքներ, զարդեր, սպանված կենդանիների մարմիններ, որոնք պետք է շարումակեն ծառայել տիրոջ հանդիքայի կամրում:

Ներկայումս Güzelova (Գյուզելովա, հայ: Գեղեցիկ դաշտ) կոչվող հուշարձանը գտնվում է Էրզրումից 15կմ դեպի հյուսիսարևելք: Այսունի պեղումներ կատարվել են 1961թ.-ին: Պեղումներից ստացված նյութը վերաբերում է Էնեոլիթից մինչ միջնադար ընկած ժամանակահատվածին: Այս բնակավայրը ևս բնակեցված է եղել Ձ.ա. II հազարամյակում<sup>222</sup>:

Bayburt çevresinin yesi, 1945, № III/5, s. 465-505. Koşay H., Pahar ve Güzelova, TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Arastırması, s. 45-76. Çentijli, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, XXX, s. 153-158.

<sup>221</sup> Koşay H., Vary H., Die Ausgrabungen von Pahar, Ankara, 1964.

<sup>222</sup> Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967. Koşay H., Pahar ve Güzelova, s. 91-94. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158.

Բլուրից, Գյուղելովայից գտնվել են բրոնզ ապարանջաներ, ուղղմբներ, խնցեղեն, ուկրե, օրսիդիան և փայտն իրեր<sup>274</sup>: Բլուրի դամբարաններից պեղված անորները Կարազից, Գյուղելովայից գտնված անորների հետ մի մշակուրային շղթա են կազմում: Մյուս կողմից Բլուրի, Գյուղելովայի անորների ձևերը նույնպես սերտ առնչություն ունեն Ընտաշխարհի արևելյան մասի Առյունատիպ խնցեղենի հետ: Բլուրից գտնված իրերը գուգահեռներ ունեն Թուերի մշակույթի հետ: Այդ նմուշները բավարկում են ք.ա. XIV-XII դարերուց: Չուզահնոներ կարելի է անցկացնել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան մասից և Կարազից: Բլուրից գտնված ժայրակալների, դաշույնների, բրոնզ ապարանջանների, ուղունքների միջև: Բլուրի բրոնզ ապարանջանների և ուղունքների տիպեր կարելի է նկատել հետագա Վանի բազավորության Առյունատիպ օրինակներում<sup>275</sup>:

Ուշրունքնարյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բարձր զարգացման էր հասնել Երկրագործությունը: Ք.ա. II հազարամյակի վերջին դարերի բնակչայրերում հնագիտները գտել են կարասներ, հացահատիկի բազմարիկ մեծ նորեր: Երկրագործության բարձր զարգացման մասին են խոսում են ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված տարրեր բոյսերի զարդապատկերներու ու պտղաբնիւթյան կանացի արձանիկներու, որ բրոնզնարյան բնակչայրերում համեմատում են ամենուրեք, այև զանազան նյութերից բաղկացած գործիքների բանակն ու բազմազանությունը, որոնք ծառայում են վար ու ցանքի, բերքահավաքի ու զյուշատնտեսական նրբության վերամշակման համար<sup>276</sup>:

<sup>274</sup> Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yaşanan tarih öncesi arkeolojileri, s. 659-680. Նոյնի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 465-505. Koçay H., Pülüm ve Güzelova, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüğlerin Yüzey Arkeolojisi, s. 45-76. Նոյնի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158. Koçay H., Vary H., Güzelova Kazısı: Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

<sup>275</sup> Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 154-155.

<sup>276</sup> Карапетян Л., Прогрессивное хозяйства и духовная культура поздней Армении в эпоху поздней бронзы и раннего железа, Ереван, 1980, с. 44-53.

Տնտեսության հիմնական ճյուղերին առընթեր զարգանում էր Հայկական լնոնաշխարհի ուշքրոնզեղարյան արհեստագործությունը, առաջին հերթին՝ Խեցեզործությունը, որն անմիջականութեն կապված էր Երկրագործական և անասնապահական մթերքների պահպանման, վերամշակման, տնային տնտեսության այլևայլ կարիքների հետ: Թրուտները կավից պատրաստում էին տնտեսական և պաշտամունքային իրեր՝ հոկա կարասներ, զանազան ամանեղին, կափարիչներ, պատվանդամներ, օֆախներ ու նրանց տարատեսակ հեմակներ, պղնձն իրեր ծովելու կաղապարներ, մարդու և կենդամիների արձանիկներ:

Ինչպես Արևելի Երկրագործական մարգերում, այնպես էլ Հայաստանի լնոնաշխատներում յուրաքանչյուր «համայնական տուն» բաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միաւոխ մեկուսացված խմբերից: Կլոր կացարանների շրջը համախմբված քառանկյունի շինություններն իրենց մեծ ու փոքր հորերով, շտեմարաններով կամ պարզապես հարք հաստակենքով, հացահատիկի պահեստներ էին ու փարախներ ըմտանի կենդամիների համար: Կլոր կացարաններում որոշակի դասավորությամբ հանդես են զալիս կատվակերտ երկարուկ նառարանները կամ մահճակալները, հատակի մեջ բաղկած կարասներն ու պատի որևէ անկյունում պատրաստված օջախը՝ մոխրի ու սևացած ամանների մնացորդներով: Օժախների մոտ հաճախ զանգույն են սանդեր, ծնծիշներ, աղորիներ: Կացարանների կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եղին կանգնեցվում էր պտղաբերության կամացի բարե արձանիկը:

Հայկական լնոնաշխարհի մյուս շրջանը, որի Բ.ա. II հացարամյակի հմագիտությունը կարևոր է Հայաստ-Ազգի պատմության ուսումնայինության համար, նորու ու Գայլ (Լյուկոս) գետերի հովիտներն են:

Ուսումնասիրուղների մեծ մասը, վերականգնելով խերական քաղաքական աշխարհագործությունը, կարծում են, որ Անրին Երկրության կամացի Սնբառիս քաղաքի և նրան ու Գայլ

զետերի ավագաններում<sup>277</sup>: Վերին Երկրից արևելյա գտնվում էր Հայաստան: Վերին Գայլ զետի հովիտը, հավանաբար, այն շրջանն էր, որտեղ կասկական արևելյան ցեղերը շփվել են հայաստիների հետ:

Այս տարածքում՝ մերկայիս Գյումուշխանեի նահանգի Բարերդի և Կելիկուի (անունն ածանցվում է Գայլ զետի անունից և նրա աղավաղված տարրերակն է Գայլ զետ-Կելիկու<sup>278</sup>) շրջաններում, 1980-ական թթ. վերջուն սկսված հնագիտական աշխատանքներն ի հայտ բերեցին բազմաքիվ հնավայրեր<sup>279</sup>: Ուսումնասիրվել են 60-ից ավելի հնավայրեր, այդ թվում նաև՝ հնագետ Ք. Ջյորբենի կողմից հիշատակված 5 վայրերը Բարերդի շրջանում, որտեղ նա նոյն էր 1940-ական թթ. իր հետազոտական արշավամբի ժամանակ<sup>280</sup>: 12 միջին շափի հնավայր-բլուրների մեջ նե նաև Տերեսիկ (հայ.՝ Փոքր Կատար, որի նասին զեկուցել է Ք. Ջյորբենը՝ որպես *Siptoros*) Սուրբ Թորոս հայկական բնակավայրի անվան աղավաղված ձևը<sup>281</sup>), Kitre, Gundulak, Pülür Տերե և այլ առավել լավ ուսումնասիրման կարու մի շարք հնավայրեր: Մեծ բլուրներ են Տօքաւա-6 (զեկուցված Ք. Ջյորբենի կողմից Hindi անվամբ), Բլուրը՝ Գօշչեդեր գյուղում, Karakilise Տերե-6 (Աև Խկենեցու զազար), Çorak Հոյնկ-ը (Ծորակ հայկական բնակավայրի աղավաղված անվանումը<sup>282</sup>), Cengiler Տերե-6 (Յանքի լեռ), Bütük Տերե-6 առանձնաբարված Կիչը Տերե-ից բամբարդով, Kilise Տերե-6 (Վամբի զազար) և այլն<sup>283</sup>: Բարերդի շրջանում հետազոտությունները

<sup>277</sup> RGTC, VI, S. 293-294.

<sup>278</sup> Մելքոնյան Ա., Երզում, Երևան, 1994, էջ 32:

<sup>279</sup> Saguna A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: Pre-Classical Period, AST, 1989, № 7, p. 425-433.

<sup>280</sup> Kökten K., Kuzey-doğa Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505.

<sup>281</sup> Մելքոնյան Ա., Երզում, էջ 161:

<sup>282</sup> Նույն տեղում:

<sup>283</sup> Saguna A., նշվ. աշխ., էջ 425-433:

շարումակվեցին նաև ՀՀդ. 90-ական թթ.-ի սկզբին՝ Ենուկեր Հոյն-ի պեղումների հետ միասին<sup>284</sup>.

Ենուկեր Հոյն (Բյույյորքին, հայ. Մեծ գագար, այլ կերպ կոչվում է նաև Իկիզեր) կոչվող հնավայրը գտնվում է Բարերից 30կմ դեպի հարավ-արևմուտը՝ Չիտեա (Չիփերաշ) գյուղի մոտ։ Այն Բարերից դաշտում է՝ պատմական Սպիր գավառում։ Այս հնավայրը հայտնագործվել է 1988թ.-ին Մելքոնելի համալսարանի արշավախմբի կողմից, որը կանոնավոր պեղումներ սկսել է 1990թ.-ից։ Ընդհանուր առմանը, հնավայրից պեղված նյութը բազմում է վաղրոնզնդարից մինչև վաղ հոտմական ժամանակաշրջանը։ Բյույյորքինից Ձ.ա. II հազարամյակի խեցենոց նոյնականացնելու մոտ է, պատրաստված բրուտի անիվի վրա, վայելեցված է ու զարդանախշերով<sup>285</sup>, որը, կարծում ենք, նոյնական առնչվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակուրային ձենքի հետ<sup>286</sup>։

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որի Ձ.ա. II հազարամյակի հնագիտուրյունը կարևոր է ուսումնասիրության հսկայական նորույն գետի հովիտն է։ Հայկական լեռնաշխարհում Աւանդի ավագանի ամենաջրառու գետը նորույն է։ Այն նաև Լեռնաշխարհի ամենաջրառու գետերից մեկն է։ Ներ հենց օգտագործվել է լաստառաբան նպատակներով։ Արդվիմից ցած գետը նավարկելի է ոչ յուրանիստ նավերի համար։ Թագմանետաղներ-

<sup>284</sup> Sagona A., Bayburt Survey, 1990, AST, 1991, № 9, p. 397-403. Կույմի, Bayburt Survey, 1991, AST, 1992, № 10, p. 261-268.

<sup>285</sup> Sagona A., Pemberton E., McPhree I., Excavations at Enyuktepe Hoyuk, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Կույմի, Ենուկեր Հոյն 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p. 161-164.

<sup>286</sup> Ներկայիս բարք հնագիտությի մոտ կա շինուալիրված մոտեցում Արևմտյան Հայաստանի լրաց նրանց՝ Արևելյան Անապատինայ ուշրուտներարյան մշակուրը առանձնահատկություններում համաժամանակյա առանձնահատկություններ Հայկական լուսաշինուածքի արձնական մասի համաժամանակյա մշակուրից՝ փարձելով որունք ու մը կազ շնունդ այլ երկու մասերի ուշրուտներում մշակուրը ճշգկ, ավելին՝ փոքր է արվուն կազ տեսնեց Կենանետական եղանական բարձրացուցան և լինաշխարհի այլ մասի ուշրուտներարյան մշակումների մեջ (տե՛ս Güneri S., Erzurum Karaz, Pufur ve Güneşova'n'da gece Karaz Kohesi'ni evresi Yerleşmeleri ile ilgili arkeolojik keşfeler, Ծոցած յնեւու ու լուսական արքայության պատմություններ, 2007, ս. 267-324):

ըք, ուսկին, արծարք, գորշ ածխի պաշարները նորոյն գետի ավազանում մեծ հնարյավորություն կարող էին ստեղծել լոռնահանրային գործի զարգացման համար<sup>287</sup>:

Բարերդի, Կելիկստի, Երգրումի շրջանների հնավայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի մի մասը վերաբերում է ուշ բրոնզի ժամանակաշրջանին. և դրանք կարելի է համարել Հայաստայի նյութական մշակույթի իրեղին փաստեր: Դրանց բազմության համար ամենակարևոր տվյալները տալիս են հայտնաբերված խնցեզործական իրերը:

Բարձր Հայքի և հարակից տարածքների հնագիտական պեղումներն ի հայութեանցին հարուստ խնցեզործական արտադրանք: Ընդհանուր առօնամբ, այդ ժամանակաշրջանի ամբողջ խնցեղենը պատրաստված է բրուտի անիվի վրա և դասակարգվում է երկու հիմնական խմբերի՝ միաերանգ և բազմերանգ գումազարդ խնցեղեն և հասարակ, առանց նախշազարդերի խնցեղեն: Անորների կավի թիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք պատրաստված են տեղում տեղական հունըով: Բազմերանգ գումազարդված անորները պատրաստված են բարձր վարպետությամբ և տեխնիկայով: Զարդարութիվները ցույց են տալիս առաջնարաց՝ ավելի հարուստ երկրաշափական մուտիվներ, վերաբիր կենդանակերպ զարդեր: Երկու խմբերում դիտարկվող ընդհանուր հատկանիշներից մեկն այն է, որ զարդարութիվներն արված են անորների վերին հատվածում: Միաերանգ գումազոր մուտիվները կատարված են սև գույնով՝ բաց դարչնագույն ֆոնի վրա: Անորները հիմնականում լավ փայլեցված են: Բազմերանգ խնցեղենի վրա, որը համեմատարար ավելի բարդ է իր բազմատեսակ մուտիվներով, բան միաերանգ խնցեղենից, զարդարութիվների մեծ մասը երկզույն են, շատ հաճախ՝ աղյուսագույն ու սև, կամ աղյուսագույն ու դարչնագույն: Նախշազարդերը զերազանցապես ներկայացված են մեծ ու փոքր եռանկյունի-

<sup>287</sup> «Արքիեպահ Հ. Հայկական իտուաշխատ», Երևան, 2000, էջ 187-188:

ների, կենդանիների ու նրկրաշափական պատկերների տեսքով<sup>248</sup>:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ներկայիս էրզրումի, Գյումուշյանեի մարզերի տարածքը (հնուագայի Մեծ Հայքի Տայք, Բարձր Հայք նահանգների տարածքի մի մասը, Այրարատի արևմտյան գավառները, Տորութքրան նահանգի հյուսիսային գավառները և Փոքր Հայքի հյուսիս-արևելյան մասը), որտեղ գտնվում են վերը նշված հնավայրերը, ոչ բրոնզեդարում մասն եր կազմում մշակուրային այն ընդարձակ տարածքի, որմ, ընդհանուր առմանը, զբաղեցնում է մերկայիս Վրաստանի, Թուրքիայի Սերաստիայի շրջանի, Կասպից ծովի և Ուրմիա լճի միջև ընկած տարածքը<sup>249</sup>, այսինքն՝ Հայկական լիոնաշխարհը:

<sup>248</sup> Özfirat A., Research on the Cultures of East Anatolia in the 2<sup>nd</sup> Millennium B.C., İstanbul, 2001, p. 326-330.

<sup>249</sup> Özfirat A., Առաջն տեղում: Օզգուշ T., Early Anatolian Archaeology in the Light of Recent Research, Anatolia, 1963, № 7, p. 3.

## ՀԱՅԱՍՏԻՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՄԾՎԱԿՈՒՅԹԸԸ

Հայաստ-Ազգի հոգերը մշակոյքի ուսումնախրության համար արժնաբանոր նշուր նմ տակիս հնագիտական պեղումները և խեթական սեպագիր առջրութենքի տվյալները, որոնցում որոշ տեղեկություններ կամ նաև նրան լեզվի և դիցարանի նախին:

Խեթերը պաշտել են ոչ միայն խեթական, այլ նաև իրենց հարևան և Խեթավոր ժողովությունների բազմաթիվ աստվածությունների<sup>290</sup>, որանց շարքում նաև՝ Հայաստայի աստվածներին: Խեթական տերության պետական Վավերագրերը պնտը է զերագոյն աստվածների և աստվածութիւնների հովանավորության տակ լինելն, այդ պատճառով զրագիրները կազմում էին բոլոր տեղական աստվածությունների ցուցակները, որոնց պնտը է նշելին պայմանագրերի ու բազավորական երանանագրերի մեջ: Չատ տեղական աստվածություններ խմբավորվում էին՝ ցատ իրենց միանման գործառությունների, այդ պատճառով հարմարության համար խեթերն այդ աստվածությունների անվանումները համապատասխանեցրել են իրենց լճզվաշխարհին և կյոնական պատկերացումներին՝ դրանք դարձնելով ավելի հոգեհարազատ<sup>291</sup>:

Այսպես, Մապագուրվանուա խեթական բաղարում այլ երկրների աստվածների շարքում հիշատակվել է նաև «Ազգի երկրի Ամայուպի աստվածը»<sup>292</sup>: Հիշատակություն կա նաև՝ «Հայաստայի Ամայուպի աստծո» և նրա արձանիկը սպասարկող բռնմ Վանի մասին<sup>293</sup>: Այլ խեթական տեքստերից հայտնի է նաև, որ գոհեր նմ մատուցել Հայաստա բաղարի U.GUR աստծուն<sup>294</sup>:

Հայաստայի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրության մեջ, որը, բերես, խեթական և հայաստական ար-

<sup>290</sup> Hoas V., Geschichte der hethitischen Religion, Leiden, New York, Köln, 1994, S. 539-615.

<sup>291</sup> Герон О., Хетты, Москва, 1987, с. 119.

<sup>292</sup> Bo 434 IV 18 (Forrer E., Hajaşa-Azzi, Сочиненія, 1931, № 9, S. 22).

<sup>293</sup> KUB XII 2 24 (Forrer E., Աշխ. աշխ., Եք 23. Թույան Ա., Անդ-Համամից խեթական լուրուցքանում, Եք 239).

<sup>294</sup> KBo IV 13. KUB X 82 (Forrer E., Աշխ. աշխ., Եք 22).

բաների համաձայնագրի մի հատված է: Այն առաջին անգամ հրատարակվել է է. Ֆոների կողմից: Այդ արձանագրության մեջ հիշատակվել են տասնչորս հայաստական քաղաքաբների աստվածներ, որոնցից երկուսը՝ գաղափարազրով ներկայացված Ամարուպի աստված՝ <sup>1</sup>Ս-6 և <sup>2</sup>Սոնգածած աստվածությունը, կրկնվում են <sup>295</sup>: Հայաստ քաղաքի U.GUR աստվածը և Պատեր... քաղաքի ISTAR (INANNA) աստվածուհին ցուցակի հայաստական հաստվածում տրվել են առաջինը: Այսուհետև մեկ տող դատարկ է, իսկ աստվածների բարեկումը շարունակվել է մյուս տողից, ինչն առիթ է տվել է. Ֆոներին իրավացիորեն կարծելու, որ այդ երկուսն են հանդիսացել Հայաստայի զինափոյ աստվածները <sup>296</sup>:

U.GUR-ը դեռևս հինքարելումական դարաշրջանից (Բ.ա. II հազարամյակի սկզբից) նույնացվել է Ներգալի հետ և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Ներգալը հնագույն հյուսիս-միջազնության աստված էր՝ կապված մահվան և պատերազմի հետ, անդրաշխարհի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև հարեւան երկրներում:

Ն. Մարտիրոսյանը Հայաստ (բառ հեղինակի Խայաշա) անվան հիմքն ընդունել է Ահա (Խայա)-ն, որը գաղափարազրով երտրվել՝ U-GUR, և ըստ նրա կարող էր հանդիսանալ հայերի անվամադիր աստծո անունը և համապատասխանել է քարելոնական Ենլիլին <sup>297</sup>:

Գ. Դափանցյանի կարծիքով հայաստական պանթեոնը զինափորել է Ար կամ Արա Գեղեցիկ աստվածությունը (հիմնավորելով իր միտքն այն հանգամանքով, որ մեռնու և հարուրյուն առնող աստվածները հաճախ դառնում են նաև անդրաշխարհի տերեր), մյուս կողմից նա հնարափոք է համարում <sup>3</sup>U.GUR-ի հմաշունական Ենլիլին <sup>298</sup>: <sup>4</sup>U.GUR-ի պաշտամունքն, ըստ կան ընթերցումը (Ուգուր) <sup>299</sup>:

<sup>295</sup> KUB XXVI 39.

<sup>296</sup> Նոյն տեղում, էջ 7:

<sup>297</sup> Սայսփրության Ն., «Պրապուլանք փորբաժնական անանելու մասին», ՊԲՀ,

1961, թիվ 3-4, էջ 100:

<sup>298</sup> ԱԼԲ, 1, է, 89.

նրա, հայասացիները վերցրել են Հյուսիսային Միջազգային խուսափելու խուսափելից<sup>299</sup>: Խշտար կամ Խնաննա աստվածութու զաղափարագիրը Գ. Նափանցյանը համեմատել է Անահիտ դիցանվան հետ, որի հայասական անունը եղել է կամ Նանե, կամ Խնեպատ, կամ Նվարդ: Հայունի է նաև, որ և Անահիտ, և Նանե դիցուիխների պաշտամունքի կենտրոն է հանդիսացել Բարձր Հայրի տարածքը: Այս դիցուիխները (Խնեպատ, Նանե) որպես սիրո, պտղաբերության, բերրատվության աստվածուիխներ, աստվածների մեծ մայրեր, իրենց որոշ հատկանիշներով նաման են Խնաննային (Խշտար), իսկ Նվարդը հայունի է՝ որպես Արա Գեղեցիկի կին (Արա Գեղեցիկը՝ որպես <sup>5</sup>U.GUR աստվածը):

Գ. Նափանցյանն առաջարկում է նաև Զազգա... դիցանվան վերջուն լրացնել -ցա-ա և կարդալ Zaggagac հաչվի առնելով խերական Զազգազա աստվածությունը: Հնտարրիր է նաև Terittitün հայասական դիցանվան բացառությունը, որն, ըստ նրա, նշանակում է «երերուսանի, նուզի, երեքպաշանի»: Իսկ Baltaik հայասական դիցանունը նա դիտում է՝ որպես սեմական ծագում ունեցող բառ, որը նշանակում է «կյանքի աստված» (արար, հայ սկյանք», «ասոող լինել» բառերից)<sup>300</sup>:

Գ. Զահուկյանը հայասական Ռւզուրը համեմատել է հայերն ոգոր-իմ՝ պայքարել բառի հետ: Իսկ հայասական <sup>5</sup>U (Անպյուսի) աստծուն նա համեմատել է հետազայի հայկական հերանոսական դիցարամի Վահագն աստծո հետ<sup>301</sup>: Ըստ նրա՝ հայասական դիցանուններից երկուսը՝ (Կար)կիսած-ը (եթե հավաստի է Կար-քաղաքիչի վերականգնումը) և Տարուս-ը, փոխառյալ աստվածություններ են: Սրանցից առաջինը գուգահեններ ունի լուվական Կարիսած-ի հետ, որը Կարօքամիսի գլխավոր աստվածություններից երրորդն էր: -իսկամ բաղադրիչը նույնական է

<sup>299</sup> Նոյն տեղում, էջ 306:

<sup>300</sup> Նոյն տեղում, էջ 90-94, 306:

<sup>301</sup> Ջեյկուն Դ.: Հայուսական լեզու և այլ աստվածություններ և այլ աստվածությունների մասին. Երևան, 1964, էջ 57.

հիմիական բառի հետ<sup>302</sup>: Ըստ Գ. Զահորյանի՝ հայասական դիցարանում եղել եմ ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ աստվածություններ: Բնիկ աստվածություններն են Silili..., Terittituni, Baltaik, Unagaštak, Zekk(ան...): Ըստ նրա՝ Տարուս-ը և, եթե ճիշտ են վերականգնումները, [Izzist] առաջնական ու [Kar] հայս-ը փոխառյալ աստվածություններ են, այսինքն հայասացիները պաշտում էին նաև փոքրասիական աստվածություններ: Տարուս-ի Տար քաղաքիւը նա նույնական է համարում խարական Տար-ի՝ «ժամանակի պատճու» հետ: Իսկ Terittituni դիցանունն, ըստ նրա, քաղկացած է տ(է)ւ-«երեց» և (t)itupi-«պոշ, վերջավորություն» կամ «օր, լույս, փայլ», -երի-(երի-ց-ս) «երեք» և տուուն (տուտն) կամ տի «մեծ» բառերից<sup>303</sup>.

Գ. Զահորյանը ներառյալ է մի շարք հայասական դիցանունների հայկական ծագում: «Իրանը են Silili-ն հայերեն տե՛լ «սիլիկամ» բառից, Terittituni-ն՝ հայերեն եւ-«երեց» և տառ, ուսում «վերջավորություն» բառերից: Այսպիսով, նա ներառյալ է այս դիցանունների տեսլական, հայկական ծագումը: Իսկ Unagaštak դիցանվան մեջ նա սկզբու ներառյալ է հնդկուսնական «օոց» «օծել» բառարմատը և այն բարգձանել է՝ որպես «օծյալ», այնուհետև նոյն բառի մեջ ներառյալ է հայերեն տէ՛ (թիր, թեղեր) և (b)ast-(հաստ) բառարմատները: Ըստ Գ. Զահորյանի՝ Baltaik դիցանվան արմատն է համբխանում հնդկուսնական «եկե-տօ-«փայլուն» արմատը<sup>304</sup>: Baltaik և Unagaštak դիցանունների -իկ և -աշտաց ածանցներն, ըստ նրա, բնիկ հայկական են, և դրանք կարելի է համեմատել հայերեն -իկ և -աստ վերջածանցների հետ<sup>305</sup>:

<sup>302</sup> Զահորյան Գ., Հայոց լեզվի պատմության. Խախտային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327:

<sup>303</sup> Զահորյան Գ., Հայուսայի լեզվի հիմանառողիւրան ծագման փարկութը, դրւ, 1976, թիվ 1, էջ 95, 108: Նոյնիւ Լեզվական նոր տվյալներ հայոց նախարրիսանութեական լեզվի և համբխանության մասին, դրւ, 1992, թիվ 1, էջ 22:

<sup>304</sup> Ճայուղին Գ., Աշգ. աշխ., էջ 48, 53-54: Նոյնիւ. Օ օսունակուն հայուսուսնական պրակտիկայութեական առաջարկներ, ԻՊՀՀ, 1988, № 1, էջ 67.

<sup>305</sup> Զահորյան Գ., Լեզվական նոր տվյալներ հայոց նախարրիսանութեական կրոնի և հապատակիրենի մասին, էջ 22:

Գ. Զահոռկյանը, գրելով խերալուվական լեզվական միջավայրի հետ հայասերենի ունեցած փոխառնչությունների մասին, հնարավոր է համարնել, որ Հայաստան ոչ միայն աստվածություններ փոխառած լինի, այլև հենց ինքը լինի հարևան ժողովուրդների մեջ պաշտոնող մի շարք աստվածությունների աղբյուրը: Այդպիսից են Տանտ (բնիկ հնդիկոպական «շանք» բառից) և Լոշի փորբաժիկան («լուսոյ» բնիկ հնդիկոպական բառից) աստվածությունները: Նա բննում է նաև որոշ շատուգարանված փորբաժիկան դիցանուններ, որոնց եայլական-հայաստական ծագումը նա չի բացառում՝ Առձալիս (հողի աստված) և հայ. անդ (բոշում), Խոչչիս (հնդիկոպական \*khu-sko-), Կալահարե՛ հայ. բաղահար, Տունու՛ հայ. շողոտ, Զոկք և հայ. ծուկն բառերի կամք<sup>386</sup>.

Լեզվագիտական համեմատության եիմքի վրա Գ. Վարդումյանը տվել է հայաստական դիցանունների նշանակությունները՝ Տերիստիտունիսց՝ «նոռոտանի, նոազի կամ նոամնեծ», Ունազատասը՝ «օծյալ», Թալտահիկը՝ «փայրում» կամ «խնձրացի», Սիլլիին՝ «քարենիաճ, գրառատ, սիրելի», Թարումու՝ «թարույի ուժ, հավերժ», Ուտակսանաս՝ արարիչ, ստեղծող կամ հավասարության և միջօրեի աստված, Զակլանը՝ «առուր» կամ «ձուկն», Սամնուս՝ «առողջ» և այլն<sup>387</sup>: Չատ մրա՛ գնրազոյն զույգի ուզոր աստվածը ստորգեստնյա աշխարհի տիրակալն էր, նաև ողջ Երկրի որոտկայծակի, ուզմի աստվածն էր («ոգորեք» կովկա մարտնչել): Իսկ իգական կեսն Իշրար (Խնաննա) գաղափարագրով վկայված սիրո, գեղեցկության, պատղարենության աստվածութիւն էր, որի հայաստական (հայկական) անունն Անահիտ էր<sup>388</sup>:

Հայաստական դիցարանին անդրադարձ է նաև Ս. Պետրոս-

<sup>386</sup> Զահոռկյան Գ., Աշք. աշխ., էջ 22-23:

<sup>387</sup> Վարդումյան Գ., Հօքրիստոնություն կոչելու պրման, ՀԱՐ, 1991, թիվ 18, էջ 67-68:

<sup>388</sup> Վարդումյան Գ., Հայկական լեզվաշխարհը Խայոց հագասարի բնորոշ, Հայկական լեզնաշխարհը Խայոց և Խաթաշխարհային քաղաքականության բնորոշ, Հայապետական պիտամունք, Երևան, 2004, էջ 148:

